

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳՐԻ
40-ԲԴ ՀՈԴՎԱԾԻ ՀԱՄԱԶԱՅՆ ՄԱԿ-Ի ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

Առանձին հոդվածներին
վերաբերող տեղեկություններ

Հոդված 1 /1 կես

1. 1990 թ. օգոստոսի 23-ին ՀԽՍՀ-ի Գերագույն Խորհուրդը, արտահայտելով հայ ժողովրդի միասնական կամքը՝ ընդունեց «Հայաստանի անկախության մասին» հռչակագիրը, որը ոչ միայն պետք է բերեր Հայաստանի ճակատագրի կտրական փոփոխության, այլ նաև հանդիսանար նոր քաղաքական համակարգի սկիզբ:

Նպատակ ունենալով ստեղծել ժողովրդավարական իրավական համակարգ, իրականացնելով ազգերի ինքնորոշման իրավունքը, Հայաստանը սկսեց անկախ պետության ստեղծման գործընթացը: Հայաստանը հռչակվեց անկախ, ինքնիշխան, իրավական պետություն: «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի հիմք հանդիսացան Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը և միջազգային իրավունքի հանրաճանաչ դրույթներ:

Համաձայն հռչակագրի Հայաստանի ողջ տարածքում գործում են Սահմանադրությունը և Հայաստանի Հանրապետության օրենքները:

Նույն թվականի օգոստոսի 24-ին Հայաստանի անկախության մասին հռչակագրի համաձայն ընդունվեց օրենք, որով Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը վերանվանվեց Հայաստանի Հանրապետության /կրճատ - Հայաստան/:

2. 1990 թ. դեկտեմբերի 10-ին ՀՀ ԳԽ ընդունեց ՀՀ Սահմանադրական օրենք «Հայաստանի անկախության մասին հռչակագրին համապատասխան ընդունված օրենսդրական ակտերի մասին», որով ամրագրեց «Մինչև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունումը դադարեցվում է գործող սահմանադրության այն դրույթների գործողությունը, որոնք հակասում են Հայաստանի անկախության մասին» հռչակագրի հիման վրա ՀՀ Գերագույն Խորհրդի կողմից ընդունված օրենքներին»:

1991 թ. սեպտեմբերի 25-ին ՀՀ ԳԽ ընդունեց ՀՀ սահմանադրական օրենքը «Անկախ պետականության հիմնադրույթների մասին: Օրենքի առաջին հոդվածը հստակ սահմանում է «Հայաստանի Հանրապետությունը անկախ ժողովրդավարական պետություն է»: Երկրորդ հոդվածում ամրագրված է, որ «ՀՀ պետական իշխանության կրողը Հայաստանի Հանրապետության ժողովուրդն է, որն իր իշխանությունը իրականացնում է անմիջականորեն՝ հանրաքվեներով և ներկայացչական մարմինների միջոցով»:

Ազգերի ինքնորոշման իրավունքը արտացոլվել է ՀՀ օրենսդրությունում, ինչպես նաև կազմում է Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին

քաղաքականության հիմքը: Եվ առաջին հերթին դրա վառ ապացույցն են նորանկախ հանրապետությունում կատարվող օրենսդրական փոփոխությունները: Ժամանակագրական կարգով ներկայացնում ենք ՀՀ-ում ընդունված այն հիմնական օրենքները, որոնք ուղղված են ապահովելու ժողովրդի ինքնորոշման իրավունքը:

3. 1991 թվ. օգոստոսի 1-ին ՀՀ ԳԽ ընդունեց ՀՀ օրենք «Հայաստանի Հանրապետության Նախագահի մասին»: Օրենքի 1-ին հոդվածում ամրագրված է, որ ՀՀ նախագահը

հանրապետության բարձրագույն պաշտոնատար անձն է և գլխավորում է հանրապետության գործադիր իշխանությունը:

1992 թվ. հունիսի 6-ին ընդունվեց օրենք «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի կնքման, վավերացման և չեղյալ հայտարարման մասին»: Նույն օրը ընդունվեց ՀՀ օրենքը «Արտասահմանում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչությունների կարգավիճակի մասին»:

1994 թվ. ապրիլի 22-ին ընդունվեց ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության պետական պարգևների մասին»: Հայաստանի Հանրապետությանը, հասարակությանը մատուցած ակնառու և բացառիկ ծառայությունները նշելու համար հիմնվում են պետական պարգևներ՝ ՀՀ-յան բարձրագույն կոչում, ՀՀ շքանշաններ և մեդալներ (հ.1):

1994 թվ. հուլիսի 8-ին ընդունվեց ՀՀ օրենքը «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին», որի նպատակն է նպաստել ՀՀ մշակութային ժառանգության պահպանմանը, կանխել մշակութային արժեքների ապօրինի արտահանումը, ներմուծումը և այդ արժեքների նկատմամբ սեփականության իրավունքի ապօրինի փոխանցումը: Օրենքը կոչված է նպաստելու միջազգային մշակութային համագործակցությանը, ՀՀ և այլ պետությունների ժողովուրդների մշակութային հաղորդակցմանը:

1995 թվ. մարտի 27-ին ՀՀ նախագահի կողմից ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքը»: Նշված օրենքի 1-ի հոդվածում ՀՀ նորընտիր Գերագույն խորհուրդը վերանվանվում է ՀՀ Ազգային ժողովի: ՀՀ Սահմանադրությունը ընդունվում է Գերագույն խորհրդի կամ ՀՀ հանրաքվեի միջոցով՝ Գերագույն խորհրդի հավանությամբ (հ.2.): Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը չորս տարի է (հ.3.): Պատգամավոր չեն կարող լինել կառավարության անդամները: Պատգամավոր չեն կարող լինել և պատգամավորական թեկնածու չեն կարող առաջադրվել դատավորները, դատախազության, ազգային անվտանգության պետական վարչության աշխատակիցները, ներքին գործերում և զինված ուժերում ծառայողները (հ.4.): Ըստ 5-րդ հոդվածի Ազգային ժողովը կազմված է **190** պատգամավորից, որից **150**-ը ընտրվում է մեծամասնական ընտրակարգով՝ միամանդատ ընտրատարացքներից, իսկ **40**-ը՝ համամասնական ընտրակարգով՝ հանրապետության ողջ տարածքն ընդգրկող մեկ ընտրատարածքից:

1995 թվ. հուլիսի 5-ին ընդունվեց ՀՀ նոր Սահմանադրությունը, որը հիմք ընդունեց անկախության մասին հռչակագրում հաստատագրված հայոց պետականության հիմնարար սկզբունքները և համազգային նպատակները:

Ինքնորոշման իրավունքը հաստատագրված է հենց առաջին գլխում, որը կոչվում է «Սահմանադրական կարգի հիմունքները»:

Համաձայն **6-րդ** հոդվածի «ՀՀ-ում երաշխավորվում է օրենքի գերակայությունը: Հանրապետության Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն:

Մարդու իրավունքներին, ազատություններին և պարտականություններին վերաբերող չիրատարակված իրավական ակտերն իրավաբանական ուժ չունեն:

ՀՀ անունից կնքված միջազգային պայմանագրերը կիրառվում են միայն վավերացնելուց հետո: Վավերացված միջազգային պայմանագրերը Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե նրանցում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են պայմանագրի նորմերը:

Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը կարող են վավերացվել Սահմանադրության մեջ համապատասխան փոփոխություն կատարելուց հետո»:

1995 թվ. դեկտեմբերի **4-ին** ընդունվեց ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին»:

2-րդ կետ

4. Երկրի տնտեսական համակարգը գտնվում է վերափոխման շրջանում:

1990 թվ. հոկտեմբերի **31-ին** Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհուրդը որոշում ընդունեց «Հայաստանի Հանրապետության սեփականության մասին օրենքը» կիրառելու վերաբերյալ», որում ասվում է որ մինչև ՀՀ-ի օրենսդրության համապատասխանեցումը «ՀՀ սեփականության մասին օրենքին» կիրառվում են ՀՀ օրենսդրության գործող ակտերը, քանի որ նրանք չեն հակասում սույն օրենքին»:

Միևնույն ժամանակ ընդունվեց «ՀՀ-ում սեփականության մասին» օրենքը, որի **2-րդ** հոդվածում ամրագրված է, որ սեփականության իրավունքի իրագործումը չպետք է վնաս հասցնի շրջակա միջավայրին, խախտի քաղաքացիների, տնտեսությունների, ձեռնարկությունների, կազմակերպությունների և պետության իրավունքները և օրինական շահերը:

6-րդ հոդվածը որոշում է սեփականության իրավունքի օբյեկտները: Դրանք են՝ հողը, ընդերքը, ջուրը, օդային տարածքը, կենդանական և բնական աշխարհը, հիմնարկները, ձեռնարկությունները, սարքավորումները, մշակութային և նյութական արժեքները, մտավոր սեփականության արդյունքը, փողը, թանկարժեք թղթերը և այլ գույք:

11-րդ հոդվածը հիմնավորեց քաղաքացուն սեփական իրավունքի հիման վրա հողի տրամադրման հարցը:

40-րդ հոդվածով հողը և այլ բնական ռեսուրսները հռչակվում են հանրապետության ազգային արժեք, ժողովրդի սեփականություն : Բնական ռեսուրսները տրվում են օգտագործման, իսկ հողը նաև սեփականության հիմունքների վրա: Հայաստանի Հանրապետությունը իր տարածքում տիրում, օգտվում և տնօրինում է հողը և այլ բնական ռեսուրսները իր ազգաբնակչության օգտին:

5. Ինչպես արդեն նշվեց, **1991** թվ.սեպտեմբերի **25-ին** ՀՀ ԳԽ ընդունեց օրենք «Անկախ պետականության հիմնադրությունների մասին», որի **8-րդ** հոդվածը սահմանում է, որ. «ՀՀ ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, ջրային և այլ բնական

պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունը՝ նրա ժողովրդի սեփականությունն է»:

Հայաստանի Հանրապետությունը ունի ԽՍՀՄ ազգային հարստություն, այդ թվում՝ ոսկու պաշարների, արմաստի և տարադրամային ֆոնդերի մասնաբաժնի իրավունք, անկախ այն հանգամանքից, թե որ երկրի տարածքում են դրանք գտնվում:

Հոդված 9-րդ-ում ամրագրված է.«ՀՀ-ում օրենքով ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը»: Իսկ համաձայն 14-րդ հոդվածի «Հայաստանի Հանրապետությունը իրականացնում է ինքնուրույն ֆինանսավարկային քաղաքականություն և այդ կապակցությամբ կազմակերպում է անկախ պետական բանկային և վարկային մարմիններ, հիմնում ազգային դրամ»:

ՀՀ սեփականություն են հանդիսանում նրա տարածքի վրա գտնվող նախկին միութենական և միութենական-հանրապետական ենթակայության գերատեսչությունների բոլոր օբյեկտները:

6. 1992 թվ. մարտի 19-ին ընդունվել է «Ընդերքի մասին Հայաստանի Հանրապետության օրենսգիրքը»,որով սահմանվում է ընդերքի երկրաբանական հետախուզման և օգտագործման համար մատչելի մասի տնօրինման, օգտագործման և պահպանության կարգը:

7. Հայաստանի Հանրապետությունը խրախուսում է ազատ ձեռներեցությունը և պայմաններ է ստեղծում նրա զարգացման համար:

1992 թվ. մարտի 14-ին ՀՀ նախագահը ստորագրեց ՀՀ օրենքը «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին», որի նպատակն էր սահմանել ձեռնարկատիրական գործունեության հիմունքները, ձեռներեցների իրավունքները և պարտականությունները, ձեռնարկությունների տեսակները, գործելու հիմքերը:

1992 թվ. օգոստոսի 27-ին ընդունվեց «Պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարական օբյեկտների սեփականաշնորհման մասին» ՀՀ օրենքը, որի նպատակն է պետական ձեռնարկությունների և անավարտ շինարարական օբյեկտների սեփականաշնորհման և ապապետականացման միջոցով Հայաստանի հանրապետությունում արդյունավետ շուկայական տնտեսության ստեղծումը:

Պետական ունեցվածքի սեփականաշնորհումը նպատակաուղղված է քաղաքացիների ազատությունների (այդ թվում նաև տնտեսական ազատության) շուկայական տնտեսության արդյունավետության բարձրացմանը և այլն:

1993 թվ. դեկտեմբերի 27-ին ընդունվեց ՀՀ օրենքը «Անհատ ձեռներեցների մասին», որը սահմանեց անհատ ձեռներեցներ հասկացությունը, նրանց գրանցման կարգը, իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը, գործունեության ընտրության և դադարեցման պայմանները, գործունեության երաշխիքները:

1993թ. հունիսի 29-ին ընդունվեց ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետության պետական և հանրային բնակարանային ֆոնդի սեփականաշնորհման մասին», որով սահմանվեց ՀՀ տարածքում պետական բնակարանային ֆոնդի և հանրային բնակ.ֆոնդի (բնակելի տների և այլ շինությունների բնակելի տարածքների) սեփականաշնորհման հիմնական դրույթները և որը կարգավորում էր սեփականության հարաբերությունների ձևափոխման իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները, ինչպես նաև ապահովում բնակարանային ֆոնդի արդյունավետ օգտագործումն ու պահպանումը:

1993թ. օգոստոսի 27-ին ընդունվեց «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգիրքը»: Օրենսգրքի նպատակն էր ապահովել ՀՀ տնտեսական ինքնիշխանությունը, տնտեսական անվտանգությունը, ներքին շուկայի պաշտպանվածությունը, խթանել հանրապետության արտաքին տնտեսական կապերի զարգացումը, սահմանել մաքսային և այլ պետական մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների և քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները մաքսային գործի բնագավառում:

8. 1994 թվ. հունիսի 13-ին ընդունվեց ՀՀ օրենքը «Անհատական (ընտանեկան) ձեռնարկության մասին», որով սահմանվում է անհատական (ընտանեկան) ձեռնարկության հասկացության, ստեղծման, գործունեության տեսակի ընտրության ու դադարման պայմանները, իրավունքները, պարտականություններն ու պատասխանատվությունը:

Ելնելով ազատ ինքնորոշման իրավունքից, ՀՀ Սահմանադրությունը 8-րդ հոդվածում ամրագրում է տնտեսական քաղաքականության ուղղությունը: «ՀՀ-ում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: Սեփականատերը իր հայեցողությամբ տիրապետում, օգտագործում և տնօրինում է իրեն պատկանող գույքը: Սակայն սեփականության իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը»:

1994 թվ. նոյեմբերի 1-ին ՀՀ Նախագահը ստորագրեց «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգիրքը»-ը, որի նպատակն էր նպաստել անտառների գիտականորեն հիմնավորված պահպանությանը, պաշտպանությանը, վերարտադրությանը և արդյունավետ օգտագործմանը, ելնելով անտառների էկոլոգիական, սոցիալական և տնտեսական նշանակությունից:

Քանի որ բնությունը, շրջակա միջավայրը՝ բոլոր մարդկանց, ամբողջ հասարակականության հարստությունն է և բնական պաշարների ոչ խելամիտ օգտագործումը կարող է հսկայական չարիք պատճառել հասարակությանը, ըստ Սահմանադրության 10-րդ հոդվածի պետությունը ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերարտադրությունը, բնական պաշարների բանական օգտագործումը:

3-րդ կետ

9. Չի կարող խոսք լինել մարդու իրավունքներից և ազատություններից օգտվելու մասին, եթե չի ճանաչվում նրա կոլեկտիվ իրավունքը՝ ժողովրդի ինքնորոշման իրավունքը և ընդհակառակը՝ անհնար է իրականացնել ինքնորոշման իրավունքը, եթե խախտվում են մարդու իրավունքները:

Խոսելով ժողովուրդների ինքնորոշման իրավունքի ապահովման միջոցների մասին՝ անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն միջազգային իրավունքի առանձնահատկությունն ընդհանրապես, այլև ինքնորոշման իրավունքի սուբյեկտը, այդ իրավունքի կրողը ոչ թե պետությունն է, այլ ժողովուրդը կամ ազգը, իսկ նրա ինքնորոշման մասին հարցը սովորաբար ծագում է կապված նրան ստրկացման, կախվածության կամ օտարազգի գերիշխանության ու շահագործման մյուս ձևերի հետ, երբ նրանց իրավասուբյեկտիվությունը չի ճանաչվում նրանց բռնակցած պետությունը:

10. Այդպիսի ստրկատիրական պայմաններում էր գտնվում հայ ժողովուրդը Լեռնային Ղարաբաղում, որի ճակատագիրը որոշվել էր հակասահմանադրական և չլիազորված մարմնի՝ ՌԿ /բ/ Կ Կոմբյուրոյի **1921** թվ. հուլիսի **5**-ի որոշմամբ, ընդունված այնպիսի մի սուբյեկտի կողմից, որը իրավունք չուներ մասնակցելու այլ պետության ազգային և պետական կառույցների որոշման հարցերին և միջամտել էր Խորհրդային ինքնավար հանրապետության ներքին գործերին, որի հետևանքով ոտնահարվեց ազգերի ինքնորոշման սկզբունքը, հաշվի չառնվեց ազգաբնակչության մեծամասնությունը (**95%**) կազմող հայ բնակչության, ինչպես նաև Խորհրդային Հայաստանի ժողովրդի կամքը:

11. Մասնատված ժողովրդի հանդեպ պատմական արդարությունը վերականգնելու նպատակով, **1989** թվ. դեկտեմբերի մեկին ՀԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային Խորհրդի կողմից որոշում ընդունվեց «Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին»: Այս որոշումը հիմնվում էր ազգերի ինքնորոշման համամարդկային սկզբունքների վրա և բռնի կերպով բաժանված հայ ազգի վերամիավորման ձգտման արտահայտումն էր: Իսկ **1990** թվ. փետրվարի **13**-ին ՀԽՍՀ-ի Գերագույն Խորհրդի որոշմամբ **1921** թվ. ՌԿ/բ/Կ Կոմբյուրոյի հուլիսի **5**-ի որոշումը, որի հիման վրա Հայաստանի տարածքի մի մասը միացվել էր Ադրբեջանին և հայ ազգը բաժանվել էր երկու մասի՝ համարվեց չեղյալ, իրավասություններից զուրկ, անօրինական և միջազգային իրավունքին հակասող: Որոշման մեջ նշվեց, որ Լեռնային Ղարաբաղը (Արցախ) Հայաստանի անկապտելի մասն է և երբևիցե չի պատկանել Ադրբեջանին, որ **1918-21** թվ. Լեռնային Ղարաբաղը եղել է անկախ և ունեցել է իր պետականությունը ի դեմս ազգային կառավարության և Հայկական Ազգային Խորհրդի:

Ազգերի ազատ ինքնորոշման սկզբունքները հաստատվել էին ԽՍՀՄ-ի ստեղծման մասին պայմանագրով և ԽՍՀՄ-ի սահմանադրությամբ, որոնք Խորհրդային Միության ազգամիջյան հարաբերությունների հիմքն էին հանդիսանում:

Իսկ ազգը, դա մարդկանց պատմականորեն առաջացած հանրություն է, որ բնորոշվում է լեզվի, տարածքի, տնտեսական կյանքի և մշակույթի մեջ դրսևորվող հոգեկան կերտվածքի ընդհանրությամբ:

12. Այսպիսով, **1989** թվ. ՀՀ Գերագույն Խորհրդի դեկտեմբերի մեկի «Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» որոշմամբ ճանաչվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ինքնորոշման փաստը, հաստատված ԼՂՀ-ի շրջանային խորհրդի նստաշրջանների **1989** թվ. փետրվարի **20**-ի և **1988** թվ. հուլիսի **12**-ի որոշումներով, ինչպես նաև ազգաբնակչության լիազորված ներկայացուցիչների օգոստոսի **16**-ի համագումարի որոշումներով և **1989** թվ. հոկտեմբերի **19**-ի Ազգային Խորհրդի նիստով:

«Վերամիավորման» **2**-րդ կետով ՀԽՍՀ-ի Գերագույն Խորհուրդը ճանաչեց ԼՂ-ի լիազորված ներկայացուցիչների համագումարը և նրա ընտրած Ազգային Խորհուրդը, իբրև մարզում գործող միակ օրինական իշխանություն:

Հայաստանի Խորհրդային Հանրապետության Գերագույն Խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային Խորհուրդի որոշման երրորդ կետով հռչակվեց Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի վերամիավորումը: Այսպիսով, Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության վրա տարածվում էին Հայաստանի Հանրապետության քաղաքացիության օրենքները:

4-րդ կետով Հայաստանի Խորհրդային Հանրապետությունը և ԼՂ-ի Ազգային Խորհուրդը ստեղծեցին համատեղ հանձնաժողով վերամիավորման իրագործման համար գործնական քայլեր իրագործելու համար:

5-րդ կետով ՀԽՍՀ-ի ԳԽ և ԼՂ-ի Ազգային Խորհուրդը պարտավորվեցին ներկայացնել Շահումյանի շրջանի և հյուսիսային Արցախի ենթաշրջանի հայկական ազգաբնակչության շահերը:

Եվ վերջին, 6-րդ կետով, ՀԽՍՀ-ի ԳԽ-ի նախագահությանը և ԼՂ-ի Ազգային Խորհրդի նախագահություններին հանձնարարվեց ձեռնարկել բոլոր վերը նշված որոշումներից բխող քայլերը իրականացնելու համար ՀԽՍՀ-ի և ԼՂ-ի տնտեսական, քաղաքական և մշակութային համակարգերի իրական վերամիավորումը միասնական պետական քաղաքական համակարգի:

Սակայն վերամիավորմանը ուղղված ծրագրերը Խորհրդային և հանրապետական մարմինների կողմից չկատարվեցին, ինչի հետևանք էղան ընդունված ևս մի քանի անարդյունավետ որոշումներ և ԼՂ-ի ազգաբնակչության մինչ օրս պահպանվող ծանր վիճակը:

13. 1989- 1990 թթ. ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների ջանքերով իրադրությունը Լեռնային Ղարաբաղում (Արցախում) հասել էր լարման գագաթնակետին: Կենտրոնը Ադրբեջանի իշխանությունների հետ մեկտեղ հետևողականորեն տեռոր էր իրականացնում Ղարաբաղի հայ բնակչության նկատմամբ, որն անհավասար պայքար էր մղում հանուն ինքնորոշման իր իրավունքի ու այդ պայքարի ընթացքում կրեց բազուն կորուստներ:

Իսկ ինչպես հայտնի է միջազգային իրավունքը, մի կողմից, ուղղակիորեն և միանշանակ արգելում է պետության կողմից ինքնորոշման ձգտող ժողովուրդների դեմ ուզածո ձևի ուժի կիրառում կամ դրա կիրառման սպառնալիքներ, իսկ մյուս կողմից՝ նույնքան որոշակի և կտրականորեն նախատեսվում է իր ինքնորոշման իրավունքը, ներառյալ ազգային ու տարածքային միասնության հասնելը, պաշտպանելու համար ինքնապաշտպանության կարգով անհրաժեշտ միջոցների, ընդհուպ մինչև ուժի դիմադրելու օրինաչափությունը:

14. Ադրբեջանի իշխանությունները զենքի ուժով փորձում էին ծնկի բերել Ղարաբաղի հայ բնակչությանը: Իր դաժանությամբ ու զանգվայնությամբ աննախադեպ մարդու իրավունքների ռոտնահարումը ԼՂ-ում դարձել էր սովորական երևույթ: Ամբոխի ձեռքերով իրականացված մասսայականությամբ հայկական ջարդերը և կոտորածները, մարզի, ողջ Հայաստանի մշտական շրջափակումը, արտակարգ դրությունը, խաղաղ բնակչության դեմ ուղղված պարբերական ռազմական գործողությունները, տեղափոխումները, հալածանքները ազգային շարժման առաջամարտիկների և ժողովրդավարական պատգամավորների նկատմամբ, խստագույն գրաքննությունը, զանգվածային ինֆորմացիայի կեղծարարությունը՝ այս ամենը օղակներ էին միութենական իշխանությունների գործունեության շղթայում, որը կայսրության ռազմական ողջ հզորությունը ուղղել էր իր բախտը տնօրինելու ձգտող մի ժողովրդի դեմ:

15. Հակահայկական ջարդերը Սումգաիթում (**1988 թ.** փետրվար), Կիրովաբադում (**1988 թ.** նոյեմբեր), Բաքվում (**1990 թ.** հունվար) և **1991 թ. 24** հայկական գյուղերի բռնի տեղահանումը (**1991 թ.**), մեկ անգամ ևս ապացուցեցին, որ Ադրբեջանը չի կարող ապահովել Լեռնային Ղարաբաղի ազգաբնակչության անվտանգությունը: Իսկ Ղարաբաղյան խնդրի միակ լուծումն Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման հարգումն է, ինչը մինչ օրս տեղի չի ունեցել :

16. Համաձայն դաշնագրի 1-ին հոդվածի 3-րդ կետի, դիտարկելով ազգերի ինքնորոշման իրավունքը որպես մարդու հիմնական իրավունքների իրականացման կարևոր միջոց Հայաստանը իր արտաքին քաղաքականության կարևոր խնդիրներից է համարում Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորումը:

Հոդված 2

1-ին և 2-րդ կետեր

17. Դաշնագրի տվյալ հոդվածի դիտարկման նպատակն է ցույց տալ, թե որքանով են նրա դրույթները ընդգրկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում: Դաշնագրի 1 կետի համաձայն ՀՀ Սահմանադրությունը պարունակում է առանց խտրականության բոլոր քաղաքացիների հավասարության հետևյալ սկզբունքները. Համաձայն Սահմանադրության 15-րդ հոդվածի « քաղաքացիները անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ունեն Սահմանադրությամբ և օրենքով սահմանված բոլոր իրավունքները, ազատությունները և պարտականությունները »:

Հոդված 16 « Բոլորը հավասար են օրենքի առջև և առանց խտրականության հավասարապես պաշտպանվում են օրենքով »:

Ըստ 38-րդ հոդվածի «յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք:

Հոդված 39 «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունք»:

Հոդված 40 «Յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում անվճար: Յուրաքանչյուր ոք ունի ձեռքակալման, կալանավորման կամ մեղադրանքի առաջադրման պահից պաշտպան ունենալու իրավունք: Յուրաքանչյուր դատապարտյալ ունի օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից վերանայման իրավունք: Յուրաքանչյուր դատապարտյալ ունի ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք»:

Հոդված 41 Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի»:

Հոդված 42 «Մարդը պարտավոր չէ ցուցվունք տալ իր, ամուսնու և մերձավոր ազգականների դեմ: Օրենքը կարող է նախատեսել ցուցմունք տալու պարտականությունից ազատելու այլ դեպքեր: Արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը»:

Հոդված 44 «Սահմանադրության 23-27 հոդվածներում ամրագրված մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար»:

Հոդված 48-րդ «Յուրաքանչյուր ոք պարտավոր է պահպանել Սահմանադրությունը և օրենքները, հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը»:

Արգելվում է նշանակել ավելի ծանր պատիժ, քան կարող է կիրառվել հանցագործության պահին գործող օրենքով: Պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքը հետադարձ ուժ չունի»:

18. 1991թ. դեկտեմբերի 9-ին ՀՀ Նախագահը ստորագրեց ՀՀ օրենքը «Զինապարտության մասին», որով հանրապետությունում սահմանվեց զինապարտություն՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայելու համար հանրապետության անկախությունը, տարածքային ամբողջականությունը, բնակչության անվտանգությունն ու խաղաղ կյանքն ապահովելու նպատակով: Օրենքի 1 հոդվածի համաձայն ՀՀ տարածքում զինվորական ծառայությունը ՀՀ քաղաքացիների պարտականությունն է: Զորակոչային տարիքն է 18-ից մինչև 27 տարին լրանալը: ՀՀ-ում զինվորական ծառայությունը կազմված է ժամկետային, պայմանագրային և պահեստային զինվորական ծառայություններից: Ժամկետային զինվորական ծառայության ժամկետը սահմանվում է 24 ամիս, բարձրագույն կրթություն ունեցող անձանց համար 18 ամիս (հ.13):

ՀՀ Սահմանադրության 12-րդ հոդվածը նշում է, որ «ՀՀ զինված ուժերում ծառայելը քաղաքացիների պարտքն է»:

19. 1991թ. դեկտեմբերի 27-ին ՀՀ Նախագահը ստորագրեց ՀՀ օրենքը «Բնակչության զբաղվածության մասին», որով կարգավորվեց ՀՀ բնակչության զբաղվածության ապահովման իրավական, տնտեսական և կազմակերպական դրույթները, սահմանվեց քաղաքացիների աշխատանքի իրավունքի իրականացման, ինչպես նաև գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության բնագավառներում պետության կողմից տրվող երաշխիքները:

ԻԿ գլուխը ամբողջությամբ նվիրված է սոցիալական երաշխիքներին զբաղվածության հարցերին, այն կոչվում է «Իրավունքներ և երաշխիքներ զբաղվածության բնագավառում»:

Ըստ վերը նշված օրենքի 16-րդ հոդվածի «այլ պետությունները, ձեռնարկությունները, կազմակերպությունները, քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք կարող են ՀՀ-ում տնտեսական ընկերակցության անդամ լինել այն դեպքում, եթե գրանցված են որևէ օտարերկրյա տնտեսական ռեզիստրում»:

20. 1992թ. մարտի 20-ին ընդունեց օրենք «ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային ապահովության մասին»: Այս օրենքը սահմանեց ՀՀ քաղաքացիների պետական կենսաթոշակային իրավական, տնտեսական և կազմակերպական դրույթները, մինևույն ժամանակ երաշխավորելով կենսաթոշակառուների նյութական ապահովության և սոցիալական պաշտպանվածության իրավունքը, սահմանելով աշխատանքային և սոցիալական կենսաթոշակներ:

Այդ օրենքով ՀՀ բոլոր քաղաքացիները սահմանված կարգով ունեն պետական կենսաթոշակային ապահովության իրավունք (h.1.): Օրենքը տարածվում է նաև ՀՀ բնակվող օտարերկյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց վրա, բացառությամբ ՀՀ օրենսդրության և միջազգային համաձայնագրերով սահմանված դեպքերի (h.2):

21. 1991 թվ. սեպտեմբերի 25-ին ՀՀ ԳԽ-ը ընդունեց ՀՀ օրենքը «Անկախ պետականության հիմնադրույթների մասին», որի 15-րդ հոդվածում, մասնավորապես, նշվում է, որ «ՀՀ-ը ապահովում է հայերենի, որպես պետական լեզվի, գործառնությունը հանրապետության բոլոր ոլորտներում, ստեղծում կրթության, գիտության, մշակույթի և լրատվության ինքնուրույն համակարգ»:

1993թ. ապրիլի 17-ին ընդունվեց ՀՀ օրենք «Լեզվի մասին», որով սահմանվեցին ՀՀ-յան լեզվական քաղաքականության հիմնական դրույթները, կարգավորվում են լեզվավիճակը, պետական իշխանության և կառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների ու կազմակերպությունների լեզվահարաբերությունները:

22. 1993թ. մայիսի 24-ին ընդունվեց ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին, որը սահմանում է ՀՀ-ում հաշմանդամների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական ու կազմակերպական հիմունքները, հաշմանդամներին հանրապետության մյուս քաղաքացիների հետ համահավասար հնարավորություններ ապահովելու նպատակով նրանց իրավունքների ու ընդունակությունների իրականացման համար առավել բարենպաստ պայմանների և արտոնությունների տրամադրման պետական քաղաքականության հիմնադրույթները: Նշված օրենքի II գլուխը նվիրված է հաշմանդամության կանխարգելմանը և բժշկական վերականգմանը, III գլուխը՝ հաշմանդամների դաստիարակությանը, կրթությանն ու մասնագիտական ուսուցմանը, IV՝ հաշմանդամների աշխատանքային իրավունքների երաշխիքներին, V-ը՝ հաշմանդամների համար սոցիալական ենթակառուցվածքի մատչելիության ապահովման պայմանների ստեղծմանը, VI-ը հաշմանդամներին ցույց տրվող սոցիալական օգնությանը, VII-ը հաշմանդամների հասարակական կազմակերպություններին»:

23. 1994թ. հունիսի 14-ին ընդունվեց ՀՀ օրենքը «Բռնադատվածների մասին»: Նշված օրենքը սահմանում է «բռնադատված» բառի հասկացությունը, երբ և որ հոդվածներով են դատապարտվել, բռնադատվածին կամ նրա ընտանիքի անդամներին, ժառանգներին տրվող արտոնությունները, փոխհատուցումները:

3-րդ կետ

24. 1994թ. հունիսի 17-ին ընդունվեց ՀՀ օրենքը «Հայաստանի Հանրապետությունում օտարերկյա քաղաքացիների իրավական վիճակի մասին», որի խնդիրներն են, հիմնվելով միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների և նորմերի վրա(h.1.), սահմանել օտարերկյա քաղաքացու ՀՀ մուտք գործելու, բնակվելու, տեղաշարժվելու, տարանցիկ ուղևորություններ կատարելու, ելքի, կացության կարգավիճակ ստանալու կարգը, ինչպես նաև նրա իրավունքները և

պարտականությունները ՀՀ-ում: Օտարերկյա քաղաքացին ՀՀ-ում օգտվում է միջազգային իրավունքի նորմերով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավունքից ու ազատություններից:

Օտարերկյա քաղաքացին ՀՀ-ում պարտավոր է պահպանել ՀՀ օրենքները, հարգել նրա ժողովրդի ազգային սովորությունները և ավանդույթները (հ.2.): Եթե ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նշված օրենքում, ապա գործում են միջազգային պայմանագրի նորմերը (հ.3): Այս օրենքի դրույթները տարածվում են նաև ՀՀ-ում գտնվող քաղաքացիություն չունեցող անձանց վրա, եթե ՀՀ օրենսդրությամբ այլ բան չի նախատեսված (հ.4):

25. ՀՀ-ում կացության կարգավիճակ ունեցող օտարերկյա քաղաքացին Հայաստանի Հանրապետության քաղաքացուն հավասար իրավունք ունի ժառանգելու, կտակելու կամ նվիրաբերելու իր սեփականությունը, օգտվելու ապահովագրական, թաղման և այլ ծառայություններից, անդամակցելու բարեգործական, մշակութային, արհմիութենական, մարզական և այլ հասարակական կազմակերպություններին՝ առանց դրանց ղեկավար մարմիններում պաշտոն զբաղեցնելու իրավունքի, եթե դա չի հակասում այդ կազմակերպությունների կանոնադրություններին: Կացության կարգավիճակ ունեցող օտարերկյա քաղաքացին կարող է անդամակցել ՀՀ-ում գործող միջազգային կազմակերպություններին: Կացության կարգավիճակը օտարերկյա քաղաքացուն տալիս է ՀՀ մուտք գործելու և ՀՀ-ից ելքի իրավունք:

26. Կացության ժամանակավոր, սովորական և հատուկ կարգավիճակ ունեցող օտարերկյա քաղաքացին իրավունք ունի ՀՀ հրավիրել իր մերձավոր ազգականներին: Բացառիկ կարգավիճակ ունեցող օտարերկյա քաղաքացու՝ այլ անձանց ՀՀ հրավիրելու իրավունքը կարգավորվում է միջազգային պայմանագրերով (հ.26): ՀՀ-ում օտարերկյա քաղաքացին օրենքի առջև կրում է ՀՀ քաղաքացուն հավասար պատասխանատվություն, բացառությամբ ՀՀ միջազգային պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի: ՀՀ-ում կացության սահմանված կարգը խախտելու, առանց կացության կարգավիճակը հաստատող փաստաթղթերի կամ անվավեր փաստաթղթերով բնակվելու, հաշվառման սահմանված կարգը խախտելու, կացության կամ մուտքի արտոնագրի ժամկետի ավարտից հետո ՀՀ-ից չհեռանալու, մաքսային կանոններին չենթարկվելու դեպքում օտարերկյա քաղաքացին ենթարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության (հ.31):

Հոդված 3

27. ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունված օրենսդրական ակտերում բացակայում է «Խտրականություն ընդդեմ կանանց» դարձվածքի ճշգրիտ սահմանումը, այնուամենայնիվ կանանց և տղամարդկանց իրավահավասարությունը երաշխավորված է մի շարք պայմաններով:

Հայաստանի Հանրապետությունը միացել է կանանց առաջընթացը և իրավունքները ապահովող հետևյալ կոնվենցիաներին.

-1950 թվականի կոնվենցիան «Կանանց և տղամարդկանց աշխատանքի հավասար վճարման մասին»,

-1958 թվականի Խտրականության կոնվենցիան (Ծառայության և Զբաղվածության),

- 1957 թվականի կոնվենցիան «Ամուսնացած կանանց քաղաքացիության մասին»

Ներկայումս Ազգային ժողովը քննարկում է ևս երկու կոնվենցիաների վավերացման հարցը՝ **1962** թվականի «Ամուսնության թույլտվության, նվազագույն տարիքի և ամուսնության գրանցման մասին», և **1952** թվականի կոնվենցիան «Կանանց քաղաքական իրավունքների մասին»:

Մարդու իրավունքների հավասարությունը կանանց և տղամարդկանց միջև ուղղակիորեն արտահայտված է Սահմանադրության **3-րդ, 4-րդ, 15-րդ և 16-րդ** հոդվածներում և անուղղակիորեն ներկա է մի շարք այլ հոդվածներում:

28. Հայաստանի «Քրեական օրենսգիրքը» նախատեսում է պատիժ հետևյալ, որպես խտրականություն դիտարկող, դեպքերի համար.

- բռնի ուժով սեռական հարաբերություններ պարտադրելը,

- արգելել կնոջը ամուսնանալ,

- ստիպել կնոջը ընդհատել հղիությունը,

- կնոջը գրկել աշխատանքից հղիության պատճառով (հոդված **139**):

29. Հայաստանում կանանց իրավունքները պաշտպանող հատուկ հաստատություն չկա, այնուամենայնիվ մի շարք պետական և ոչ պետական հաստատություններ զբաղվում են կանանց իրավունքներով և խնդիրներով:

Հայաստանում բացակայում են կանանց հանդեպ որևէ խտրականություն պարունակող օրենքներ, կանոններ, քաղաքականություն կամ գործելակերպ:

Սակայն իրականությունն այն է, որ կանայք բավարար չափով չեն ներգրավված հասարակական կյանքին, թեև նրանցից մեծ մասը ունի բարձրագույն կրթություն և, ընդհանրապես, վերջին տարիներին իգական սեռի ուսանողների թիվը միշտ գերազանցել է արական սեռի ուսանողների թվի նկատմամբ: Պատճառն այն է, որ դեպի շուկայական տնտեսություն անցման հետևանքով ստեղծվել է աշխատատեղերի խիստ պակաս, որն առաջին հերթին անդրադառնում է կանանց վրա: Ներկայումս կին գործազուրկների թիվը գերազանցում է տղամարդ գործազուրկների թվին (**67%**):

30. Երկրի մշակութային կյանքին մասնակցելու համար կանայք ունեն նույն հնարավորությունները ինչ տղամարդիկ: Հայաստանում մշակույթը ավանդաբար մեծ դեր է կատարել հասարակության մեջ և կանայք այդ ասպարեզում գրավում են ամենաբարձր դիրքերը: **1994**-ին Հայաստանի Մշակույթի նախարարության ներքո գործող հաստատություններում **29.482** հազար աշխակիցներից **19.994**-ը (**67.8%**) -ը կանայք էին:

31. Ներկայումս Կառավարությունը իրականացնում է մի շարք միջոցառումներ կանանց և տղամարդկանց իրական հավասարության համար պայմաններ ստեղծելու նպատակով: Առաջադիմության և զարգացման բոլոր մեխանիզմները հավասարապես մատչելի են կանանց և տղամարդկանց համար, առանց որևէ խտրականության և նախապատվության: Տարբեր նախարարություններում և գործակալություններում ստեղծված են բնակչության, գլխավորապես կանանց և երեխաների, սոցիալական խնդիրներով զբաղվող վարչություններ: Ազգային Ժողովում գործում է Առողջապահության և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողով, իսկ Կառավարությունում ստեղծվել է Սոցիալական քաղաքականության վարչություն՝ երկուսի ղեկավարներն էլ կին են:

32. Բացի այդ օրենքներում տեղ են գտել փոփոխություններ՝ **1992**-ին Պառլամենտը վավերացրեց մի լրացում Հայաստանի հանրապետության Ամուսնության և Ընտանիքի մասին օրենքին, որով կանանց համար ամուսնության թույլատրելի տարիքը **18**-ից փոխարինվեց **17**-ով:

33. Հայաստանի Հանրապետությունում կանայք ազատ են ընտրելու որևէ մասնագիտություն: Այնուամենայնիվ, կանանց առողջության և մայրության պաշտպանության նպատակով, նրանց արգելվում է կատարել ծանր ձեռքի աշխատանք և աշխատել գիշերային ժամերին: Ավելին, նման աշխատանքների համար արգելվում է ծառայության ընդունել հղի կամ կերակրող կանանց (Աշխատանքային օրենսգիրք, հհ **184, 185, 186, 187**):

Մայրերի դերը ընտանիքում միշտ ընդգծվել է և մայրության կապակցությամբ տրվող արձակուրդը ամրագրված է օրենքով:

Հայաստանի Հանրապետության «Ամուսնության և ընտանիքի մասին» օրենքի 5-րդ հոդվածում հայտարարվում է.

«...ընտանիքը գտնվում է Պետության պաշտպանության ներքո»:

Պետությունը պաշտպանում է ընտանիքը հիմնելով մանկամտրներ և մանկապարտեզներ, գիշերօթիկ դպրոցներ և այլ մանկական հաստատություններ, ստեղծելով մատակարարման և սպառողական ծառայություններ, ցուցաբերելով ֆինանսական օգնություն նպաստի ձևով բազմազավակ և միայնակ մայրերին, ինչպես նաև ապահովելով նրանց այլ տեսակի օգնությամբ և արտոնություններով:

Մայրությունը Հայաստանում պետական հոգածության առարկա է: Նախատեսված են հատուկ պայմաններ, որպեսզի հնարավորություն տրվի կանանց համատեղել աշխատանքը և մայրությունը, նկատի առնելով կանանց և երեխաների առողջությունը: Հայաստանի Հանրապետությունը ապահովում է աշխատող մայրերի իրավունքների պաշտպանությունը, նյութական և բարոյական օժանդակություն է ցուցաբերում կանանց և երեխաներին, մասնավորապես վճարելով նախաձննդյան և հետձննդյան արձակուրդների համար:

33. Հայաստանի Հանրապետության Մահմանադրությունը ապահովում է կանանց քաղաքական, սոցիալական և մշակութային իրավունքները: Հայաստանում գործում են շուրջ **30** հասարակական-քաղաքական կազմակերպություններ: Այդ կազմակերպություններից մի քանիսը ստեղծվել են կանանց մասնագիտական հիմքի վրա, օրինակ՝ կին գիտնականների միություն, կին ժուռնալիստների միություն, կին դերասանների միություն և այլն: Մի շարք այլ կազմակերպություններ ներգրավված են սոցիալական և քաղաքական գործունեության մեջ՝ շրջակա միջավայրի պահպանություն, մայրության և մանկության պաշտպանություն, գենդերային հավասարություն և այլն: Կան նաև կանանց միջազգային կազմակերպություններ, որոնց անդամակցում են Հայ Սփյուռքի ներկայացուցիչներ: Կանանց կազմակերպությունների դերը հասարակության մեջ բարձրացնելու համար Հայ Կանանց հանրապետական Խորհուրդը կազմակերպել է ղեկավար-կանանց դպրոց: Դպրոցի նպատակն է երիտասարդ կանանց և աղջիկներին պատրաստել ապագայում հասարակության մեջ բարձր և պատասխանատու դիրքեր զբաղեցնելու:

Կանանց կազմակերպություններից ամենաազդեցիկը այժմ «Շամիրամ» հասարակական-քաղաքական կազմակերպությունն է, որը Ազգային Ժողովի վերջին ընտրություններում շահեց պատվավոր երկրորդ տեղը պառլամենտում ստանալով **8** տեղ: Ներկայումս ԱԺ-ում կա **12** կին պատգամավոր, ու թեև դա զգալիորեն պակաս է խորհրդային շրջանի կին պատգամավորների թվի նկատմամբ, սակայն ներկայիս կին պատգամավորները լիարժեք մասնակիցներն են օրենսդրական գործունեության:

35. Հայաստանի Հանրապետությունում կանայք ունեն տղամարդկանց հետ հավասար կրթության իրավունք և նրանց **98%**-ը գրագետ է: Բոլոր դպրոցները երկսեռ են, բացի վերջերս հիմնված մի քոլեջի, որը բացառապես աղջիկների համար է:

36. Կանայք ունեն ընտրելու և ընտրվելու տղամարդկանց հետ հավասար իրավունք բոլոր հասարակական պաշտոններում: Այս իրավունքը երաշխավորված է Սահմանադրության **27-րդ** և **64-րդ** հոդվածներով:

Սահմանադրության **3-րդ** հոդվածում նշված է «Հայաստանի հանրապետության Նախագահի, Ազգային Ժողովի և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեները անց են կացվում հավասար, ուղղակի և գաղտնի քվեարկության հիման վրա»:

Քրեական օրենսգրքի **133**րդ հոդվածում նշվում է «Քաղաքացիների ընտրական իրավունքի նկատմամբ բռնությունը ֆիզիկական բռնության, սպառնալիքի, խաբեության կամ կաշառքի միջոցով դատապարտվում է **1-ից- 2** տարվա ազատազրկումով կամ երկու տարվա ուղղիչ աշխատանքներով:

Կառավարությունում, Ազգային ժողովում և այլ կառավարական հիմնարկներում աշխատող կանանց թիվը բավականին մեծ է, սակայն բարձր պաշտոններում զբաղված կանանց թիվը շատ փոքր է տղամարդկանց թվի համեմատ:

Հայաստանի Ազգային ժողով

Խորհրդարանի անդամներ	1980	1985	1994	1995/6
կին	121	121	9	12
տղամարդ	219	219	240	190

1991-1994թթ ընթացքում **22** նախարարություններից միայն մեկում էր աշխատում կին նախարար, **3** նախարարություններում աշխատում էին կին փոխնախարարներ, իսկ **21** Պետվարչություններից միայն **4-ի** ղեկավարներն էին կին, և **31** Պետգործակալություններից **2-ը** ունեն ղեկավարի կին տեղակալներ: Այնուամենայնիվ, կառավարության միջին օղակներում կանանց թիվը բավականին բարձր է: Սա ավելի հատկանշական է մշակույթի, գիտության և կրթության բնագավառների համար, որտեղ կանայք կազմում են բոլոր ծառայողների **31%-ը**: Ներկայումս **23** նախարարություններից մեկը՝ սոցիալական ապահովության նախարարությունը գլխավորում է կին-նախարար:

Կանանց թիվը ամենաբարձր պատասխանատու օղակներում չի գերազանցում **5.2%-ը**: Չնայած այժմ հնարավոր չէ վերականգնել **1980-1985**թթ իրադրությունը, սակայն կոպիտ հաշվարկները ցույց են տալիս, որ կանանց թիվը Կառավարության միջին օղակներում չէր գերազանցում **10%-ը**: Կառավարության միջին և ցածր օղակներում զբաղված կանանց թիվը միջինում կազմում է **38%**:

Տեղական իրավական մարմինները Հայաստանում ներառնում են **22** քաղաքային խորհուրդներ, և **37** տարածաշրջանային խորհուրդներ նեռարյալ Երևանի և Գյումրիի **2** տարածաշրջանային խորհուրդները: Կանայք Երևան քաղաքի ղեկավարման մարմիններում կազմում են **41%**, քաղաքային, շրջանային, ավանային և գյուղական խորհուրդներում՝ **42%**, դատական և իրավաբանական մարմիններում՝ **47%**:

Իշխանության բարձր օղակներում կանանց ոչ մեծ քանակը չի կարելի դիտարկել որպես հատուկ սահմանափակումներ կամ որոշակի քվեների առկայության արդյունք: Այս անհավասարակշռությունը վերացնելու համար որևէ պետական ծրագիր գոյություն չունի, թեև Հայաստանի հանրապետության Նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը իր վերընտրական ծրագրում նախատեսել է կանանց ավելի շատ ներգրավել իշխանության պատասխանատու օղակներում:

38. Քաղաքացիության հետ կապված հարցերը շարադրված են Հայաստանի Քաղաքացիության մասին օրենքում, որն ընդունվել է **1996**-ին:

Հոդված **6**-ում նշված է, որ Հայաստանի քաղաքացիություն ունեցող կինը այլ երկրի քաղաքացու հետ ամուսնանալիս չի կորցնում իր քաղաքացիությունը և հակառակը:

Հոդված **11**-ում ասվում է, որ երեխան ստանում է Հայաստանի քաղաքացիություն անկախ իր ծննդավայրից, եթե նրա ծնողները Հայաստանի քաղաքացիներ են, իսկ եթե ծնողներից միայն մեկն է Հայաստանի քաղաքացի, իսկ մյուսը այլ երկրի քաղաքացի է, ապա երեխայի քաղաքացիությունը որոշվում է ծնողների գրավոր համաձայնությամբ: Եթե նման համաձայնությունը բացակայում է, ապա երեխայի Հայաստանում ծնվելու դեպքում նրան տրվում է Հայաստանի քաղաքացիություն, հակառակ դեպքում երեխան մնում է առանց քաղաքացիության: Եթե երեխայի ծնողները մշտապես բնակվում են Հայաստանում, նրան տրվում է Հայաստանի քաղաքացիություն: Եթե ծնողներից մեկը Հայաստանի քաղաքացի է, իսկ մյուսն անհայտ է, կամ չունի որևէ երկրի քաղաքացիություն, ապա երեխան դառնում է Հայաստանի քաղաքացի:

Այսպես, քաղաքացիություն շնորհելիս, օրենքը որևէ առավելություն չի տալիս ծնողներից որևէ մեկին. մայրը հավասար հիմունքներով կարող է երեխային տալ իր քաղաքացիությունը: Փոքրիկները կարող են ձամփորդել երկու ծնողների անձնագրերով:

Կանայք անձնագիր են ստանում առանց իրենց ամուսինների կամ որևէ այլ մեկի թույլտվության: Կնոջ արտասահմանյան երկիր ձամփորդելու դեպքում նրա ամուսնու համաձայնությունը պարտադիր չէ:

39. 1996 թվականի դրությամբ Հայաստանում գործում է **1385** հանրակրթական դպրոց: Հայաստանի բնակչության **98%**-ը գրագետ է (**1995**-ի դրությամբ): Հնարավոր չէ որևէ տեղեկություն ունենալ **2%** անգրագետ կանանց մասին, որոնք հիմնականում գտնվում են գյուղական վայրերում:

Ներկայումս Հայաստանում գործում են մոտ **45** մասնավոր ուսումնական հաստատություններ, որոնք ունեն պետական արտոնագրեր: Այդ ԲՈՒՀ-երում սովորում են **9853** ուսանող, որոնցից **6750**-ը աղջիկներ են:

Կանանց գործունեության ավանդական ոլորտներն են՝ առողջապահությունը, որտեղ կին ուսանողները կազմում են **90%** (**1995**-ի դրությամբ), կրթությունը և արվեստը՝ **78.9%**: Այնուամենայնիվ, նշանակալի է կանանց թիվը նաև տնտեսագիտության՝ **41.9%**, արդյունաբերության, տրանսպորտի և հաղորդակցության ոլորտներում՝ մոտ **40%**: Հայաստանում կան համաշխարհային համբավ ունեցող կին գեղանկարիչներ, երգիչներ, բանաստեղծներ և դերասանուհիներ:

Վերջին տարիներին աճել է նաև կին ուսանողների թիվը ռադիոէլեկտրոնիկայի, համակարգչային գիտությունների, քիմիայի, ինչպես նաև որոշ նոր ասպարեզներում, ինչպես կառավարումը, բանկային համակարգերը, մարկետինգը, միջազգային հարաբերությունները և միջազգային իրավունքը:

Կանանց թիվը միջնակարգ ուսումնական
հաստատություններում

տարի	ծառայողների ընդ. թիվը	կանայք	տոկոսը
1980	51800	26700	51
1985	47923	25378	52.96
1990	45943	24618	53.58
1995	25180	14551	57.79

Կանանց թիվը
Բարձրագույն կրթական հաստատություններում

տարի	ծառայողների ընդ. թիվը	կանայք	տոկոսը
1980	58100	28100	48
1985	34849	29454	53.70
1990	68397	31417	45.93
1995	46507	24230	52.10

1995-ի դրությամբ գիտահետազոտական ինստիտուտներում աշխատում էին **15040 (44.5%)** հազար կին գիտաշխատող: ԳԱԱ-ի համակարգում այդ թիվը կազմում է **4776** ից **2398**, որոնցից **532**-ը գիտության թեկնածուներ են, **47**-ը գիտության դոկտորներ և **5**-ը ԳԱԱ -ի ակադեմիկոս: Հայաստանը ԱՊՀ երկրների մեջ չորրորդն է Սորոսի ֆոնդից գիտական գրանտներ ստացողների թվում և **456** գիտնականներից **97**-ը (**21%**) կանայք էին:

Երկրի անկախության ձեռքբերումից հետո հնարավոր դարձավ ուսումը արտասահմանում: Այսօր արտասահմանում սովորող Հայաստանի քաղաքացիների **50%**-ը կանայք են:

40. Յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի ազատ կերպով աշխատանք ընտրել: Յուրաքանչյուրը իրավունք ունի վարձատրվել պետության կողմից սահմանված նվազագույն աշխատավարձից ոչ պակաս և աշխատել կյանքի ապահովության և առողջությանը վնաս չհասցնելու համապատասխան պայմաններում (Աշխատանքային օրենսգիրք հոդ. **29**): Կանայք և տղամարդիկ ունեն միևնույն իրավունքները (հոդ. **14**):

Արգելվում է հրաժարվել կնոջը աշխատանքի ընդունել կամ ազատել աշխատանքից պատճառաբանելով նրա հղիությունը կամ կերակրող մայր լինելը (Աշխատանքային օրենսգիրք հոդ. **197**): **70**-ական թվականներին կանանց թիվը բանվորների և աղմինիստրատիվ աշխատողների մեջ կազմում էր **41%**, **80**-ականներին՝ **46%** և **90**-ին **48%**:

Կանայք ունեն տղամարդկանց հավասար իրավունքներ սոցիալական ապահովության, առողջության պահպանման և այլ հարցերում: Արգելվում է հղի կնոջը ազատել աշխատանքից կամ տեղափոխել ցածր վարձատրվող աշխատանքի առանց նրա համաձայնության (Աշխատանքային օրենսգիրք հոդ. **197**):

Մայրը ստանում է **70** օրվա վճարովի արձակուրդ մինչև երեխայի ծնվելը և երկու տարվա մասնակի վճարովի արձակուրդ երեխային խնամելու համար, ինչպես նաև մի շաբթ այլ արտոնություններ (Աշխատանքային օրենսգիրք հհ. **189-193** և ԱԺ-ի բանաձև **267**): Երկիրը աջակցում է մայրերին տարբեր ձևերով. հանգստյան տների

ուղեգրեր հատկացնելով հղի կանանց և մայրերին, ավելացված արաձակուրդ է տրվում անչափահաս երեխաներ ունեցող մայրերին, հնարավորություն է տրվում կերակրող մայրերին աշխատել հատուկ գրաֆիկով, տրամադրելով լրացուցիչ ընդմիջման ժամեր: Այս բոլոր արտոնություններն և սոցիալական երաշխավորությունները շարադրված են Հայաստանի հանրապետության Աշխատանքային օրենսգրքի **193-196** և **264-265** հոդվածներում:

Միայնակ մայրերի թիվը **1995**-ի դրությամբ կազմել է **19.283**: Քաղաքներում նրանց թիվը համեմատաբար մեծ է՝ **36.4%**-ը կամ **8334** միայնակ մայր ապրում է Երևանում: Այդպիսի ընտանիքներում մեծանում է **21996** երեխա: **86%** ընտանիքներում ապրում է **1** երեխա, իսկ **14%**-ում **2** և ավելի:

Երկրի ֆինանսական դժվարությունների հետևանքով շատ մանկական հաստատություններ չեն գործում, ինչը դժվարացնում է աշխատող մայրերի և ընդհանրապես ընտանիքների վիճակը: **1995**-ին մանկական հաստատություններ էին հաճախում **104056** երեխա, սակայն հնարավորություն կա ընդունել **145618** երեխա:

41. **1995**-ին փախստականները, տեղափոխվածները և ներքին տեղաշարժի ենթարկվածները կազմում են բնակչության **14%**-ը (**418 000** մարդ) , որոնցից **55%**-ը կին է: Երկրի բնակչության **30%**-ը (մոտ մեկ միլիոն), որոնցից **514** հազարը ապրում է աղետի գոտում:

Տարբեր հետազոտությունները ցույց են տալիս, որ կին փախստականների վիճակը ավելի ծանր է, քան տղամարկանց վիճակը: Օրինակ փախստականների մեծ մասը ստիպված է եղել բնակություն հաստատել գյուղական վայրերում, ծայրահեղ աղքատության պայմաններում, իսկ քանի որ նրանց մեծ մասը քաղաքի բնակիչներ էին անցյալում, ապա նրանց համար ավելի դժվար է հարմարվել գյուղական կենցաղին և առհասարակ աշխատանք գտնել այնտեղ:

Հայաստանի կառավարությունում քննարկվում է փախստականների երկրի կյանքին ինտեգրացնելու մի համազգային ծրագիր: Այդ ծրագիրը թույլ կտա **5** տարվա ընթացքում լուծել փախստականների և տեղափոխված անձանց բնակարանի, աշխատանքի և սոցիալական ապահովության խնդիրները: Փախստականների ամենակարիքավոր խմբերը օգնություն են ստանում ՄԱԿ-ի փախստականների գծով Կոմիսարիատից, Համաշխարհային Սննդի Ծրագիր, Միջազգային Կարմիր Խաչ, Եվրոպական համայնքի Հումանիտար գրասենյակ, ԱՄՆ կառավարությունից և այլ կազմակերպություններից:

1995-ի դրությամբ Աշխատանքի և զբաղվածության Կենտրոնում գրանցված գործազուրկների թիվը **152.636** է, որոնցից **109.232**-ը՝ կին: Նրանցից **3399**-ը ունեն **2** տարեկանից փոքր երեխա, **1745**-ը՝ ունեն **3** և ավելի երեխա, իսկ **107**-ը հաշմանդամ են: Կանայք կազմում են քաղաքների գործազուրկների **63.9%**-ը, մինչդեռ գյուղական շրջաններում դրանց թիվը զգալիորեն քիչ է:

Կին գործազուրկների թվի գերակշռումը տղամարդկանց նկատմամբ մասամբ բացատրվում է նրանով, որ մինչև **2** տարեկան երեխաներ ունեցող կանայք ստանալով գործազուրկի կարգավիճակ ստանում են նպաստ ի լրումն երեխայի համար տրվող նպաստի:

1993-ին Հայաստանի Կառավարությունը ընդունեց որոշում «Գործազուրկի կարգավիճակ ունեցող քաղաքացիներին և մինչև երկու տարեկան երեխաներ ունեցող մայրերին ամսական նպաստ վճարելու մասին»: **1996**-ին գործազրկության նպաստը կազմում է **1300** դրամ (**3.5 \$**): Ծնողները **6** տարեկանից ցածր երեխաների

համար ստանում են ամսական **1200** դրամ նպաստ (**3.0\$**), անկախ իրենց եկամուտներից:

Մայրական խնամքի տարբեր խնդիրների լուծման համար կազմակերպվել է հատուկ ծառայությունների ընդարձակ ցանց: Շրջանային պոլիկլինիկաներում գործում են կանացի կոնսուլտացիաներ, ծննդաբերական հիվանդանոցներ, ինչպես նաև ծննդաբերական բաժանմունքներ բազմապրոֆիլային հիվանդանոցներում: Ծննդաբերությունից առաջ և հետո տրվում է վճարովի արձակուրդ, որի տևողությունը այժմ կազմում է ընդհանուրը **140** օր: Բժշկական օգնությունը երեխաների և մայրերի հանար կարգավորվում է պետության կողմից և մատչելի է նաև եկվորների համար:

42. Հայաստանում հաշվվում են մոտ **95.000** հաշմանդամ (մեծամասնությունը **1988**-ի Սպիտակի երկրաշարժի արդյունքում), որոնցից **40.000**-ը կանայք են: Միայնակ ծերերը և հաշմանդամները ամբողջապես պետության հովանավորության տակ են: Միայնակ և բազմազավակ մայրերը օգտվում են միևնույն արտոնություններից՝ բնակարանի, կահույքի, վաուչերների, ինչպես նաև պետությունից վարկ ստանալու իրավունքից:

43. Հղի և մինչև մեկ տարեկան երեխա ունեցող կանայք չեն կարող մահապատժի երթարկվել: Որոշ դեպքերում կանանց ազատագրվումը փոխարինվում է այլ դատավճռով:

44. Կանայք և տղամարդիկ ունեն հողի սեփականության հավասար իրավունք: Գյուղական շրջանում աշխատող կանանց խնդիրները չեն առանձնանում հասարակության հիմնական խնդիրներից: Գյուղական շրջաններում ապրող կանանց համար հատուկ օրենքներ կամ կանոններ չկան:

45. Համաձայն Հայաստանի Հանրապետության օրենսդրության կանայք և տղամարդիկ հավասար իրավունքներ ունեն քաղաքացիական և քրեական դատարաններում (Քրեական օրենսգրքի հոդված **8**, Քաղաքացիական օրենսգրքի հոդված **5**):

ՀՀ Նախագահի **1996**-ի հունվարի **12**-ի և ապրիլի **1**-ի հրամանագրերով Հայաստանի Հանրապետությունում նշանկվել են **94** դատավորներ, որոնցից **25**-ը կանայք են, ամենաերիտասարդ կին դատավորը **30** տարեկան է, իսկ ամենատարեցը՝ **57**: Ընտված **6825** ժողովրդական ատենակալներից **3228**-ը նույնպես կանայք են:

Դատական պրոցեսում, որպես վկա կամ ծառայող հանդես գալու որևէ խտրականություն կանանց հանդեպ չկա:

46. Կանայք և տղամարդիկ ունեն ազատ տեղաշարժի և մշտական բնակության վայր ընտրելու համար հավասար իրավունքներ:

47. Հայաստանի Հանրապետությունում ամուսինները ունեն հավասար իրավունքներ ամուսնության մեջ մտնելու պահին, ամուսնության ընթացքում մինչև ամուսնալուծության պահը: Այնուամենայնիվ ամուսնալուծության պահին երեխաների իրավունքները համարվում են գերակայող: Ամուսնության և ընտանեկան պարտականությունների հանդեպ իրավունքներն ու պարտականությունները կարգավորվում են Հայաստանի հանրապետության Ամուսնության և Ընտանիքի մասին օրենսգրքում:

Քաղաքացիները ընտանեկան հարաբերություններում ունեն հավասար իրավունքներ անկախ ծագումից, սոցիալական պատկանելությունից, ռասայից, ազգությունից, սեռից, կրթությունից, լեզվից, կրոնական պատկանելությունից և բնակավայրից (հոդված **4**):

Ամուսնության ընթացքում ամուսիններից յուրաքանչյուրը իրավունք ունի պահպանել իր ազգանունը կամ ընտրել ամուսիններից մեկի ազգանունը, որպես ընդհանուր ազգանուն (հոդված 18):

Ընտանիքում երեխաներին վերաբերող որոշումներն ամուսինների կողմից ընդունվում են համատեղ: Ամուսիններից յուրաքանչյուրը իրավունք ունի ընտրել մասնագիտություն, աշխատավայր և բնակավայր (հոդված 19):

Ամուսնավորության դեպքում համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված սեփականությունը բաժանվում է հավասարապես, սակայն որոշ առավելություն է տրվում ամուսիններից նրան, որն իր վրա է վերցնում երեխաների խնամքը: Ծնողները անկախ սեռից պարտավոր են ալիմենտներ վճարել երեխաների խնամքի համար, եթե ամուսնավորությունից հետո ապրում են նրանցից առանձին: Ալիմենտի չափը որոշվում է տվյալ ծնողի եկամուտի համաձայն (հոդված 21):

Բազմակնությունը օրենքով արգելված է Հայաստանում (Քրեական օրենսգրքի 123-րդ հոդված) և պատժվում է օրենքով մինչև երեք տարի ազատազրկմամբ կամ մինչև մեկ տարով աշխատանքից ազատվելով:

Կանայք տղամարդկանց հետ հավասարապես իրավունք ունեն դիմել բաժանության համար, ինչպես նաև երեխաների խնամքի իրավունքի և կրկնական ամուսնության համար:

Ավելի մանրամասն ներկայացված է «Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ՀՀ ազգային զեկույցում:

Հոդված 4

1 կետ

48. Արտակարգ իրավիճակի էության, այն սահմանելու և այդ պայմաններում պետական կառույցների գործողությունների ու իրավասության սահմանների, այդ կարգավիճակում մարդու հիմնական իրավունքների և ազատությունների մասին հիմնական իրավական դրույթները տեղ են գտել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում:

Ընդ որում օրենսդիրը քննարկվող իրավական դրույթները սահմանելիս հետապնդել է հետևյալ նպատակները՝ ապահովել Սահմանադրությամբ ամրագրված մարդու հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման այնպիսի կարգավիճակ, որը չի կարող լինել սահմանափակման առարկա, բացի այն բացառիկ դեպքերից որպիսիք հատուկ նշված են հիմնական օրենքում և իհարկե չեն հակասում երկրի միջազգային պարտավորություններին: Ինչ վերաբերվում է միջազգային պարտավորություններին, ապա Սահմանադրության 4-րդ հոդվածում ամրագրվում է ժողովրդավարական գլխավոր սկզբունքներից մեկը, այն է՝ «պետությունը ապահովում է մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը սահմանադրության և օրենքների հիման վրա՝ միջազգային իրավունքի սկզբունքներին և նորմերին համապատասխան»:

Տրանսֆորմացիայի սկզբունքի համաձայն, հիմնական օրենքում ամրագրվել է, որ վավերացված միջազգային պայմանագրերի նորմերն անմիջականորեն վերածվում են ներպետական իրավունքի նորմերի: 6-րդ հոդվածի 2-րդ կետը ուղղակի հոչակում է, որ Սահմանադրությունը ունի բարձրագույն ուժ և նրա նորմերը գործում են

անմիջականորեն: Նույն հոդվածի 4-րդ կետում ուղղակի շեշտվում է, որ վավերացված միջազգային պայմանագրերը հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Ընդ որում անվերապահորեն ընդունվում է միջազգային իրավունքի գերակայությունը ներքին օրենսդրության հանդեպ: Նույն 6-րդ հոդվածի 4-րդ կետում միանշանակորեն վերապահվում է միջազգային պայմանագրերի նորմերի կիրարկությունը ներպետական օրենքների նորմերի հետ իրավական կոլիզիայի պարագայում:

Արտակարգ իրավիճակի սահմանումը հիմնական օրենքով վերապահվել է երկրի նախագահին, որպես վերջինիս կարևորագույն իրավունքների և պարտականությունների իրագործման երաշխիքներն ապահովելու մեխանիզմ, որն էլ հակակշռվում է Սահմանադրական Դատարանի և Ազգային Ժողովի համապատասխան սահմանադրական իրավունքներով:

49. Համաձայն հիմնական օրենքի 49-րդ հոդվածի ՀՀ Նախագահը հետևում է սահմանադրության պահպանմանը, հանդիսանում է հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության և անվտանգության երաշխավորը, հանդիսանալով նաև զինված ուժերի գլխավոր հրամանատար (հոդվ.55 կետ 12): Հանրապետության նախագահը (հոդվ.55 կետ 14) իրավասու է սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում, իրականացնել իրավիճակից թելադրվող միջոցառումներ: Նախագահի այս բացառիկ իրավունքի առումով հիմնական օրենքով նախատեսված են բազմաբնույթ հակակշիռներ:

Նախ և առաջ համաձայն հիմնական օրենքի 55-րդ հոդվածի 12-րդ կետի նախագահը արտակարգ իրավիճակից բխող միջոցառումներ իրագործելիս պետք է խորհրդակցի Ազգային ժողովի նախագահի և վարչապետի հետ: Արտակարգ իրավիճակի ռեժիմը սահմանելու դրդապատճառների, ինչպես նաև իրականացվող միջոցառումների մասին պետք է ուղերքով դիմի ժողովին: Արտակարգ իրավիճակ սահմանելու նախագահական իրավունքի իրավական հակակշիռները արտահայտված են նաև Ազգային ժողովի և Սահմանադրական դատարանի իրավասության հիմնադրույթներում:

Համաձայն հիմնական օրենքի 100-րդ հոդվածի 6-րդ կետի Սահմանադրական դատարանը եզրակացություն է տալիս նախագահի կողմից արտակարգ իրավիճակ սահմանելու և դրանից բխող միջոցառումների մասին, որի հիման վրա, ըստ հիմնական օրենքի 81-րդ հոդվածի 3-րդ կետի Ազգային ժողովը իրավասու է դադարեցնել արտակարգ իրավիճակից բխող նախագահի կողմից իրականացվող միջոցառումները և ըստ այնմ էլ արտակարգ իրավիճակի ռեժիմն ընդհանրապես: Ըստ հիմնական օրենքի ոգու և իրավական տրամաբանության, պետության ու դրա կառույցների կողմից ոչ մի պարագայում չեն կարող որևէ կերպ սահմանափակվել Սահմանադրությամբ ամրագրված որոշ առաջնային սկզբունքներ: Բոլոր դեպքերում, այդ թվում արտակարգ իրավիճակի պայմաններում, բոլորը հավասար են օրենքի առջև և առանց խտրականության հավասարապես պաշտպանվում են օրենքով (հիմնական օրենքի 15,16 հ.):

50. Այսպիսով, Սահմանադրությամբ սահմանված և ամրագրված է մարդու լիակատար իրավասուբյեկտիվությունը և լիիրավությունը անկախ որևէ հանգամանքի և դրության: Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ, որ ազգային և ռասայական իրավահավասարության խախտումը դասվում է այլ պետական հանցագործությունների շարքին և ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածում նախատեսված է քրեական պատասխանատվություն:

Հիմնական օրենքով նշված դրույթների փաստացի իրագործումը ապահովելու նպատակով ամրագրված են իրական իրավական երաշխիքներ: Համաձայն հիմնական օրենքի 91-րդ հոդվածի երկրում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ սահմանադրությանը և օրենքների համապատասխան, իսկ 92-րդ հոդվածում ցանկացած պարագաներում ուղղակի արգելվում է «արտակարգ դատարանների ստեղծումը»: Հարկ է նշել, որ իրավական երաշխիքների շարքում կարևոր դրույթ է պարունակվում նաև հիմնական օրենքի 63-րդ հոդվածում, որով սահմանափակվում է երկրի նախագահի իրավասությունը միանշանակ արգելք դնելով արտակարգ իրավիճակի պայմաններում, արձակել Ազգային ժողովը:

Օրենսդրությամբ կառավարությունը պարտավորեցվում է (հիմնական օրենքի 89 հոդ. 6 և 7կկ) ապահովել հանրապետության պաշտպանության և ազգային անվտանգության իրականացումը, միջոցներ ձեռնարկել օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման և հասարակական կարգի պահպանման ուղղությամբ: Ազգային ժողովին, համաձայն հիմնական օրենքի 73-րդ հոդվածի 3-րդ կետի հնարավորություն է ընձեռնվում վերահսկողություն իրականացնել պետական կյանքի տարբեր ոլորտների վրա: Նշենք, որ ժամանակավոր հանձնաժողովները ստեղծվում են նաև որոշակի իրադարձությունների և փաստերի մասին Ազգային ժողովին եզրակացություններ, տեղեկանքներ ներկայացնելու համար: Ընդ որում Ազգային ժողովի այս իրավունքը էությամբ յուրահատուկ է և չի կարող որևէ կերպ սահմանափակվել, այդ թվում, և արտակարգ իրավիճակի պայմաններում:

51. Ցանկացած պարագայում չի կարող սահմանափակվել նաև երկրի նախագահի բացառիկ իրավունքներից մեկը՝ այն է ներում շնորհել դատապարտյալներին:

Բոլոր դեպքերում, գործում է և փոփոխման ենթակա չէ քրեական օրենսգրքի 22-րդ հոդվածը, ըստ որի նույնիսկ արտակարգ իրավիճակի դեպքում, բացառիկ պատժամիջոցի՝ մահապատժի չեն կարող դատապարտվել մինչև հանցագործություն կատարելը տասնութ տարեկան չդարձած անձինք և հանցագործություն կատարելու ժամանակ կամ դատավճիռն արձակելու պահին հղի վիճակում գտնվող կանայք:

Սահապատիժը չի կարող կիրառվել կատարման պահին հղի վիճակում գտնվող կնոջ նկատմամբ:

52. Հարկ է նշել, որ թե արտակարգ իրավիճակի և թե դրա բացակայության պարագաներում պետական իշխանությունն իրականացվում է սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ (հիմնական օրենքի 5-րդ հոդված):

Կարևոր է նաև, որ հիմնական օրենքը, անվերապահորեն սահմանափակում է պետական բոլոր կառույցների, այդ թվում նաև երկրի նախագահի և Ազգային ժողովի իրավասությունները այնքանով, որքանով, որ դրանք կարող են հակասել մարդու հիմնական իրավունքների և ազատությունների ոլորտում հանրապետության ստանձնաց միջազգային պարտավորություններին: Այս խնդիրը իր իրավական լուծումն է ստացել հիմնական օրենքի «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» գլխում, հատուկ այդ նպատակով առանձնացված հոդվածների միջոցով, որոնցով ամրագրվել են որոշակի արգելքներ, որոնք բացառում են պետական կառույցների կողմից քաղաքացիների իրավունքների կամայական խախտումները:

Հիմնական օրենքի 44-րդ հոդվածում ուղղակի նշվում է, որ Սահմանադրության 23-27 հոդվածներում ամրագրված «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները» կարող են սահմանափակվել միայն օրենքով, այն դեպքում միայն, եթե դա անհրաժեշտ է պետական և հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության բարքերի, այլոց իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության համար:

53. Տվյալ դեպքում օրենսդրորեն թույլատրվում է միայն մարդու հիմնական իրավունքների և ազատությունների որոշ, ոչ առաջնային մասի սահմանափակում, այն էլ միայն հիմնական օրենքում սպառիչ կերպով նշված պատճառաբանությամբ և իրավիճակներում: Նշված պարագաներում, որպիսիք հնարավոր են ոչ միայն ռազմական դրության, այլև արտակարգ իրավիճակի ժամանակ, չի բացառվում անձանց կրոնի և համոզմունքների արտահայտման ազատության, խոսքի իրավունքի, ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատության, այլ անձանց հետ միավորումներ, միություններ կազմելու, կուսակցություններ ստեղծելու ազատության, ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու ազատության վերաբերյալ ընդունվում է ժողովրդավարական ձևերով պետության կառավարմանը մասնակցելու իրավունքների ժամանակավոր սահմանափակում: Այդ և այլ առանձին իրավունքների և ազատությունների մասնակի և ժամանակավոր սահմանափակումները նախատեսված են հիմնական օրենքի 45 հոդվածով, ըստ որի այդպիսիք կարող են օրենքով սահմանված կարգով սահմանափակվել ռազմական դրության և արտակարգ իրավիճակի դեպքում:

2-3 կետեր

54. Սահմանափակման ենթակա չեն հիմնական օրենքի 17-րդ (կյանքի իրավունք), 19-րդ (մարդուն խոշտանգումների, դաժան կամ նրա արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի, առանց իր համաձայնության բժշկական և գիտական փորձերի ենթարկելու արգելքները) 20-րդ (անձնական և ընտանեկան կյանքը անօրինական միջամտությունից, պատիվը և բարի համբավը ոսնձգությունից պաշտպանելու իրավունքը, անձնական և ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելու, պահելու, օգտագործելու և տարածելու արգելքը, նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունքը), 39-րդ (խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրավունք ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային համաձայնագրում ամրագրված իրավունքների իրագործման իրավունքը) 41-րդ (անմեղության կանխավարկածի ընդունումը, մեղադրյալի վրա անմեղության ապացուցման բեռը դնելու արգելքը, հանցագործ մեղադրյալին անմեղ համարելու սկզբունքը, քանի դեռ հակառակը օրենքով սահմանված կարգով ապացուցված չէ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով) 42-րդ (անձի ազատումը իր, ամուսնու և մերձավոր ազգականների դեմ ցուցմունք տալու պարտավորությունից, օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործման արգելքը, արգելքը նշանակել ավելի ծանր պատիժ քան կարող են կիրառվել հանցագործության պահին գործող օրենքով, պատասխանատվություն սահմանող և պատասխանատվությունը խստացնող

օրենքները հետադարձ ուժից զրկելու սկզբունքը, հանցագործության համար մեղավոր ճանաչելու արգելքը, եթե արարքի պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել) 43-րդ (Սահմանադրությամբ ամրագրված իրավունքները և ազատությունները սպառիչ չեն և չեն կարող մեկնաբանվել որպես մարդու այլ հանճանաչ իրավունքների և ազատությունների բացառում):

55. Արտակարգ իրավիճակի պայմաններում ուժային նախարարությունները՝ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի նախարարությունները, որոնք ընդգրկված են կառավարության կառույցի մեջ, այդ նախարարությունների ստորաբաժանումները և պաշտոնատար անձիք գործում են ըստ ենթակայության ստացված հրահանգների և պարտավոր են գործել Սահմանադրության և երկրում գործող օրենքների շրջանակներում, իրավասու չեն խախտել օրենքները արտակարգ իրավիճակի դեպքում: Դատախազությունը, որի մեջ առանձին ստորաբաժանման կարգավիճակով ընդգրկված է զինվորական դատախազությունը, լրիվ ծավալով իրականացնում է Սահմանադրությամբ ամրագրված իրավունքները:

Արտակարգ իրավիճակի պարագաներում որևէ կերպ չեն սահմանափակվում ուժային նախարարությունների ներքին վերահսկողական ծառայությունների խնդիրները և իրավասությունը: Այդ ծառայությունները կոչված են արձանագրել և հետաքննել օրինախախտման բոլոր դեպքերը:

56. Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված մարդու հիմնական իրավունքների և ազատությունների, դրանց իրագործման իրավական երաշխիքների, սահմանափակումների բնույթի և սահմանների, արտակարգ իրավիճակի և այդ կապակցությամբ իրավական հակակշիռների մեխանիզմների մասին դրույթների մի ստվար մասը քաղաքական մոտիվներով պարզապես բացակայում էր նախկինում գործող սահմանադրություններում, իսկ զգալի մասը կրում էր զուտ հոչակագրային, ֆորմալ բնույթ՝ իրավական երաշխիքների բացակայության պատճառով:

Ինչ վերաբերում է ներկայումս գործող սահմանադրության վերը քննարկված դրույթներին, ապա անվիճելի է, որ դրանք կարիք են զգում համապատասխան օրենսդրական դաշտի: Այդ ուղղությամբ լայնածավալ աշխատանքներ են տարվում, թե պետական կառույցների, և թե հասարակական կազմակերպությունների, գիտական հաստատությունների, քաղաքական կուսակցությունների և արհեստակցական միությունների կողմից՝ ուսումնասիրվում է արտասահմանյան երկրների փորձը այդ բնագավառում:

57. Իրավական փորձաքննության փուլում է արտակարգ իրավիճակի ժամանակ ոստիկանության, օպերատիվ-հետախուզական գործունեության, դատակազմության մասին և մի շարք այլ օրենքների նախագծեր, որոնց ընդունումը և գործնական իրագործումը թույլ կտա Հայաստանի Հանրապետությանը լիարժեք իրագործել Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունները:

58. 29 օգոստոսի 1990 թվականի Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհուրդի որոշմամբ ՀՀ-ի ողջ տարածքում մտցվեց արտակարգ դրություն: Դրա պատճառն էր Հայոց Ազգային Բանակ ռազմական կազմակերպության հակաօրինական գործողությունները, ինչը բերել էր հանրապետությունում իրադրության սրման:

1992 թվ. մարտի **14**-ին ՀՀ նախագահը իր հրամանագրով, ելնելով Արթիկ քաղաքում ստեղծված լարված իրավիճակի արագ կարգավորման, օրինականության վերականգման անհրաժեշտությունից, ինչպես նաև նոր միջադեպերից խուսափելու նպատակով, որոշեց.

1. Արթիկ քաղաքում հայտարարել արտակարգ դրություն՝ սահմանելով պարետային ժամ՝ ժամը **24**-ից մինչև **6**-ը:

Նույն թվականի մարտի **16**-ին ՀՀ Գերագույն խորհուրդը ընդունեց որոշում Արթիկ քաղաքում արտակարգ դրություն հայտարարելու մասին ՀՀ նախագահի հրամանագիրը հաստատել **15** օր ժամկետով:

1992 թվ. հունիսի **19**-ին ՀՀ նախագահը իր հրամանագրով, հաշվի առնելով հանրապետության հարավային շրջաններում ստեղծված լարված իրավիճակը, նպատակ ունենալով ապահովել բնակչության անվտանգությունը, որոշեց Մեղրու և Կապանի շրջաններում հայտարարել արտակարգ դրություն, երեք ամիս ժամանակով՝ սահմանելով պարետային ժամ՝ ժամը **22**-ից մինչև **6**-ը:

1992 թվ. հուլիսի **29**-ին ՀՀ ԳԽ որոշում է հաստատել ՀՀ Գորիս քաղաքում և Գորիսի շրջանում երկու ամիս ժամանակով արտակարգ դրություն հայտարարելու մասին ՀՀ նախագահի **1992** թվ. հուլիսի **29**-ի հրամանագիրը:

1992 թվ. հուլիսի **29**-ին /նույն օրը/ ՀՀ ԳԽ որոշում է հաստատել ՀՀ Կրասնոսելսկի շրջանում երկու ամիս ժամանակով արտակարգ դրություն հայտարարելու մասին ՀՀ նախագահի **1992** թվ. հուլիսի **29**-ի հրամանագիրը:

1992 թվ. հոկտեմբերի **22**-ին ՀՀ ԳԽ-ի կողմից ընդունվեց որոշում «հոկտեմբերի **20**-ին Գորիսի շրջանի բնակավայրերը Ադրբեջանի օդային ուժերի կողմից ոմբակոծելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի հայտարարության տեքստը հաստատելու մասին», որի բովանդակությունը հետևյալն էր.

«Վերջին շրջանում Ադրբեջանի իշխանությունները դիմում են աննախադեպ քայլերի: Հոկտեմբերի **20**-ին Ադրբեջանի օդային ուժերը, խախտելով ՀՀ օդային տարածքը, ոմբակոծել են Գորիսի շրջանի բնակավայրերը, օգտագործելով զանգվածային բնաջնջման միջոցներ՝ գնդիկավոր ռումբեր, որի հետևանքով զոհվեցին խաղաղ բնակիչներ: Հերթական անգամ խախտելով զինադադարի մասին Հայաստանի Հանրապետության և Ադրբեջանական Հանրապետության միջև կայացած պայմանավորվածությունը, Ադրբեջանի իշխանությունները տեղիք են տալիս ռազմական առճակատման նոր ակիբի բարձրացմանը, որը հղի է ծանր հետևանքներով երկու ժողովուրդների համար»:

Հոդված 5

59. Այս հոդվածի պահանջները արտացոլված են ՀՀ Սահմանադրության **43**-րդ հոդվածում, որտեղ ասվում է, որ «Սահմանադրությամբ ամրագրված իրավունքները և ազատությունները սպառիչ չեն և չեն կարող մեկնաբանվել որպես մարդու և քաղաքացու այլ հանրաճանաչ իրավունքների և ազատությունների բացառում»:

Իսկ **42**-րդ հոդվածի վերջի մասը սահմանում է հետևյալը.«Պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքը հետադարձ ուժ չունի»:

Հասկանալի է, որ Սահմանադրության մեջ մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների սպառիչ ցանկ սահմանելը, նույնիսկ հնարավորության դեպքում էլ, կհակասեր Սահմանադրության բուն էությանը և կխոչընդոտեր իրավունքների և ազատությունների հետագա զարգացմանը և փոխակերպմանը, ինչպես նաև կկանխորոշեր հասարակության զարգացման ընթացքում բազմապիսի և բազմաբնույթ հարաբերությունների իրավական կարգավորման սահմանները՝ դրանով իսկ կասեցնելով նոր իրավունքների և ազատությունների առաջացումն ու դրանց իրավաբանական հաստատագրումը:

60. Շուկայական հարաբերություններին անցնելու փուլում, ելնելով տնտեսական ծանր պայմաններից, բնակչության ցածր կենսամակարդակից տեղ են գտնում տարբեր բնույթի խախտումներ (օրինակ՝ էլեկտրականության արժեքը կազմում էր ավելի ցածր գումար (11 դրամ), քան մենք դրա համար վճարում ենք (14 դրամ) և մի շարք նմանատիպ երևույթներ, այս երևույթները կապված են սեփականաշնորհման հետ), ջրի հետ կապված խնդիրները, առողջապահության, կրթության բնագավառում վճարումների հետ առնչվող հարցերը և այլն:

Հոդված 6

61. Հայաստանի սովետական ժամանակաշրջանի սահմանադրությունները չէին արտացոլում մարդու ամենագլխավոր, առաջնային իրավունքը՝ այն է կյանքի իրավունքը:

Մարդու կյանքի իրավունքը իրավական տեսանկյունից պետականորեն ճանաչվել և հռչակվել է Հայաստանի Հանրապետության **1995** թ. հուլիսի 5-ի Սահմանադրությամբ:

Հիմնական օրենքի 17-րդ հոդվածով սահմանված է, որ յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք: Սահմանադրությունը ընդգրկում է բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող նորմեր: Համաձայն ընդունված հիմնական իրավական սկզբունքի, Սահմանադրության յուրաքանչյուր նորմով ամրագրված դրույթները, այդ թվում նաև կյանքի իրավունքը, պահպանվում է պետության կողմից օրենքով, ինչից էլ անմիջականորեն և միանշանակ կերպով բխում է, որ ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից:

Կյանքի իրավունքի անքակտելիությունը սահմանադրորեն ապահովվում է հիմնական օրենքի 44-րդ և 45-րդ հոդվածներով, որոնցով ուղղակի արգելվում է կյանքի իրավունքի ցանկացած պարագաներում ցանկացած սահմանափակում, օրինակ, ռազմական դրության, արտակարգ իրավիճակի դեպքում և այլն:

62. Մի շարք երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, օրինականացված է մահապատիժը որպես բացառիկ պատժամիջոց, ինչն ինքնին չի հակասում Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրով Հայաստանի ստանձնած պարտավորություններին:

Պետությունը հեռանկարում նպատակ է դրել պատժամիջոցներից մահապատիժը իսպառ վերացնել: Մահապատիժի վերացումը հնարավոր է առաջիկա տարիների ընթացքում, երբ դրա համար ստեղծված կլինեն համապատասխան իրավական, ֆինանսական, նյութատեխնիկական նախադրյալներ: Ընդունած

սահմանադրությամբ մահապատիժը դիտվում է որպես ժամանակավորապես գործող պատժամիջոց:

Հիմնական օրենքի 17-րդ հոդվածի համաձայն, մահապատիժը, մինչև դրա վերացումը, որպես բացառիկ պատժամիջոց, կարող է սահմանվել օրենքով առանձնապես ծանր հանցագործությունների համար: Նոր Սահմանադրությամբ ամրագրված դրույթները տեղ են գտնելու փորձաքննությունների փուլում գտնվող քրեական օրենսգրքում:

63. Հարկ է նշել, որ սովետական ժամանակաշրջանում մահապատիժները իրականացվում էին Հայաստանի սահմաններից դուրս: Հատուկ այդ նպատակով մահապարտները տեղափոխվում էին ԽՍՀՄ մյուս հանրապետություններում առանձնացված կալանավայրեր, որտեղ էլ ընդունված կարգով այդ պատժամիջոցը իրագործվում էր:

64. Հայաստանի ինքնուրույն պետության ստեղծման պահից մինչ այժմ, Հանրապետության տարածքում մահապատի իրականացման ոչ մի դեպք չի արձանագրված: **1991** թ. ի վեր, դատարանների կողմից արձակված մահապատի դատավճիռներից և ոչ մեկը չի կատարվել:

65. Քննարկվող ժամանակամիջոցում, մահապատի է դատապարտվել **24** անձ, բոլորը չափահաս տղամարդիկ, բոլորը կատարել են ծանր հանցագործություններ, և այդ թվում, ծանրացուցիչ հանգամանքներում դիտավորյալ սպանություններ: Մահապարտյալներից այժմ կենդանի են **18**-ը, մեկը սպանվել է նույն խցում պահվող այլ մահապարտի կողմից, իսկ երկուսը մահացել են բնական մահով: Ամենա վաղեմի դատավճիռը արձակվել է **1996** թվ:

66. Անհրաժեշտ է նշել, որ կանանց նկատմամբ ընդհանրապես Հայաստանում մահապատիժ սահմանող դատավճիռներ առնվազն վերջին **15** տարիների ընթացքում չեն կիրառվել:

Գործող քրեական օրենսդրությամբ մահապատիժը, որպես պատժամիջոց սահմանափակ կիրառություն ունի կանաց հանդեպ: Ընդ որում, Քաղաքական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի **6**-րդ հոդվածի **5**-րդ կետով նախատեսված, հղի կանանց նկատմամբ մահապատիժ սահմանող դատավճիռի չկիրառման մասին սահմանափակումը ընդունվել է օրենսդրի կողմից և այն բնականոն ձևով ընդլայնված է՝ մահապատի չեն կարող դատապարտվել հանցագործության կատարման պահին, դատավճիռի արձակման պահին հղի վիճակում գտնվող կանայք:

67. Ներկայիս դրությամբ, իրավական տեսանկյունից, մահապատի հարցում գործում են հետևյալ օրենսդրական սահմանափակումները:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի **22**-րդ հոդվածի համաձայն, մահապատի չեն կարող դատապարտվել հանցագործություն կատարելու պահին **18** տարեկան չդարձաց անձիք:

Այդ թեզը ամրագրվել է նաև **5.05.96** թվ. երեխաների իրավունքների մասին ՀՀ օրենքով, որն ընդունվել է ՀՀ գործող սահմանադրության հիման վրա, նրանում տեղ գտած համապատասխան նորմերի կիրառումն և իրագործումն ապահովելու նպատակով:

68. Փորձաքննությունների փուլում գտնվող նոր քրեական օրենսգրքի հիմնադրույթների քննարկման շրջանակներում քննարկվում են առաջարկներ մահապատի կիրառումը **65** տարեկանից բարձր տարիքի անձանց նկատմամբ արգելելու մասին:

69. Սովետական ժամանակաշրջանում, ըստ քրեական օրենսգրքի, քաղաքացիական հանցագործություններից **19**-ի դեպքում որպես պատժամիջոց նախատեսված էր նաև մահապատիժ:

Անկախ պետականության հաստատումից հետո **11.05.92** թվ. օրենքով մահապատիժը որպես պատժամիջոց վերացվել է տնտեսական բնույթի **5** հանցատեսակների՝ **1)** գողության, **2)** կողոպուտի, **3)** ավազակության, **4)** խարդախության, **5)** յուրացնելու, վատնելու կամ պաշտոնական դիրքը չարաշահելու միջոցով, առանձնապես խոշոր չափերի հափշտակություն կատարելու համար:

11.05.92 թվ. օրենքով վերացվել է նաև քրեական պատասխանատվությունը տարադրամային գործարքների կանոնների խախտման համար /քրեական օրենսգրքի **83** հոդ., ընդունվել է **1961** թվ.: Այդ ըստ էության տնտեսական ոլորտի հանցատեսակի համար որպես պատժամիջոց նախատեսված էր նաև մահապատիժը:

70. Ներկայումս գործող քրեական օրենսդրության համաձայն մահապատիժը որպես պատժամիջոց նախատեսված է հետևյալ դեպքերում.

Առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների **5** հանցատեսակներ՝ հոդ.**59**- հայրենիքին դավաճանելը, հոդ.**60**- լրտեսություն, հոդ.**61**- ահաբեկչական ակտ, հոդ.**62**- օտարերկյա պետության ներկայացուցչի դեմ ուղղված ահաբեկչական ակտ, հոդ. **63**- դիվերսիա:

Այլ պետական հանցագործությունների **3** հանցատեսակների համար՝ հոդ. **72**- բանդիտիզմ, **73**- ուղղիչ աշխատանքային հիմնարկների աշխատանքը կազմալուծող գործողություններ, հոդ.**82**- կեղծ դրամ կամ արժեթղթեր պատրաստելը կամ իրացնելը:

Անձի կյանքի, առողջության, ազատության և արժանապատվության դեմ ուղղված հանցագործություններից երկու հանցատեսակի համար՝ հոդ.**99**- ծանրացուցիչ հանգամանքներում կատարված դիտավորյալ սպանություն, հոդ.**112** - ծանրացուցիչ հանգամանքներում կատարած բռնաբարություն:

Այլ հանցագործություններից երեք հանցատեսակ՝ հոդ.**180**-օդանավ փախցնելը, հոդ.**209**- ոստիկանի կայնքի նկատմամբ ոտնձգութիւնը, հոդ.**185**- կաշառք ստանալը:

Այսպիսով, գործող քրեական օրենսդրությամբ մինչև նոր քրեական օրենսգրքի ընդունումը, **13** հանցատեսակի համար նախատեսված է որպես պատժամիջոց նաև մահապատիժ:

71. Անհրաժեշտ է նկատել, որ առնվազն վերջին **15** տարիների ընթացքում կաշառք ստանալու, կեղծ դրամ կամ արժեթղթեր պատրաստելու կամ իրացնելու համար տարադրամային գործարքների կանոնները խախտելու համար, այսինքն ըստ էության տնտեսական ոլորտի հանցագործություններով Հայաստանում դատավճիռներով մահապատիժ սահմանելու դեպքեր չեն արձանագրվել:

Պետք է նշել, որ փորձաքննության փուլում գտնվող նոր քրեական օրենսգրքում նախատեսվում է վերը նշված երկրորդ հանցակազմի համար առաջարկներ մտցնել մահապատիժը որպես պատժամիջոց վերացնելու վերաբերյալ:

72. Քրեական օրենսդրության, բարձրագույն դատական ատյանի Գերագույն դատարանի պլենումի որոշումների և պարզաբանումների, դատական պատժողական պրակտիկայի երկարաժամկետ փորձի ուսումնասիրությունները, իրավաբանական տեսանկյունից հանգեցնում են միանշանակ եզրակացության, որ ըստ էության դատարանի կողմից մահապատիժի նշանակումը, բացի դիտավոր սպանության գործերից, կարող էր քննարկվել, վերը ներկայացված հանցատեսակներով, միայն այն

պարագայում, եթե տվյալ հանցագործության կատարման հետևանքով արձանագրվել էր կամայականորեն կյանքից զրկելու դեպք:

73. Ըստ ներքին օրենսդրության, բոլոր այն քրեական գործերով, որոնցով դատի տրվող անձիք մեղադրվում են այնպիսի հանցագործություններ կատարելու մեջ, որոնց համար օրենսդրորեն որպես պատժամիջոց կարող է դատավճռով նշանակվել մահապատիժ մինչև դատա-իրավական ռեֆորմի կենսագործումը դատաքննությունը իրականացնում է Հայաստանի Հանրապետության Գերագույն դատարանը առաջին ատյանի դատարանի կարգավիճակով:

74. Բոլոր կարգի պատժամիջոցները, այդ թվում նաև մահապատիժը, իրավաբանական տեսանկյունից կարող են կիրարկվել միայն ուժի մեջ մտած դատավճռի դեպքում:

Անձը կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել, նրա նկատմամբ կարող է պատժամիջոց, այդ թվում և մահապատիժ սահմանող դատավճիռ արձակվել միայն հանցագործության պահին գործող օրենքով: Ընդ որում հիմնական օրենքի **42** հոդ. արգելվում է նշանակել ավելի ծանր պատիժ, քան կարող էր կիրառվել հանցագործության պահին գործող օրենքով: Մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել: Պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքը հետադարձ ուժ չունի: Քրեական օրենսգրքի **6**-րդ հոդվածով, որում ներառվել են վերը նշված սահմանադրական դրույթները, ամրագրված է նաև արարքի պատժելիությունը վերացնող և պատիժը մեղմացնող օրենքի հետադարձ ուժը:

75. Յուրաքանչյուր դատապարտյալ, այդ թվում և մահապատի դատապարտված անձը, բոլոր դեպքերում, ունի օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից դատավճռի վերանայման իրավունք, ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք (հիմնական օրենքի **40**-րդ հոդ.): Ստալինյան ժամանակաշրջանից ի վեր, մահապատի դատապարտման բոլոր դեպքերում բերվել են վճռաբեկ և հսկողական կարգով գանգատներ, ներկայացվել են ներման, պատիժը մեղմացնելու խնդրանքներ: Դատապաշտպանների կողմից գանգատները և խնդրանքները ներկայացվել են բոլոր դեպքերում անխտիր կարգով ըստ կանոնակարգի, մահապատի դատապարտվածների այդ հարցում կարծիքից անկախ:

76. Երկրի Նախագահին վերապահված իրավունքների շրջանակներում, որպիսիք նախատեսված են հիմնական օրենքի **55** հոդ., որպես իր բնույթով բացառիկ իրավունք, վերապահված է ներում շնորհելու իրավունքը (**55** հոդ. **17** կետ):

Նախագահին վերապահված այդ իրավունքը իրականացնելու հնարավորություն է ընձեռնում հիմնական օրենքի **95** հոդ. **8** կետով նախատեսված նորմը, համաձայն որի նախագահը կարող է դիմել արդարադատության խորհրդին, որն էլ պետք է ներկայացնի իր կարծիքը ներման հարցերով:

Քրեական օրենսգրքի **23**-րդ հոդվածի համաձայն, որպես պատժամիջոց ընտրված մահապատիժը ներման կարգով կարող է փոխարինվել մինչև **20** տարի ազատազրկման:

Սահմանադրության **81** հոդվածով, Ազգային ժողովը օժտված է դատապարտյալների, այդ թվում և մահապատի դատապարտվածների նկատմամբ համաներում հայտարարելու իրավունքով:

Նախագահի ներման, Ազգային ժողովի համաներում հայտարարելու իրավունքները ոչ մի պարագայում չեն սահմանափակվում:

77. Ինչ վերաբերվում է պետության կողմից կամայականորեն կյանքից զրկելու դեպքերի իրավական կանխմանը և հետապնդմանը, ապա պետք է նշել, որ գործող հիմնական օրենքով նախատեսված է դատա-իրավական համակարգի ռեֆորմ: Բացի դրանից, միացվել են Ներքին գործերի և Ազգային անվտանգության նախարարությունները, ստեղծվել է նոր նախարարություն՝ ներքին գործերի և ազգային անվտանգության, որի կազմից դուրս է հանվում արտաքին հետախուզությունը կառավարության առանձին կառույցի ձևով:

78. Կյանքի իրավունքի մասին սահմանադրական դրույթը իր բացահայտումն և արտացոլումը պետք է գտնի դատա-իրավական ռեֆորմից բխող օրենքներում, այդ թվում ոստիկանության, զենքի և դրա կիրառման, դատախազության օպերատիվ-հետախուզական գործունեության և այլն: Մինչև ռեֆորմի ավարտը և համապատասխան օրենքների ընդունումը գործում է զենքի կիրառման նախկինում ընդունված կանոնակարգը, որն ըստ էության չի հակասում ՄԱԿ-ի 8-րդ կոնգրեսի (Հավանա 1990 թվ.) կողմից հավանության արժանացած հասարակական կարգի պահպանության համար պատասխանատու պաշտոնատար անձանց կողմից ուժի և հրազենի կիրառման հիմնական սկզբունքներին:

Իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից զենքի կիրառումը գործող հրահանգներով թույլատրվում է միայն նախազուգական կրակոցից հետո այն դեպքում, երբ տեղի է ունենում ուղղակի և ինտենսիվ կյանքի կամ առողջության համար ակնհայտ վտանգավոր կամ այլ ծանր հետևանքներով հղի, հարձակում իրավապահ մարմնի աշխատակցի կամ պահպանություն իրականացնող պաշտոնատար անձի, կամ այլ քաղաքացու նկատմամբ:

Ձենքի կիրառումը հնարավոր է, երբ հանցագործություն կատարած անձը փախուստի փորձ է կատարում ձերբակալման, կալանավորման ընթացքում կամ կալանավայրից:

Բնական է, որ նույնիսկ նշված դեպքերում հրազենը թույլատրվում է կիրառել միայն բոլոր այլ միջոցների կիրառումից հետո կամ այլ միջոցների կիրառման անհնարինության պարագայում: Հարկ է նշել նաև, որ զենքի նույնիսկ նմանօրինակ կիրառման դեպքերում պարտադիր կարգով անց են կացվում ներքին ծառայողական և դատախազական ստուգումներ հրազենի կիրառման օրինակության մասին եզրահանգելու համար: Ընթացիկ տարում արձանագրվել է մահացու էլքով հրազենի կիրառման մեկ դեպք, որի կապակցությամբ դատախազության կողմից անցկացված քննությամբ հրազենի կիրառումը ընդունվել է որպես հանգամանքներից բխող և օրինական (ծանր հանցագործության՝ ծանրացուցիչ հանգամանքներում կատարված սպանության համար հետախուզվող անձը կալանավորվելուց խուսափելու համար պատանդ էր վերցրել մի տարեց անձի, սպառնալով նոնակով): Մի քանի ժամ տևած բանակցություններից հետո, սպառնելով այլ միջոցները, ՆԳՆ աշխատակիցները պատանդի կյանքը փրկելու նպատակով հրազենային կրակով վնասազերծել էին հանցագործին:

Ըստ գործող հրահանգների զենք կիրառող պաշտոնատար անձը պարտավոր է ցույց տալ վիրավորին առաջին օգնություն, հակառակ դեպքում կարող է քրեական պատասխանատվության ենթարկվել անձին վտանգի մեջ թողնելու համար (128 հ.) և պարտավոր է զենքի կիրառման մասին անմիջապես հայտնել իր ղեկավարությանը, որն էլ իր հերթին պարտավոր է այդ մասին անմիջապես հայտնել դատախազին:

79. Պետության կողմից պատերազմի, ռասայական, ազգային հողի վրա բռնությունների վտանգը նվազագույնի հասցնելու նպատակով արդեն ստեղծվել է բավարար իրավական դաշտ, որի կատարելագործումն ու լրացումը շարունակվում է: Սահմանադրության **48-րդ** հոդվածը ուղղակիորեն արգելում է իրավունքների և ազատությունների օգտագործումը ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն և պատերազմ քարոզելու նպատակով:

Պետական հանցագործությունների շարքին է դասվում ազգային և ռասայական իրավահավասարությունը խախտելը (քր.օրի **69** հոդ.), որը ներառում է ազգային և ռասայական թշնամանք սերմանելու նպատակով, այդ թվում և բռնությամբ գուգորդված գործողությունները:

80. Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական և կազմակերպչական հիմքերը, ինչպես նաև պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք բացառում են մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների ազդեցությունը, կանոնակարգվում են **12.12.1992** թ. «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով, որի գործնական կիրարկման երաշխիքներ են նախատեսված քրեական օրենսդրությամբ:

Այսպես, ՀՀ քր.օրի **63** հոդ. նախատեսված է քրեական պատասխանատվություն նաև զանգվածային թունավորումներ կատարելու, համաճարակներ տարածելու համար, որն օրենսդրի կողմից դիտվում է որպես պետական հանցագործություն:

ՀՀ քր.օրի **165** և **293** հոդ. քրեական պատասխանատվություն է նախատեսված անասնաբուժական կանոնների և համաճարակների դեմ պայքարելու նպատակով սահմանված կանոնները խախտելու դեպքերում:

81. **1988** թվ. սկսված երկրում արձանագրվել է սոցիալ-տնտեսական իրավիճակի շեշտակի սրացում, որն էլ իր հերթին հանգեցրել է կյանքից զրկելու հետ կապված դեպքերի աննախադեպ աճի:

ՀՀ վիճակետվարչության տվյալներով, ըստ Մարդկային զարգացման համաթվի դասակարգման, Հայաստանը **1990** թ. աշխարհում **47-րդ** տեղից (մարդկային զարգացման բարձր դաս) **1992** թ. մղվեց **90-րդ** տեղը (մարդկային զարգացման միջին դաս), **1993** թ. **130-րդ** տեղը **0,573** ցուցանիշով:

Սոցիալ-տնտեսական անկումը **1994** թ. հաջողվեց կայունացնել, ապա և սկսեցին նկատվել դրական տեղաշարժեր - ՄԶՀ-ն **1995** թ. կազմեց - **0, 589** ցուցանիշ: Կայունացման միտումները արտահայտվել են մանկական մահացության մակարդակի փոփոխությունում - **1992** թ. **1000** կենդանի ծնունդ արձանագրվել է նորածնի մահացության **18**, իսկ **1994** թ. **15,4** դեպք: **1993** թ. նվազում է մայրական մահացության մակարդակը:

82. Կյանքից զրկելու դիտավոր դեպքերի առումով **1987** թ. արձանագրվել է դիտավորյալ սպանության և սպանության փորձի **59** դեպք, **1988**թ. - **90** դեպք, **1989**թ. - **111**, **1990** թ. - **203**, **1991** թ. - **220**, **1992** թ. - **334**, **1993** թ. - **313**, **1994** թ. - **201**, **1995** թ. - **159**, **1996** թ. - **9** ամիս - **116**, նախորդ տարվա **9** ամիսների **125** դեպքի դիմաց, աճը **1988**թ.-ից **1992** թ. մոտ **6** անգամ, նվազեցումը **1992** թ. համեմատ մոտ **2** անգամ:

Պետության և դրա իրավապահ մարմինների առաջնային խնդիրն է ամրապնդել վերոհիշյալ ոլորտում մահվան դեպքերի նվազման ընդգծված միտումը:

Ներքին օրենսդրությամբ դիտավորությամբ կյանքից զրկելու դեպքերը՝ դիտավորյալ սպանությունները, դասակարգվում են հետևյալ կերպ ա) սովորական դիտավորյալ սպանության, ներառյալ երեխայի սպանությունը մոր կողմից, բ) մեղմացուցիչ հանգամանքներում կատարված դիտավորյալ սպանության գ) ծանրացուցիչ հանգամանքներում կատարված դիտավորյալ սպանություն:

Վերջին դեպքում օրենսդիրը որպես պատժամիջոց նախատեսել է նաև մահապատիժը: Որպես ծանրացուցիչ հանգամանքներ օրենսդրությամբ մատնանշվում են 1) շահադիտական դրդումները, 2) խուլիգանական դրդումները, 3) տուժողի կողմից իր ծառայական կամ հասարակական պատիժը կատարելու կապակցությամբ, 4) երկու կամ ավելի անձանց, 5) հանցավորի համար ակնհայտ հղի վիճակում գտնվող կնոջը, 6) առանձին դաժան կամ շատերի կյանքի համար վտանգավոր եղանակով, 7) այլ հանցագործությունը թաքցնելու կամ դրա կատարումը հեշտացնելու նպատակով, այդ թվում, զուգորդված է բռնաբարության հետ, 8) առանձնապես վտանգավոր ռեցիդիվիստի կողմից կամ նախկինում դիտավորյալ սպանություն կատարած անձի կողմից, բացառությամբ մեղմացուցիչ հանգամանքներում կատարած սպանության դեպքերի 9) առևանգված կամ այլ եղանակով ապօրինաբար ազատությունից զրկված անձի անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության պարագաներում կյանքից զրկելը չի դիտվում որպես հանցագործություն, իսկ դրանց սահմանների անցման պարագայում կյանքից զրկելը՝ ըստ քրեական օրենսդրության դիտվում է որպես մեղմացուցիչ հանգամանքներում կատարած սպանություն: Նման օրինակ իրավական գնահատական է տրվում նաև հոգեկան խիստ հուզմունքի վիճակում կատարված դիտավորյալ սպանություններին:

83. Օրենսդրորեն (103h.) անգուշությամբ կատարված են համարվում կյանքից զրկելու այն դեպքերը, երբ կատարող անձը նախատես է իր գործողության կամ անգործության վտանգավոր հետևանքների առաջացման հնարավորությունը, բայց թեթևամտորեն հույս է ունեցել կանխելու դրանք կամ չի նախատեսել այդպիսի հետևանքներ առաջացնելու հնարավորությունը, թեև պարտավոր էր և կարող էր նախատեսել դրանք:

84. Կյանքից զրկելու համար պատասխանատվության չեն ենթարկվում արարքը կատարելու պահին անմեղսունակության վիճակում գտնվող անձինք:

Վերջիններիս նկատմամբ դատարանի նշանակմամբ կիրառվում են բժշկական բնույթի հարկադրական միջոցներ:

85. Քրեական պատասխանատվության են հանգեցնում ինքնասպանության հասցնելը, դիտավորյալ ծանր մարմնական վնասվածք հասցնելը եթե այն հանգեցրել է մահվան:

86. Քրեական օրենսդրությամբ ինքնուրույն հանցակազմերի ձևով քրեական պատասխանատվություն է նախատեսված կյանքից զրկելու այնպիսի ոչ դիտավորյալ դեպքերի համար, ինչպիսիք են շինարարական և այլ աշխատանքների կանոնների խախտումները, պայթուցիկ նյութերի արտադրություններում անվտանգության կանոնների խախտումները, ճանապարհատրանսպորտային պատահարները և այլն:

Հոդված 7

87. Հայաստանի Հանրապետության իրավական համակարգը և դատական մարմինների գործունեությունը նպաստում են «Խոշտանգումների կամ դաժան կամ

արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի տեսակների դեմ» կոնվենցիայի ընդունած դրույթների արդյունավետ կիրառմանը:

ՀՀ սահմանադրության 19-րդ հոդվածով նախատեսված է, որ մարդուն չի կարելի ենթարկել խոշտանգումների, դաժան կամ նրա արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի, կամ նրան ենթարկել՝ առանց իր համաձայնության, բժշկական կամ գիտական փորձերի:

Համաձայն քրեական օրենսգրքի 14-րդ հոդվածի, արգելվում է մեղադրյալից և գործին մասնակցող մյուս անձանցից ցուցմունքներ կորզելը բռնության, սպառնալիքի և այլ ապօրինի միջոցներով: ՀՀ քրեական օրենսգրքով քրեական պատիժ է նախատեսված հետաքննություն կամ նախաքննություն կատարող անձի կողմից հարցաքննության ժամանակ սպառնալիքներ, կամ այլ ապօրինի գործողություններ կիրառելու միջոցով ցուցմունքներ տալուն հարկադրելը կամ այդպիսի հարկադրանք իրականացնելը հարցաքննվողի անձի նկատմամբ բռնություն գործադրելու կամ ծաղրուծանակի միջոցով:

88. Միաժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի 182-րդ և 183-րդ հոդվածներով բոլոր պաշտոնատար անձանց համար քրեական պատասխանատվություն է նախատեսվում իշխանությունը, պաշտոնական դիրքը չարաշահելու կամ պաշտոնական լիազորությունների սահմանն անցնելու միջոցով քաղաքացիների օրենքով պաշտպանվող իրավունքներին և շահերին վնաս պատճառելու համար: Դրա հետ մեկտեղ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով (450-րդ հոդված) ամրագրված է հետաքննության, նախաքննության, դատախազության մարմինների և դատարանի պաշտոնատար անձանց քաղաքացու իրավունքը՝ անկախ նշված մարմինների և դրանց պաշտոնատար անձանց մեղքից:

Նպատակ ունենալով էլ ավելի ընդլայնել այդպիսի գործողությունների արգելման շրջանակները, նոր քրեական օրենսգրքի նախագծում լրացուցիչ նախատեսվում է, որ այդպիսի մեթոդների օգտագործումը արգելվում է արդարադատության համակարգի բոլոր ներկայացուցիչների համար, բոլոր վկաների նկատմամբ:

89. 1993 թվ. սեպտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետությունը միացել է «Խոշտանգումների կամ այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի տեսակների դեմ» կոնվենցիային, որի դրույթները՝ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն, կազմում են ՀՀ օրենսդրության բաղկացուցիչ մասը և իրավաբանորեն պարտադիր են և պետք է կիրառվեն ՀՀ բոլոր իրավապահ մարմինների կողմից: Այդ դրույթները նախատեսվում է ուղղակիորեն սահմանել նոր քրեական օրենսգրքում՝ դրանց անմիջական կիրառման արդյունավետությունը բարձրացնելու համար:

90. Սակայն, չնայած նշված հարցերի կարգավորման համար նվազագույն պահանջվող օրենսդրական դաշտի առկայությանը և խոշտանգումների և մյուս դաժան ու արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի և պատժի կիրառման քրեորեն պատժելի լինելու հանգամանքի, հանրապետությունում նկատվում են նման վերաբերմունքի դրսևորումներ հետաքննության և նախաքննության մարմինների աշխատակիցների կողմից, որը հետևանք է ինչպես հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության դեռևս բավականին ցածր աստիճանի, այնպես էլ քրեական դատավարության օրենսդրության անկատարության և, մասնավորապես, ապացույցների հավաքմանը և դրանց գնահատմանը առնչվող իրավական հստակ մեխանիզմի և ընթացակարգի

բացակայության: Այս հոդվածին վերաբերող տեղեկությունները ավելի մանրամասն ներկայացված են ՀՀ «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային վերաբերմունքի կամ պատժի տեսակների դեմ» կոնվենցիային վերաբերող ազգային զեկույցում:

Հոդված 8

91. Ստրկության չենթարկելու կամ ստրկատիրական վիճակում չգտնվելու վերաբերյալ Սահմանադրական դրույթները արտացոլված են ՀՀ Սահմանադրության հետևյալ հոդվածներում.« բոլոր քաղաքացիները ունեն Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բոլոր իրավունքները և ազատությունները» (հոդված 15), «բոլորը հավասար են օրենքի առջև և առանց խտրականության հավասարապես պաշտպանվում են օրենքով »(հոդված 16), «յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնմխելիության իրավունք» (հոդված 18) և այլն:

ՀՀ օրենսդրությունում դեռևս այս հարցին վերաբերող հատուկ դրույթներ չկան, սակայն միջազգային չափանիշները տվյալ դեպքում գերակայում են և, հետևաբար, ՀՀ իրավական համակարգի մասն են հանդիսանում:

92. Ինչ վերաբերվում է ստրկության ժամանակակից ձևերին, մասնավորապես երեխաների առևտրին և պոռնոգրաֆիային, ապա Հայաստանում չկան դրան վերաբերող վիճակագրական տվյալներ:

93. Ստիպողական աշխատանքի արգելման մասին է վկայում ՀՀ Սահմանադրության 29 հոդվածը ուր ասվում է, որ յուրաքանչյուր քաղաքացի ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք:

94. Վերջին տարիներին բարեփոխումների են ենթարկվել նաև աշխատանքային պայմանները կալանավայրերում:

Համաձայն Ուղղիչ աշխատանքային օրենսգրքի յուրաքանչյուր դատապարտյալ պարտավոր է աշխատել: Աշխատանքային երկարատև փորձը ցույց է տալիս, որ ստիպողական աշխատանքով անհնար է ապահովել բարձր արդյունավետություն, ունենալ որակյալ և մրցունակ արտադրանք:

Աշխատանքը, թեկուզ և ազատագրված մարդու համար, պետք է լինի հոգեկան բավարարվածություն ստանալու միջոց: Աշխատանքի կամավորության սկզբունքի պահպանման և արդարացի վարձատրության ապահովման միջոցով ուղղիչ աշխատանքային հիմնարկների ձեռնարկությունները կարող են բազա հանդիսանալ ինչպես հատուկ քանակակազմի, այնպես էլ որակյալ և մրցունակ արտադրանք ստանալու համար:

Հայաստանում կիրառվում են դատապարտյալին աշխատանքում ներգրավելու շահագրգիռ հետևյալ միջոցները. աշխատող դատապարտյալին տրվում են լրացուցիչ տեսակցություններ, առաջնահերթ ներկայացվում են պայմանական վաղաժամկետ ազատման:

Անցման ժամանակաշրջանում ուղղիչ աշխատանքային համակարգի հիմնարկների որոշ ձեռնարկություններ ամբողջությամբ գրկվել էին արտադրական հզորություններից, իսկ ոմանց հաջողվել էր պահպանել միայն չնչին մասը:

Արտադրական գործընթացի վերաստեղծման և հետագա ընդլայնման նպատակով բոլոր հիմնարկներում ուսումնասիրվել է սարքավորումների, արտադրական շենքերի, շինությունների, փոխադրամիջոցների, հաստոցների

վիճակը, աշխատանքներ են տարվել դրանց տեխնիկական վիճակի բարելավման ուղղությամբ:

Համակարգի արտադրական գործունեությունը վերաստեղծվել է ձեռնարկություններում առկա և ներմուծվող հումքի, եղած արտադրական հզորությունների հիման վրա, կազմակերպել են նոր արտադրություններ:

Ներկայումս գործում են 7 արտադրական ձեռնարկություններ, որոնց հիմնական ուղղություններն են.

- մետաղամշակում
- փայտամշակում
- թեթև արդյունաբերություն
- քարի արտահանում և արտադրություն:

1996 թվ. նախատեսվում էր համախառն արտադրանքի ծավալը հասցնել **500** մլն. դրամի, որը քառապատիկ անգամ կզերազանցեր **1995** թվ. ցուցանիշը:

95. Հայաստանի Հանրապետությունում կանանց առևտուրը, ինչպես նաև պոռնկությունը արգելվում է: Քրեական օրենսգրքում կան կանանց առուծախի հետ կապված հատուկ հոդվածներ՝ համաձայն օրենքի **179**-րդ հոդվածի, պոռնկության համար որպես պատիժ կիրառվում է զգուշացումը, կամ տուգանքը աշխատավարձի (**50-100** %) չափով: Մինչև **5** տարվա ազատազրկում է սպառնում ընդհատակյա հասարակաց տուն պահելու համար: Վերջին ժամանակաշրջանում Հայաստանում պոռնկության որոշ աճը պետք է բացատրել տնտեսական դժվարություններով: Այնուամենայնիվ, պոռնկության հանդեպ հասարակության ավանդական խիստ դատապարտող վերաբերմունքի պատճառով այն հիմնական պոռբլեմ չէ Հայաստանի համար և սեռական տուրիզմը բացակայում է: Պոռնիկների բռնաբարության դեպքեր չեն արձանագրվել:

Հոդված 9

96. Հայաստանի գործող Սահմանադրության **18**-րդ հոդվածով սահմանված է, որ յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձեռնամխելիության իրավունք: Մարդուն չի կարելի ձերբակալել, խուզարկել այլ կերպ, քան օրենքով սահմանված կարգով: Նա կարող է կալանավորվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

Իրավական տեսանկյունից նորույթը կայանում է նրանում, որ եթե ներկայումս, անցումային փուլում, ժամանակավորապես գործում է նախկին կարգը, ըստ որի անձը կարող է կալանավորվել նաև դատախազի սանկցիայով, ապա դատավարական ռեֆորմի ավարտից հետո, երբ քրեական դատավարական օրենսդրությունը կհամապատասխանեցվի Սահմանադրությանը (սահմանադրության **116** հոդ. **14** կետ), կգործի Սահմանադրության **18** հոդվածով ամրագրված միայն դատարանի որոշմամբ կալանավորման մասին իրավական թեզը: Սահմանադրության **116** հոդ. **7** և **12** կետերի համաձայն, նախկին դատական համակարգը և դատախազությունը մինչև համապատասխան օրենսդրական դաշտի ստեղծումը շարունակում են իրականացնել իրենց գործունեությունը գործող օրենքների հիման վրա:

97. Ներկայումս գործող օրենսդրությամբ անձի ձերբակալումը կանոնակարգվում է օրենսգրքի **111** հոդ., որում բերված են ձերբակալման սպառիչ հիմքերը: Անձը կարող

է ձերբակալվել միայն այնպիսի հանցագործություն կատարելու կասկածանքով, որի համար որպես պատժամիջոց նախատեսված է ազատազրկում:

Ձերբակալումը հնարավոր է միայն այն դեպքում, երբ.

1. անձը բռնվել է հանցագործություն կատարելիս կամ այն կատարելուց անմիջապես հետո
2. ակնատեսները, այդ թվում նաև տուժողը, ուղղակի մատնանշեն տվյալ անձին, որպես հանցագործությունը կատարողի
3. երբ կասկածյալի վրա կամ նրա հագուստի վրա, նրա մոտ, կամ նրա կացարանում հայտնաբերվեն հանցագործության բացահայտ հետքեր:

Եթե առկա են հանցագործության կատարման մեջ տվյալ անձին կասկածելու հիմք տվող այլ տվյալներ, ապա նա կարող է ձերբակալվել միայն փախուստի փորձի դեպքում կամ երբ նա չունի բնակության վայր, կամ երբ չի պարզվել կասկածյալի անձը:

Ձերբակալման մասին պարտադիր կարգով կազմվում է արձանագրություն, որի մեջ այլ տվյալներից բացի պարտադիր է ձերբակալման ամսաթվի, օրվա ժամի և բռնվելի, հիմքերի և շարժառիթների նշումը: Պարտադիր կարգով նշվում են նաև, ըստ կասկածյալի հայտարարության, ընտանիքի անդամի, բարեկամի կամ մտերիմի տվյալները, որին պետք է անհապաղ հայտնվի ձերբակալման մասին: Կազմված արձանագրության հետ կասկածյալի ծանոթացումը ևս պարտադիր է:

Հարկ է նշել, որ ձերբակալման մասին ծանուցման պարտավորությունը դրված է այն իրականացնող պաշտոնատար անձի վրա և ըստ օրենքի ձերբակալվածին նախատեսված չէ տրամադրել հնարավորություն անձամբ հայտնել այդ մասին, նույնիսկ եթե չի ենթադրվում, որ ձերբակալվածի անմիջական կապը (օրինակ հեռախոսով) այլ անձի հետ կարող է խոչընդոտել հանցագործության հանգամանքների բացահայտմանը կամ ապացուցմանը:

Ձերբակալումը իրականացնող պաշտոնատար անձը, ըստ օրենքի պարտավոր է այդ մասին ոչ ուշ քան **24** ժամվա ընթացքում գրավոր հաղորդում ներկայացնել դատախազին, որն էլ իր հերթին ոչ ուշ քան **48** ժամվա ընթացքում պարտավոր է նախնական կալանքի սանկցիա տալ կամ ազատել ձերբակալվածին:

98. Օրենսդրությամբ բացի ձերբակալումից սահմանված է ազատությունից զրկելու ևս մի տեսակ՝ նախնական կալանք:

Նախնական կալանքը որպես խափանման միջոց, որպես կանոն ընտրվում է այն հանցագործությունների վերաբերյալ գործերով, որոնց համար որպես պատիժ օրենքով նախատեսված է ազատազրկում մեկ տարուց ավելի ժամանակով:

Կալանքի սանկցիայի հարցը լուծելիս դատախազը, ըստ օրենքի, պարտավոր է ծանոթանալ կալանքի վերցնելու համար հիմքեր պարունակող բոլոր նյութերին և անհրաժեշտության դեպքում անձամբ հարցաքննել կասկածյալին կամ մեղադրյալին, իսկ անչափահաս կասկածյալին կամ մեղադրյալին բոլոր դեպքերում: Կալանքի սանկցիա տալու իրավունքը օրենքով վերապահված է ՀՀ Գլխավոր դատախազին և նրա տեղակալներին, ինչպես նաև տարածքների դատախազներին:

Համաձայն գործող օրենքի, նախնական կալանքը որպես խափանման միջոց կարող է ընտրվել, եթե հիմքեր կան ենթադրելու, որ մեղադրյալը ազատության մեջ մնալով, կթաքնվի քննությունից ու դատարանից, խոչընդոտ կհանդիսանա քրեական գործով ճշմարտությունը հայտնաբերելուն, կզբաղվի հանցագործ գործունեությամբ, ընդ որում հաշվի են առնվում նաև կոնկրետ անձի բնութագիրը, զբաղմունքի տեսակը, տարիքը, առողջական վիճակը, ընտանեկան դրությունը և այլ հանգամանքներ:

Կալանքի մասին որոշումը, որը պարտադիր կարգով պարունակում է նման որոշման հանգեցնող հիմքերը և շարժառիթները, հայտարարվում է այն անձին, որի նկատմամբ դա կայացված է:

Ըստ գործող կարգի, խափանման միջոց, այդ թվում և նախնական կալանքի ձևով ընտրելու մասին որոշումը, ընդունվում է պաշտոնական մեղադրանք առաջադրելուց հետո:

99. Ցանկացած կասկածյալ կամ մեղադրյալ իրավունք ունի բողոքարկել ձերբակալման կամ կալանավորման հիմնավորվածությունը և օրինականությունը: Նման օրինակ բողոքներով և գանգատներով կարող են հանդես գալ, անկախ ձերբակալվածի կամ կալանվածի ցանկությունից, ոչ միայն նրա շահերը ներկայացնող անձիք, այլև ցանկացած անձ կամ կազմակերպություն: Այդ կարգի բողոքները և գանգատները ենթակա են անհապաղ և մանրակրկիտ քննարկման: Համաձայն քրեական դատավարական օրենսգրքի **6**-րդ հոդվածի, որն ամրագրում է անձի անձեռնամխելիության դրույթը, դատախազը պարտավոր է անհապաղ ազատել ամեն մի ապօրինաբար ազատազրկվածի կամ օրենքով, կամ դատարանի դատավճռով նախատեսված ժամկետից ավելի կալանքի տակ պահվողի: Ի կատարումն այս օրենսդրական պահանջի դատախազները անկախ բողոքի կամ գանգատի առկայությունից, պարտավոր են և սխտեմատիկաբար ստուգում են հետաքննչական և քննչական մարմինների կատարած ձերբակալումների հիմնավորվածությունը և օրինականությունը, գլխավոր դատախազը իր տեղակալների և անձնակազմի միջոցով ստուգում է տարածքների դատախազների կողմից նախնական կալանքների սանկցիաների հիմնավորվածությունը և օրինականությունը:

100. 22.01.1993 թ. Մինսկում ԱՊՀ երկրների, այդ թվում և Հայաստանի կողմից ընդունվել է «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» կոնվենցիան, որով կարգավորվել են նաև հանցագործներին քրեական պատասխանատվության ենթարկելու և հանձնման հարցերը: Մինչ օրս ՀՀ քաղաքացիների կողմից այլ երկրներում հանցագործություն կատարելու առթիվ Հայաստանում քրեական պատասխանատվության կանչելու, այլ երկրների քաղաքացիներին հանձնելու և այդ առթիվ ծագող իրավական հարցերը կանոնակարգող օրենքներ չեն ընդունվել:

Այս կարգի հարցերը լուծվում են վերը նշված Մինսկի կոնվենցիայի, այդ հարցերով երկկողմանի միջպետական համաձայնագրերի (օրինակ՝ Բուլղարիայի հետ), **1995 թ.** նոյեմբերին ընդունված ՀՀ քաղաքացիության մասին ՀՀ օրենքի և նախկին ԽՍՀՄ օրենսդրության հիման վրա: Նման օրինակ մոտեցման իրավական հիմք է հանդիսանում սահմանադրության ամրագրված ուղղակի տրանսֆորմացիայի սկզբունքը, որի համաձայն **6**-րդ հոդվածում սահմանված է, որ վավերացված միջազգային պայմանագրերը հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, իսկ եթե նրանցում սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված օրենքներով, ապա գործում են պայմանագրի նորմերը: Բացի դա, ըստ հիմնական օրենքի **116** հոդվածի **2** կետի մինչև Սահմանադրությանը համապատասխան իրավական դաշտի ստեղծումը ՀՀ օրենքները և մյուս իրավական ակտերը գործում են այնքանով որքանով չեն հակասում Սահմանադրությանը:

101. Վերը շարադրվածի հիման վրա, այլ երկրներում կատարած հանցագործության համար քրեական պատասխանատվության կանչելու հետ կապված հարցերը լուծելու նպատակով թույլատրվում է ազատազրկում մինչև մեկ

ամիս ժամկետով, իսկ բացառիկ դեպքերում՝ երկու ամիս, հանձնման միջնորդությունը հարուցող կողմի խնդրանքով լրացուցիչ նյութեր ներկայացնելու կապակցությամբ: Ըստ Սահմանադրության, ՀՀ քաղաքացիները այլ երկրների չեն հանձնվում: Միննույն ժամանակ ՀՀ քաղաքացիները այլ երկրների տարածքում կատարած հանցագործությունների առթիվ շահագրգիռ կողմի հանձնման կամ քրեական պատասխանատվության կանչելու միջնորդությամբ, կամ միջազգային հետախուզման մեջ գտնվելու փաստի հիման վրա ազատազրկվում են նախնական կալանքի ձևով:

Այնուհետև շահագրգիռ կողմից հանցանքի վերաբերյալ նյութերը ստանալուց հետո, համաձայն Հայաստանում գործող քրեական և քրեական-դատավարական օրենսդրության, ընդհանուր կարգով լուծվում է քրեական պատասխանատվության կանչելու հարցը: Այդ դեպքում, ինչպես նաև հետախուզման փաստի դեպքում, անձը ազատազրկվում է խափանման միջոց ընտրելու մասին օրենսդրական կարգով, օրենքում նշված հիմքերով և շարժառիթներով: Բացի դա, պարտադիր է, որ արարքը ՀՀ օրենսդրությամբ համարվի հանցագործություն, անցած չլինեն քրեական պատասխանատվության կանչելու օրենքով սահմանված ժամկետները և այլն:

102. Այլ երկրների քաղաքացիների հանձնման հարցի լուծումը օրենսդրորեն վերապահված է երկրի գլխավոր դատախազին, որն էլ չի թույլատրում անձի ազատազրկումը և հանձնումը, եթե հիմքեր կան ենթադրելու, որ անձը ենթարկվում է քաղաքական հետապնդման, եթե մեղադրամքը հիմնավոր չէ կամ պատշաճ ձևով չի կազմված, եթե արարքը ՀՀ օրենսդրությամբ հանցանք չի համարվում, եթե հանձնվող անձը պահանջող երկրում կարող է ենթարկվել դաժան կամ արժանապատվությունը նվաստացնող պատժի:

103. Օրինակ՝ **1996** թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ազատազրկումից ազատվել են Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Ա.Վ.Սիդորինը, որը կալանվել էր ՌԴ տարածքում ավազակային հարձակմանը մասնակցելու մեղադրանքի կապակցությամբ միջազգային հետախուզման մեջ գտնվելու առթիվ և մեղադրանքը հիմնավորող փաստաթղթեր չներկայացնելու պատճառաբանությամբ ՀՀ քաղաքացի Ա.Սարգսյանը, որը կալանվել էր ՌԴ տարածքում գողություն կատարելու կապակցությամբ: Վերը շարադրված կարգով ազատազրկման դեպքերը, անխտիր կարգով ստուգվում են անկախ բողոքի և գանգատի առկայությամբ: Հարկ է նշել, որ ՌԴ չհանձնված Ա.Սիդորինը և քրեական պատասխանատվության չենթարկված ՀՀ քաղաքացի Ա.Սարգսյանը բողոքներ կալանման հարցով չեն ներկայացրել:

104. Համաձայն հիմնական օրենքի **40** հոդվածի յուրաքանչյուր ոք ունի ձերբակալման, կալանավորման պահից պաշտպան ունենալու իրավունք, այդ թվում նաև անվճար:

105. Նախկինում ԽՍՀՄ տարածքում օրենսդրորեն որպես կանոն նախնական կալանքի ժամկետը երկու ամիս էր, այն կարող էր երկարացվել հանրապետության դատախազի կողմից մինչև վեց ամիս, ԽՍՀՄ Գլխավոր դատախազի կողմից մինչև ինն ամիս ժամկետով: Չնայած դա նշված չէր քրեական-դատավարական օրենսգրքում, բայց գործնականում բացառիկ դեպքերում ԽՍՀՄ դատախազի միջնորդությամբ, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը կարող էր նախնական կալանքի ժամկետը երկարացնել մեկ-երկու և ավելի տարով:

Այժմ հանրապետությունում գործում է «բացառություններ չթույլատրող» կարգ, ըստ որի նախնական կալանքի ընդունված ժամկետն է մինչև երեք ամիս, ՀՀ Գլխավոր դատախազի կողմից այն կարող է երկարացվել մինչև ինն ամիս, ելնելով քրեական

գործով կատարվելիք աշխատանքների ծավալից, պահանջվող ժամկետներից, ինքնամիսը լրանալուն պես, եթե անձի նկատմամբ քրեական գործը դատի տալու միջնորդությամբ չի ներկայացվել դատարան, ապա նախնական կալանքի ենթարկված անձը ազատ է արձակվում:

106. Ակնհայտ ապօրինի կալանավորելը կամ ձերբակալելը քրեական օրենսդրությամբ համարվում է հանցագործություն և համաձայն քրեական օրենսգրքի **192** հոդ. պատժվում է մինչև երեք տարի ազատազրկմամբ: Ընդ որում քրեական պատասխանատվության կանչելու առումով ապօրինի կալանավորման և ձերբակալման դրդապատճառները նշանակություն չունեն:

Հարկ է նաև նշել, որ հիմնական օրենքի **48** հոդվածում սահմանված դրույթը այն մասին, որ յուրաքանչյուր ոք պարտավոր է հարգել այլոց իրավունքները, ազատությունները ու արժանապատվությունը, լիովին վերաբերվում է նաև իրավապահ մարմինների պաշտոնատար անձանց, որոնք համաձայն հիմնական օրենքի **5** հոդվածի իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են օրենսդրությամբ:

Ըստ գործող օրենսդրության դատարանը որևէ կերպ կապված չէ նախաքննության փուլում դատախազի կողմից տրված կալանքի սանկցիայի հետ:

107. Դատարանը դատական պրոցեսի ցանկացած փուլում, քրեական գործը վարույթ ընդունելով, իրավասու է ինքնուրույն լուծել մեղադրյալին կալանքի տակ պահելու հարցը:

Նկատի ունենալով հանրապետության ընդունած պարտականությունները սույն դաշնագրով և մասնավորապես դրա **9** հոդվածի **3** կետով, նախատեսված է իրավական ռեֆորմի շրջանակներում ընդունվող օրենքներում տառացիորեն արտացոլել դաշնագրի **9** հոդվածի **3**-րդ կետը:

Այս հարցով ներկայումս գործող օրենսդրությամբ ամրագրված կանոնակարգը վերը պարզաբանվել է:

109. Դաշնագրի **9**-րդ հոդվածի **5**-րդ կետում հռչակված դրույթը այն մասին, որ յուրաքանչյուր ոք, ով եղել է անօրինական ձերբակալման և կալանքի տակ պահելու գոհ, իրավունք ունի հայցային ուժ ունեցող փոխհատուցման: Այս դրույթը բառացիորեն չի նշված Սահմանադրությունում, սակայն դա անվերապահորեն հետևում է հիմնական օրենքի մի շարք հոդվածներով ամրագրված նորմերից:

Այսպես, հիմնական օրենքի **15,16** հոդվածներում սահմանված է քաղաքացու լիակատար իրավասուբյեկտությունը անկախ նրա իրավական կարգավիճակին, օրենքի առջև բոլորի հավասարության և առանց խտրականության օրենքով հավասարապես պաշտպանված լինելու մասին սկզբունքը: Հիմնական օրենքի **38, 39, 40** հոդվածներում ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները ու ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք, ինչպես նաև դատական պաշտպանության իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու իրավունք: Տուժողին պատճառված վնասի հատուցումը ապահովվում է օրենքով սահմանված կարգով:

Շարադրված սկզբունքներին համապատասխան նորմեր նախատեսված է ընդունել իրավական ռեֆորմի շրջանակներում ընդունվելիք օրենքներում, իսկ ներկայումս գործում է **18.05.1981** թ. ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով սահմանված կարգը:

110. Ստալինյան ժամանակաշրջանում, քաղաքական շարժառիթներով արտադրական, ինչպես նաև դատական կարգով, ապօրինի բռնության, այդ թվում և

ազատագրկման ենթարկված անձանց արդարացնելու, նրանց որոշակի նյութական փոխհատուցում ապահովվելուն է նպատակաուղղված **14.06.1994** թ. ՀՀ օրենքը «Բռնադատվածների մասին»: Այդ օրենքով, փոխհատուցման կարգով բռնադատվածներին, նրանց առաջին կարգի ժառանգներին պետությունը անվճար տրամադրում է հողակտոր նախկին բնակության վայրում, հանրապետությունում ընթացող սեփականացմանը կրկնակի չափով փայաբաժնով մասնակցելու, անվճար երթևեկության իրավունք, այլ արտոնություններ:

Քաղաքացիական օրենսդրությամբ (քաղաքացիական օրենսգրքի **450** հոդ) կանոնակարգված է դաշնագրի **9**-րդ հոդվածի **5**-րդ կետով սահմանված սկզբունքը:

Անօրինական, կամ անհիմն կարգով ազատագրկված անձին վերապահված է փոխհատուցման նպատակով դատարան հայց ներկայացնելու իրավունք: Ընդ որում, նման դեպքերում պետության կողմից վերապահված է վնասի լրիվ ծավալով հատուցում անկախ իրավապահ մարմինների պաշտոնյաների մեղքից:

Հոդված 10

111. Հայաստանի Հանրապետությունում գործում են ազատագրկման մի քանի տեսակի հիմնարկներ.

1. Ուղղիչ աշխատանքային հիմնարկներ, այդ թվում՝

- ուժեղացված ռեժիմի

- ընդհանուր ռեժիմի

- խիստ ռեժիմի

2. Դաստիարակչական աշխատանքային գաղութ

3. Բանտ

4. Քննչական մեկուսարաններ

5. Հիվանդանոց

6. Գաղութ-բնակավայրեր,

որտեղ իրենց կալանքն են կրում հասարակությունից ժամանակավորապես մեկուսացված մոտ վեց հազար մարդ: Պատժահամակարգի պահանջների իրականացումից բացի, կարևորագույն խնդիրն է համարվում ժամանակավորապես մեկուսացված հատուկ քանակակազմին զբաղեցնել աշխատանքով, կերակրել, հագցնել, նրանց մեջ հարգանք սերմանել օրենքի, կարգ ու կանոնի նկատմամբ, զարգացնել մարդկային լավագույն հատկություններ, չդիպչելով մարդկային արժանապատվությանը:

Պատժային համակարգի հիմնական մասը ռեժիմի պահանջների իրականացումն է: Ազատագրկման վայրերի ռեժիմի հիմնական պահանջներն են՝ դատապարտյալների պարտադիր մեկուսացումը, նրանց նկատմամբ մշտական հսկողության իրականացումը այնպես, որպեսզի բացառվի նրանց կողմից նոր հանցագործություններ կամ այլ հակահասարակական արարքներ կատարելու հնարավորությունը, իրենց պարտականությունների անշեղ կատարումը: Պահման տարբեր պայմանները կախված են կատարած հանցագործության հասարակական վտանգավորության բնույթից և աստիճանից:

112. Ուղղիչ աշխատանքային հիմնարկում պատիժը կրելու ռեժիմի գնահատականը տրվում է ըստ հետևյալ ցուցանիշների.

1. Դատապարտյալների շրջանում կատարված հանցագործություններ, այդ թվում՝

- պետական հանցագործություններ

- կյանքի, առողջության և արժանապատվության դեմ ուղղված հանցագործություններ,

- հիմնարկում իրավակարգի դեմ կատարված հանցագործություններ /փախուստ, փախուստի փորձ, պետական և անձնական ունեցվածքի գողություն և այլն/:

2. Ուղղիչ աշխատանքային հիմնարկում պատժի կրման ռեժիմի պահանջների խախտման վիճակ, ընդ որում՝

- խախտումների համեմատական քանակային վիճակ

- խախտումների որակական կազմ

- խախտումների համար ձեռնարկված ծայրահեղ պատժամիջոցների քանակ /տուգանային մեկուսարան, խցիկային տիպի շենք տեղափոխելը, չկրած պատժաչափի մի մասը բանտային ռեժիմով փոխարինելը/:

3. Ուղղիչ աշխատանքային հիմնարկում աշխատակիցների կողմից օրինակության խախտման փաստեր, այդ թվում՝

- ֆիզիկական տանջանքներ պատճառելու փաստեր,

- դատապարտյալի իրավունքների ոտնահարման փաստեր,

- դատապարտյալի մարդկային արժանապատվության ստորացման փաստեր:

Ելնելով վերը նշված երեք պայմանական խմբերի արդյունքների անփոփոխից տրվում է հիմնարկում դատապարտյալների պահման ռեժիմի գնահատականը:

113. Ազատագրկման վայրերում սահմանված է խիստ կանոնակարգված ներքին կարգապահություն, որը նախատեսում է դատապարտյալների՝ ուղղիչ աշխատանքային հիմնարկ ընդունման կարգը, նրանց վարքի կանոնները աշխատանքի և հանգստի ժամանակ, իրենց մոտ պահել թույլատրվող առարկաների, իրերի ցանկն ու քանակը, ստուգումներ կատարելու, տեսակցություններ, ծանրոցներ, փաթեթներ և նամակներ ընդունելու, դատապարտյալներին (կալանքի վերցված անձանց) հանձնելու կանոնները, ինչպես նաև նրանց վաճառելու թույլատրվող սննդամթերքի և առաջին անհրաժեշտության առարկաների ցանկն ու քանակը:

Ներքին կարգապահության կանոնները հայտարարվում են բոլոր դատապարտյալներին և կալանքի վերցված անձանց:

114. Օրենքով սահմանված պատիժը կրելու ընթացքում դատապարտյալների նկատմամբ կիրառվում են խրաբուսանքի և տույժի միջոցներ:

Ռեժիմի պահանջների պահպանման, լավ վարքի համար կիրառվում են խրախուսանքի հետևյալ միջոցները.

- շնորհակալության հայտնում

- պարգևատրում

- լրացուցիչ հանձունք ստանալու թույլտվություն

- կարճատև կամ երկարատև լրացուցիչ տեսակցության թույլտվություն

- տրված տույժի ժամկետից շուտ հանում

- պատժաչափի մեկ երրորդը կրելուց հետո հատուկ ռեժիմի դատապարտյալների տեղափոխում խցային տիպի շենքից սովորական բնակելի շենքեր

- պատժաչափի կեսը կրելուց հետո բանտային ռեժիմի դատապարտյալների տեղափոխում ուղղիչ աշխատանքային հիմնարկ

- պատժաչափի մեկ երրորդը կրելուց հետո հատուկ ռեժիմի հիմնարկից տեղափոխում Խիստ ռեժիմի հիմնարկ (նախկինում այս կարգի խրախուսանքը կիրառվում էր պատժաչափի կեսը կրելուց հետո միայն)

- ընդհանուր, ուժեղացված և Խիստ ռեժիմի հիմնարկներից տեղափոխում հաստատապես ուղղման ճանապարհին կանգնած գաղութ-բնակավայր:

Բացի վերը նշվածից դրական բնութագրվող և իրենց ուղղվելն ապացուցած անձիք կարող են օրենքով սահմանված կարգով ներկայացվել պայմանական վաղակետ ազատման կամ պատժաչափի չկրած մասը ավելի մեղմ պատժով փոխարինման:

115. Պատիժը կրելու ընթացքում ռեժիմի պահանջները խախտելու համար դատապարտյալների նկատմամբ կիրառվում են տույժի հետևյալ միջոցները.

- նախազգուշացում կամ նկատողություն
- արտահերթ հերթապահություն ազատագրկման վայրի շենքն ու տարածքը մաքրելու համար
- զրկում հերթական տեսակցությունից
- մինչև մեկ ամիս ժամանակով սննդամթերքի գնման արգելում
- տեղափոխում տուգանային մեկուսարան մինչև 15 օր ժամկետով (դաստիարակչական աշխատանքային գաղութում՝ 10 օր)
- բանտում տեղափոխում պատժախուց մինչև 15 օր ժամկետով
- ընդհանուր, ուժեղացված և խիստ ռեժիմի հիմնարկներում տեղափոխում խցային տիպի շենք մինչև 6 ամիս ժամկետով
- բանտում տեղափոխում Խիստ ռեժիմ 2-6 ամիս ժամկետով
- դատարանի որոշմամբ պատժաչափի չկրած մասը բանտային ռեժիմի փոխարինում մինչև 3 տարի ժամկետով
- գաղութ-բնակավայրից դատարանի կողմից նախկինում որոշված ռեժիմի հիմնարկ տեղափոխում:

116. 1991թվ. Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո, ՀՀ ՆԳ նախարարության և դատախազության համապատասխան հրամաններով սահմանվեց դատապարտյալներին և կալանքի վերցված անձանց հանձունքներ և տեսակցություններ հատկացնելու փորձնական կարգ: Փորձը տվեց իր դրական արդյունքը և 1993 թվ. ապրիլ ամսից ազատագրկման վայրերում ՀՀ ուղղիչ աշխատանքային նոր օրենսդրության ընդունումը ժամանակավորապես կիրառվում է ՀՀ դատախազության հետ համաձայնեցված նոր կարգը:

Հիմնարկներում դատապարտյալներին իրավունք է վերապահվում ամսական ստանալ 50 կգ. հանձունք միանգամից կամ մաս-մաս, իսկ քննչական մեկուսարանում և բանտում շաբաթական մեկ անգամ մինչև 10 կգ. քաշով: Վերացվել են սննդամթերքի տեսականու սահմանափակումները:

117. Դատապարտյալների ուղղման, հարազատների հետ նրանց անմիջական կապն ու շփումը չընդհատելու նպատակով ավելացվել են նաև տեսակցությունների տարեկան քանակը: Այսպես, եթե նախկին ԽՍՀՄ օրենսգրքով նախատեսված էր ընդհանուր ռեժիմի հիմնարկում պահվող դատապարտյալին տարվա ընթացքում հատկացնել երեք կարճատև և երկու երկարատև տեսակցություն, իսկ մյուս հիմնարկներում ավելի քիչ, ապա այժմ թույլատրվում է ամսական ունենալ մեկ կարճատև տեսակցություն՝ անկախ հիմնարկի ռեժիմից:

Ելնելով համակարգի հիմնարկների երկարատև տեսակցությունների համար նախատեսված սենյակների քանակից՝ ռեժիմի պահանջները չխախտող անձանց հատկացվում է երկարատև տեսակցություն մինչև երեք օր տևողությամբ այնպես, որ տեսակցություն տրվի ոչ հաճախ, քան ամիսը մեկ անգամ և ոչ պակաս վեց ամիսը մեկ անգամ: Նման տեսակցություն տրվում է միայն դատապարտյալի մերձավոր հարազատների հետ:

Կալանքի վերցված դրական բնութագրվող անձանց, որպես նոր կարգ, թույլատրվում է տեսակցություն իրենց մինչև հինգ տարեկան երեխաների հետ:

118. Բարեփոխումներ են կատարվել նաև դատապարտյալներին կարճատև մեկնումներ թույլատրելու հարցում: Եթե նախկինում նման մեկնումներ թույլատրվում էր միայն ընդհանուր ռեժիմի հիմնարկից, ապա այժմ նաև ուժեղացված և Խիստ ռեժիմի հիմնարկներից 7 օրից ոչ ավել ժամանակով:

119. Վերաբացվել են նախկինում փակված երեկոյան դպրոցները:

Հիմնարկներում ամրապնդվել է ջոկատային համակարգը, դատապարտյալները բաժանված են համաձայն ջոկատ-հանրակացարան սկզբունքի, գործում են դատապարտյալների հասարակական կազմակերպությունները (կոլեկտիվ խորհուրդ, արտադրական, սպորտային, սանիտարական, իրավախախտումների կանխարգելման սեկցիաներով և այլն), հետզհետե ավելանում է այդ աշխատանքում ընդգրկված դատապարտյալների թիվը, որը տալիս է դրական արդյունք:

120. Կազմակերպվում են հոգևոր-կրոնական բնույթի միջոցառումներ (վերջինս նորություն է համակարգում): Հայ առաքելական եկեղեցու Արարատյան հայրապետական թեմի միջնորդությամբ տարվում է քարոզչական աշխատանք, իրականացվում են հոգևոր-կրոնական ծիսակատարություններ, մկրտության և այլ արարողակարգեր, գրադարանները համարվել են եկեղեցիներից նվիրատվության կարգով ստացված գրականությամբ: Ստեղծվել են աղոթելու ժամանակավորապես հարմարեցված սենյակներ:

121. Դատապարտյալները և կալանքի վերցված անձինք ունեն գանգվածային լրատվության միջոցներից օգտվելու թույլտվությունը: Եթե նախկինում կալանքի վերցված անձը ամբողջությամբ կտրված էր խցիկից այն կողմ տիրող աշխարհից, քաղաքական իրադարձություններից, ապա այժմ նա իրավունք ունի դիտել հեռուստացույց, ունկնդրել ռադիոհաղորդումներ, օգտվել լրատվության այլ միջոցներից:

Ստեղծվել է նաև հեռախոսային կապ դատապարտյալների և նրանց հարազատների միջև:

122. ՈՒԱՀ-ում պատիժը կրող դատապարտյալների, նրանց հարազատների դիմում-բողոքների ուսումնասիրման կարգը:

Կալանավորի և դատապարտյալի կողմից քննության տակ գտնվելու ընթացքում, պատիժը կրելու ժամանակ և պատժից ազատվելուց հետո գործում է դատապարտյալների կողմից դիմում-բողոքների, գանգատների, խնդրագրերի քննարկման և ուսումնասիրման համապատասխան կարգ:

Նախ և առաջ, անձին կալանքի վերցնելու պահից, կալանավորն իրավունք ունի օգտվելու պաշտպանի մասնակցությունից:

Մեղադրյալը, ամբաստանյալը դատավարության ընթացքում կարող է բացարկ հայտնել դատավորին (ՀՀ քր. դատ. օր.**26** հոդ.), կարող է հրաժարվել պաշտպանի մասնակցությունից (ՀՀ քր.դատ.**46** հոդ.):

Դատարանի կողմից դատավճիռը կայացնելուց հետո դատապարտյալը կամ նրա հարազատները, համաձայն ՀՀ քր.դատ.օր.**323** հոդվածի 7 օրվա ընթացքում կարող են վճռաբեկ գանգատ բերել, որից հետո քրեական գործը քննվում է վճռաբեկ ատյանի դատարանում:

Քրեական գործը հսկող դատախազը իրավունք ունի դատապարտյալի շահերը պաշտպանելու նպատակով հսկողական բողոք բերել դատարանի կայացրած դատավճռի դեմ:

Պատժի 1/3-ը, կեսը կամ 2/3-ը կրելուց հետո՝ կապված կատարված հանցագործության և պատժաժամկետի հետ, ՌԻԱՀ-ի վարչական հանձնաժողովի միջնորդագրով և բնութագրով, հաշվի առնելով դատապարտյալի ուղման և վերադաստիարակման աստիճանը, նրանք ներկայացվում են դատարան, որտեղ լավում է նրանց պատժից պայմանական, պայմանական-վաղակետ ազատման կամ գաղութ-բնակավայր տեղափոխելու հարցը (թիվ 89 հրաման:

Պատիժը կրելու ընթացքում դատապարտյալը, զոճալով կատարած արարքի համար կարող է դիմել ՀՀ նախագահին՝ ներման խնդրանքով:

Ուսումնասիրելով դատապարտյալի բոլոր բարոյական հատկանիշները, կատարված հանցագործության հասարակական վտանգավորության աստիճանը, ՀՀ Նախագահը միանձնյա կերպով նրան ներում է շնորհում կամ մերժում խնդրագիրը: Մերժվելու դեպքում նույն հարցով ՀՀ Նախագահին, օրենքով սահմանված կարգով-դատապարտյալը կամ նրա հարազատները կարող են դիմել մեկ տարի հետո:

Պատիժը կրելու ընթացքում համապատասխան ՌԻԱՀ-ի ղեկավարության, կողմից կատարվում է դատապարտյալների հարազատների անձնական ընդունելություն, ուսումնասիրվում են նրանց դիմումները, խնդրանքները:

Դատապարտյալի իրավունքները չի սահմանափակվում նաև անհրաժեշտ հարցերի ուսումնասիրման նպատակով խնդագրով դիմելու համապատասխան միջազգային կազմակերպություններին:

123. ՔՊԻ վարչության բոլոր ստորաբաժանումներում կան ամբուլատոր բուժկետեր, անհրաժեշտ բժշկական առաջին օգնություն ցույց տալու համար, ինչպես նաև վիրաբուժական ոչ բարդ միջամտություն կատարելու օգնության կարիք զգացող դատապարտյալներին:

Բուժ.կետերը հազեցված են անհրաժեշտ բուժ.տեխնիկայով և մասնագիտացված աշխատասենյակներով՝ ստոմատոլոգիական, ռենտգեն և այլն:

Որակյալ բուժ.օգնություն ցույց տալու անհրաժեշտության առաջացման դեպքում դատապարտյալներին ըստ սահմանված կարգի տեղափոխում են ՔՊԻ վարչության կենտրոնական հիվանդանոց:

124. Պետության կողմից հատուկ ուշադրություն է դարձվում անչափահասների հանցագործության պրոբլեմի վրա:

ՀՀ ՆԳՆ ՔՊԻ վարչության Աբովյանի ԴԱԳ-ը հանդիսանում է միակ հիմնարկությունը անչափահաս դատապարտյալներին չափահաս դատապարտյալներից առանձին պահելու համար:

ԴԱԳ-ին կից գործում է քննչական մեկուսարան որտեղ ամբողջ հանրապետությունից տեղափոխվում են անչափահաս քննչական կալանավորները և պահվում մինչև դատավճռի հայտարարումը:

Բոլոր շենքերը և շինությունները հիմնական են և նախատեսված են մինչև 500 անչափահաս դատապարտյալներ պահելու համար:

Շոքված 11

125. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ որևէ դրույթ, որի համաձայն այն անձը, որն ի վիճակի չէ կատարելու որևէ պայմանագրային պարտավորություն, կարող է

ազատագրկվել: ՀՀ քաղաքացիական օրենսգրքում նշված են պայմանագրային պարտավորությունների չկատարման համար պատասխանատվության միջոցները, որոնց թվում ազատագրկում չի նախատեսված:

Հոդված 12

կետ 1

126. Հայաստանի Հանրապետության տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու ՀՀ քաղաքացիների իրավունքը սահմանված է ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածով: Օտարերկյա քաղաքացիների համար, թե այդ իրավունքը որոշակիորեն չի սահմանված Սահմանադրությամբ և օրենքներով, սակայն օրենսդրորեն ապահովվում է ՀՀ Սահմանադրության այն դրույթով, որի համաձայն ՀՀ վավերացված միջազգային պայմանագրերը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են և դրանց նորմերը գերակայություն ունեն ՀՀ օրենսդրության նորմերի նկատմամբ: Գործնականում օտարերկրացիների այդ իրավունքը ապահովված է օտարերկրացիների՝ ըստ բնակության վայրի հաշվառման նոր համակարգով:

Հաշվառման համար օտարերկրացին պետք է ներկայացնի.

ա) հանրապետությունում նրա բնակության իրավունքը հաստատող փաստաթուղթ (այսինքն կացության վկայականը կամ ՀՀ մուտքի արտոնագիրը)

բ) բնակելի տարածությունը զբաղեցնելու մասին փաստաթուղթը (բնակարանի սեփականության վկայագիր, վարձակալության պայմանագիր և այլն):

Հաշվառումը կատարվում է այդ փաստաթղթի առկայության դեպքում: Ընդ որում անհրաժեշտ է նշել, որ հաշվառման նպատակը ոչ թե բնակվելու թույլտվություն տալն է, այլ տվյալ քաղաքացու բնակության վայրի մասին տեղեկություն ստանալը: Հաշվառումը չի կարող մերժվել, եթե ներկայացվել են վերը նշված բոլոր փաստաթղթերը:

Նման կարգով իրականացվում է նաև ՀՀ քաղաքացիների՝ ըստ բնակության վայրի հաշվառումը:

կետ 2

127. Սահմանադրության 22-րդ հոդվածով ամրագրված է յուրաքանչյուր անձի՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս գալու իրավունքը:

Բացի որոշակի սահմանափակումներից, որոնց մասին կնշվի 13-րդ հոդվածում, օտարերկյա քաղաքացին կարող է ազատորեն դուրս գալ ՀՀ տարածքից՝ սահմանային կետում ներկայացնելով իր ինքնությունը հաստատող միջազգայնորեն ճանաչված փաստաթուղթ կամ ՀՀ Ներքին գործերի մարմինների կողմից տրված՝ դրան փոխարինող փաստաթուղթ:

կետ 3

128. Բացի վերը նշված սահմանափակումներից, ՀՀ և օտարերկյա քաղաքացիների ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքի նկատմամբ որոշակի սահմանափակումներ նախատեսված են «Հայաստանի Հանրապետության պետական

սահմանի մասին» ՀՀ օրենքով: Մասնավորապես, սահմանված է, որ սահմանային գոտի կամ սահմանային շերտ մուտք գործելը և այդտեղ գտնվելը թույլատրվում է միայն համապատասխան պետական մարմինների համաձայնությամբ:

կետ 4

129. ՀՀ Սահմանադրության 22-րդ կետով սահմանված է, որ յուրաքանչյուր քաղաքացի ունի Հանրապետություն վերադառնալու իրավունք:

ՀՀ օրենսդրությամբ ՀՀ քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետություն մուտք գործելու համար որևէ հատուկ թույլտվություն կամ այլ որոշում չի պահանջվում:

Հոդված 13

130. Օտարերկյա քաղաքացու ՀՀ-ից ելքը կարող է արգելվել՝

ա) եթե նրա նկատմամբ հարուցված է քրեական գործ՝ մինչև գործի վարույթն ավարտելը

բ) եթե դատապարտվել է՝ մինչև պատժի կրումը կամ պատժից ազատվելը

գ) եթե նրա նկատմամբ կա դատարանի վճիռ կամ որոշում մինչև վճռի կամ որոշման կատարման ավարտը կամ կատարումից ազատվելը (h.15):

Օտարերկյա քաղաքացին ՀՀ-ից կարող է վտարվել վարչական կարգով, եթե նրա գործունեությունը սպառնում է ՀՀ ազգային անվտանգությանը, հասարակական կարգին և բարքերին, քաղաքացիների իրավունքներին և ազատություններին, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում (h.32): Օտարերկյա քաղաքացին ՀՀ-ից արտաքսվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում: ՀՀ դատարանը օտարերկյա քաղաքացու նկատմամբ ՀՀ արտաքսումը կարող է նշանակել որպես լրացուցիչ պատիժ: Եթե ազատագրկման ժամկետը չի գերազանցում երկու տարին, այն կարող է փոխարինվել ՀՀ-ից արտաքսմամբ: ՀՀ Նախագահը կարող է օտարերկյա քաղաքացու նկատմամբ ՀՀ դատարանի նշանակված ազատագրկման պատիժը կամ նրա մի մասը փոխարինել ՀՀ-ից արտաքսմամբ: Օտարերկյա քաղաքացուն արտաքսելու մասին դատարանը տասնօրյա ժամկետում ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով տեղյակ է պահում օտարերկյա քաղաքացու շահերը պահպանող ներկայացուցչությանը (h.34): ՀՀ-ում գտնվող այն օտարերկյա քաղաքացին, որը մեղադրվում է որևէ պետության տարածքում հանցագործություն կատարելու մեջ, և որի հանձման պահանջն է ներկայացվում այդ պետության կամ միջազգային կազմակերպության կողմից, հանձնվում է պահանջող կողմին ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված կարգով (h.35):

Հոդված 14

131. ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված է, որ բոլորը հավասար են օրենքի առջև և առանց խտրականության հավասարապես պաշտպանվում են օրենքով (16-րդ հոդված): Օրենքի և դատարանի առջև քաղաքացիների հավասարության սկզբունքն ամրագրված է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում (5-րդ հոդված),

որոնցով սահմանված է, որ արդարադատությունն իրականացվում է օրենքի և դատարանի առաջ քաղաքացիների հավասարության հիմունքներով, անկախ ծագումից, սոցիալական և գույքային դրությունից, ռասայական և ազգային պատկանելությունից, սեռից, կրթությունից, լեզվի, կրոնի նկատմամբ ունեցած վերաբերմունքից, զբաղմունքի տեսակից և բնույթից, բնակության վայրից և այլ հանգամանքներից:

132. Դատաքննության հրապարակայնության սկզբունքին անդրադառնում է Սահմանադրության **39**-րդ հոդվածը, որում ասված է, որ յուրաքանչյուր ոք ունի իր խախտած իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունք:

Հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, կողմերի անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով, լրատվության միջոցների և հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը դատական քննության ընթացքում կամ նրա մի մասում կարող է արգելվել օրենքով:

Այդ առումով, ՀՀ քրեական օրենսգրքը (**12**-րդ հոդված) սահմանում է, որ գործերի քննությունը բոլոր դատարաններում դռնբաց է, բացառությամբ այն դեպքերի, եթե այդ հակասում է պետական գաղտնիքի պահպանության շահերին:

Դռնփակ դատական քննություն, բացի դրանից, դատարանի պատճաբանված որոշմամբ թույլատրվում է տասնվեց տարեկան չդարձաց անձանց հանցագործությունների վերաբերյալ գործերով, սեռական հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպես նաև այլ գործերով՝ մասնակցող անձանց կյանքի ինտիմ կողմերին վերաբերող տեղեկությունների հրապարակումը կանխելու նպատակով: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված է, որ դատարանը՝ իր պատճառաբանված որոշմամբ, կարող է դռնփակ քննություն անցկացնել նաև որդեգրման գաղտնիքի պահպանության նպատակով:

133. ՀՀ Սահմանադրության **41**-րդ հոդվածի համաձայն, հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունը ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի ուժի մեջ մտած դատավճռով: Նույն հոդվածով սահմանված է նաև, որ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, և չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի:

134. ՀՀ Սահմանադրությամբ և քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված են մեղադրյալի իրավունքների պաշտպանության հետևյալ երաշխիքները.

1) Մեղադրանքը պետք է առաջադրվի մեղադրյալին պատասխանատվության ենթարկելու որոշումն ընդունելու պահից ոչ ուշ, քան քառասունութ ժամում կամ մեղադրյալի ներկայանալու կամ նրան բերման ենթարկելու օրից ոչ ուշ: Մեղադրանքն առաջադրելուց քննիչը պարտավոր է բացատրել առաջադրված մեղադրանքի էությունը (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի **140**-րդ հոդված): Եթե մեղադրյալը հայերենին չի տիրապետում, ապա քննիչը պարտավոր է հրավիրել համապատասխան թարգմանիչ:

2) ՀՀ սահմանադրության **40**-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր ոք ունի ձերբակալման, կալանավորման կամ մեղադրանքի առաջադրման պահից պաշտպան ունենալու իրավունք: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի **195**-րդ հոդվածի

համաձայն, եթե քննիչը գտնում է, որ նախաքննության ընթացքում հավաքված ապացույցները բավարար են մեղադրական եզրակացություն կազմելու համար, ապա նա իրավունք ունի ինչպես անձամբ, այնպես էլ պաշտպանի օգնությամբ ծանոթանալու գործի բոլոր նյութերին, ինչպես նաև միջնորդություն հարուցելու նախաքննությունը լրացնելու մասին:

3) դատաքննության չարդարացված հապաղում թույլ չտալու համար օրենքով նախատեսված են ժամկետներ, որոնցով պետք է առաջնորդվի քննիչը և դատավորը:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի **124**-րդ հոդվածով նախատեսված է, որ նախաքննությունը պետք է ավարտվի ոչ ուշ, քան երկամսյա ժամկետում, իսկ **234**-րդ հոդվածում ասված է, որ դատական նիստում գործի քննությունը պետք է մեղադրյալին ներկայացվի դատի տալու որոշումը կայացնելուց հետո ոչ ուշ, քան տասնհինգ օրում:

135. 4) Սահմանադրության 40-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում անվճար: Օրենքով նույնպես ամրագրված է պաշտպան ունենալու մեղադրյալի իրավունքը: Օրենքով նաև սահմանված են այն դեպքերը, երբ պաշտպանի մասնակցությունը գործին պարտադիր է, ինչպես նաև այն դեպքերը, երբ մեղադրյալը կարող է ազատվել իրավաբանական օգնության վճարից:

5) նախաքննության և դատաքննության փուլում մեղադրյալը /ամբաստանյալը/ կարող է միջնորդություններ հարուցել ցանկացած վկաներ կանչելու մասին և նրանց տալ ցանկացած հարցեր:

136. ՀՀ քրեական դատավարական օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն, գործին մասնակցող և դատավարության լեզվին (հայերենին) չտիրապետող անձանց համար ապահովվում է հայտարարություններ անելու, գործի բոլոր նյութերին ծանոթանալու, դատարանում մայրենի լեզվով հանդես գալու և թարգմանչի ծառայություններից օգտվելու իրավունք: Նույն օրենսգրքի **95**-րդ հոդվածով նախատեսված է, որ թարգմանչի վարձատրության վճարումը կատարվում է հետաքննության, նախաքննության մարմինների և դատարանի միջոցներից:

137. 7) Սահմանադրության 42-րդ հոդվածով սահմանված է, որ մարդը պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ամուսնու և մերձավոր ազգականների դեմ:

138. 8) Սահմանադրության 40-րդ հոդվածի համաձայն, յուրաքանչյուր դատապարտյալ ունի օրենքով սահմանված կարգով վերադաս դատարանի կողմից դատավճռի վերանայման իրավունք:

139. 9) Դատապարտված անձի փոխհատուցման իրավունքը օրենքով դիտվում է որպես վնաս պատճառելու հետևանքով ծագող պարտավորությունից բխող իրավունք և այն սահմանված է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի **450-րդ հոդվածով, որում ասված է, որ ապօրինի դատապարտելու, ապօրինաբար քրեական պատասխանատվության ենթարկելու, որպես խափանման միջոց ապօրինաբար կալանավորելու, կալանքի կամ ուղղիչ աշխատանքների ձևով ապօրինաբար վարչական տույժ նշանակելու հետևանքով քաղաքացուն պատճառված վնասը օրենքով սահմանված կարգով պետության կողմից հատուցվում է լրիվ ծավալով՝ անկախ հետաքննության, նախաքննության, դատախազության մարմինների և դատարանի պաշտոնատար անձանց մեղքից:**

140. Դաշնագրի 15-րդ հոդվածի բովանդակությունը արտացոլված է Սահմանադրության 42-րդ հոդվածում որտեղ ասվում է, որ.

ա. «արգելվում է նշանակել ավելի ծանր պատիժ, քան կարող է կիրառվել հանցագործության պահին գործող օրենքով»:

բ.«պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքը հետադարձ ուժ չունի»:

Քրեական օրենսգրքի 6-րդ հոդվածի համապատասխան «արարքի հանցանքի աստիճանը և պատիժը որոշվում են օրենքով, որը գործում է արարքի կատարման պահին»:

Օրենքը, որը վերացնում է արարքի պատժամիջոցը կամ մեղմացնում է պատիժը ունի հետադարձ ուժ, այսինքն տարածվում է նաև այն արարքների վրա, որոնք կատարվել են մինչև օրենքի հրատարակումը:

Պատժից չխուսափելու սկզբունքը (դաշնագրի 15-րդ հոդվածի 2-րդ մաս) արտահայտված է Քրեական օրենսգրքի 4-րդ հոդվածում, ուր ասվում է.

«Բոլոր անձինք, որոնք հանցագործություն են կատարել Հայաստանի տարածքում ենթակա են պատասխանատվության համաձայն Հայաստանի տարածքում գործող քրեական օրենքների»:

Հոդված 16

141. ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն, բոլորը հավասար են օրենքի առջև և առանց խտրականության հավասարապես պաշտպանվում են օրենքով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի համաձայն, քաղաքացիական իրավունակությունը, այսինքն՝ քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ ունենալու հնարավորությունը, ճանաչվում է ՀՀ բոլոր քաղաքացիների համար հավասարապես (9-րդ հոդված): Օտարերկյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք Հայաստանի Հանրապետությունում իրավունակություն են վայելում ՀՀ քաղաքացիների հետ հավասար: Առանձին բացառություններ օտարերկյա քաղաքացիների համար սահմանված են օրենքով: Օրինակ՝ ՀՀ հողային օրենսգրքի և «Անշարժ գույքի մասին» ՀՀ օրենքի համաձայն, օտարերկյա քաղաքացին չի կարող օգտվել Հայաստանի Հանրապետությունում հողի նկատմամբ սեփականության իրավունքից. « Հայաստանի Հանրապետությունում օտարերկյա քաղաքացիներին արգելվում է անդամակցել Հայաստանի Հանրապետությունում ստեղծված քաղաքական կուսակցություններին, առանձին բացառություններ օտարերկյա քաղաքացիների համար սահմանված են նաև սեփականաշնորհման մասին օրենսդրությամբ: Այդ բացառությունները, սակայն, փոքրաթիվ են և որևէ կերպ չեն կարող մեկնաբանվել որպես օտարերկյա քաղաքացիների իրավասուբյեկտության ճանաչումից հրաժարում: Միաժամանակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված է, որ ՀՀ կառավարությունը կարող է պատասխան սահմանափակումներ նախատեսել այն պետությունների քաղաքացիների նկատմամբ, որտեղ գոյություն ունեն ՀՀ քաղաքացիների իրավունակության հատուկ սահմանափակումներ:

Այդ սահմանափակումները, սակայն, չեն կարող վերաբերել օտարերկյա քաղաքացիների դատավարական իրավունքներին, և այդ իրավունքներից նրանք օգտվում են ՀՀ քաղաքացիների հետ հավասար պայմաններով:

142. ՀՀ օրենսդրությամբ հատուկ կանոններ են նախատեսված նաև ֆիզիկական անձանց իրավասուբյեկտության մյուս դրսևորման՝ գործունեության, այսինքն իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իր համար պարտականություններ ստեղծելու քաղաքացու ունակության վերաբերյալ:

Օրենքի համաձայն, քաղաքացու գործունակությունը ծագում է նրա չափահաս /18 տարեկան/ դառնալուն պես: Ոչ ոքի գործունակությունը չի կարող սահմանափակվել այլ կերպ, քան օրենքով նախատեսված դեպքերում /օրինակ՝ հոգեկան հիվանդության, տկարամտության, ոգելից խմիչքներ կամ թմրեցուցիչ նյութեր չարաշահելու դեպքում/: Օտարերկյա քաղաքացիների գործունակությունը որոշվում է նրանց քաղաքացիության երկրի օրենսդրությամբ, իսկ քաղաքացիություն չունեցող անձանց գործունակությունը՝ նրանց մշտական բնակության երկրի օրենսդրությամբ, բացառության այն դեպքերի, երբ այդպիսի անձինք վնաս են պատճառում ՀՀ տարածքում: Նշված դեպքերում, վնաս պատճառելու հետ կապված պարտավորություններ կրելու՝ այդ անձանց ունակությունը որոշվում է ՀՀ օրենքով:

143. Հայաստանի Հանրապետությունը իրավական օգնության մի շարք պայմանագրեր է կնքել օտարերկյա պետությունների (օրինակ՝ ԱՊՀ երկրների, Բուլղարիայի, Ռուսիայի հետ, որոնցով նախատեսված են լրացուցիչ երաշխիքներ այդ պետությունների քաղաքացիների իրավասուբյեկտության ճանաչման վերաբերյալ):

Հոդված 17

144. Անձնական և ընտանեկան կյանքին անօրինական միջամտությունը, անձնական և ընտանեկան կյանքի մասին տեղեկությունների ապօրինի հավաքը արգելվում են ՀՀ Սահմանադրության հետևյալ հոդվածների համաձայն.

Հոդված 20

«Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական և ընտանեկան կյանքը անօրինական միջամտությունից, իր պատիվը և բարի համբավը ոտնձգությունից պաշտպանելու իրավունք:

Արգելվում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելը, պահելը, օգտագործելը և տարածելը:

Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք, որը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ»:

Հոդված 21

«Յուրաքանչյուր ոք ունի բնակարանի անձեռնմխելիության իրավունք: Արգելվում է մարդու կամքին հակառակ մուտք գործել նրա բնակարանը՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Բնակարանը կարող է խուզարկվել միայն դատարանի որոշմամբ՝ օրենքով սահմանված կարգով:

Հոդված 38

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատությունները օրենքով չանգեղված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրավունք:

Քրեական օրենսգրքի 135-րդ հոդվածում նախատեսվում է, որ «անօրինական խուզարկումը, բնակարանից վտարումը կամ այլ գործողությունները, որոնք խախտում են քաղաքացու բնակարանի անձեռնմխելիության իրավունքը՝ պատժվում են մինչև մեկ տարի ժամկետով ազատազրկմամբ կամ նույն ժամկետով ուղղիչ աշխատանքներով:

Օրենսգրքի 136-րդ հոդվածում նշվում է, որ «նամակագրության, հեռախոսային խոսակցությունների գաղտնիության խախտումը պատժվում է մինչև 6 ամիս ժամկետով ուղղիչ աշխատանքներով»:

Հոդված 18

145. Յուրաքանչյուր մարդու մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունքն ամրագրված է ՀՀ Սահմանադրության 23-րդ հոդվածով: Անկախության հռչակումից հետո, նորաստեղծ պետության ընդունած առաջին օրենքներից մեկը դարձավ «Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը (ընդունվել է 1991թվ.հունիսի 17-ին), որով ավելի մանրամասնորեն կարգավորվում են սահմանադրական այդ իրավունքի իրականացման հետ կապված հարաբերությունները և գործնական երաշխիքներ են սահմանվում այդ իրավունքից օգտվելու համար: Օրենքի 1-ին հոդվածում նշված է. «Յուրաքանչյուր քաղաքացի ազատորեն որոշում է իր վերաբերմունքը կրոնի նկատմամբ, իրավունք ունի դավանելու ցանկացած կրոն կամ չդավանելու ոչ մի կրոն, անձնապես կամ այլ քաղաքացիների հետ համատեղ կատարելու կրոնական ծեսեր»:

Նույն օրենքի 3-րդ հոդվածի համաձայն, քաղաքացու նկատմամբ չի թույլատրվում որևէ հարկադրանք կամ բռնություն՝ ժամերգություններին, կրոնական ծիսակատարություններին և արարողություններին, կրոնի ուսուցմանը մասնակցելու կամ չմասնակցելու հարցերի նկատմամբ իր վերաբերմունքը որոշելիս: Դավանանքի նկատմամբ քաղաքացիների իրավունքների ուղղակի կամ անուղղակի սահմանափակումները, կրոնական հողի վրա հետապնդումները կամ այլ իրավունքների խոչընդոտումը, կրոնական թշնամանքի հարուցումը առաջ են բերում օրենքով սահմանված պատասխանատվություն:

Նույն օրենքի համաձայն, խղճի ազատության իրավունքի իրագործումը ենթակա է լուրջ այն սահմանափակումներին, որոնք անհրաժեշտ են հասարակական անվտանգությունը և կարգուկանոնը, քաղաքացիների առողջությունն ու բարոյականությունը, հասարակության մյուս անդամների իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու համար:

146. Կրոնական կազմակերպությունը գրանցելու համար, Կրոնական հարցերով Պետական կոմիտեին պետք է ներկայացվի կազմակերպության կանոնադրությունը և

50-ից ոչ պակաս հիմնադիրների ցուցակը: Վերջինը չի վերաբերվում ազգային փոքրամասնությունների կրոնական համայնքներին (այս դեպքում 50 հիմնադիրների ներկայությունը պարտադիր չէ):

Գրանցման կամ մերժման որոշումը ընդունվում է մեկ ամսվա ընթացքում: Գրանցման մերժումը կարող է բողոքարկման ենթարկվել դատական կարգով: Ներկայումս Հայաստանում գրանցված են 14 կրոնական տարբեր ուղղությունների կանոնադրություններ: Հայերի մեծամասնությունը, ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, դավանում են իրենց ազգային՝ Հայկական Առաքելական եկեղեցուն: Չնայած իր գերակայող դրությանը, Հայկական Առաքելական եկեղեցին հասկացողությամբ է վերաբերվում այլ կրոնական դավանանքներին:

147. Բացի Հայկական Առաքելական եկեղեցուց Հայաստանում գրանցված են հետևյալ կրոնական կազմակերպությունները.

1. Ռուսական Ուղղափառ եկեղեցի
2. Հայկական Կաթոլիկ եկեղեցի
3. Հրեական համայնք
4. Հեթանոսական համայնք
5. Կրիշնայի գիտակցության համայնք
6. Բախանների համայնք
7. Մարմոններ
8. Բապտիստներ
9. Ավետարանչականներ
10. Հիսուներրորդականներ
11. Յոթերորդ օրվա ադվենտիստներ
12. Խարիզմատներ

Առանց գրանցման գործում են «Եհովայի վկաներ», «Մուհի եկեղեցի» համայնքները և «Աուն Սինրիկե» աղանդը:

Պետք է նշել, որ վերը նշված կրոնական կազմակերպությունների մոտավորապես կեսը սկսել են գործել վերջին մի քանի տարիների ընթացքում, ինչը օրենքների լիբերալիզացիայի, ինչպես նաև արտասահմանյան քարոզիչների հետևանք է: Արտասահմանյան քարոզիչների գործունեությունը լայն տարածում ստացավ 1988 թ. երկրաշարժից հետո, երբ նրանք Հայաստան ժամանեցին հումանիտար օգնություն ցուցաբերելու նպատակով:

Հոդված 19

148. Դաշնագրի 19-րդ հոդվածում հռչակվող իր կարծիքներին հավատարիմ մնալու մարդու իրավունքն իր արտահայտությունն է գտել Սահմանադրության 24-րդ հոդվածում, որում ասված է. «Յուրաքանչյուրն ունի իր կարծիքը պնդելու իրավունք: Արգելվում է մարդուն հարկադրել՝ հրաժարվել իր կարծիքից կամ փոխել այն»:

Պակտի այդ դրույթի հետ սերտորեն առնչվում է նաև Սահմանադրության նշված հոդվածի երկրորդ մասի դրույթը, որով սահմանված է, որ յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք՝ ներառյալ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը տեղեկատվության ցանկաված միջոցով՝ անկախ պետական սահմաններից:

149. Խոսքի ազատության իրավունքի իրականացման հետ կապված հարցերն ավելի մանրամասն կարգավորվում են «Մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների մասին» ՀՀ օրենքով, որը՝ խղճի ազատության մասին օրենքի հետ միասին, Հայաստանի նորաստեղծ պետության ընդունած առաջին օրենքներից մեկն է (ընդունվել է **1991** թվ. հոկտեմբերի **8**-ին): Օրենքով սահմանված է, որ մամուլը և զանգվածային լրատվության մյուս միջոցներն ազատ են, գրաքննության չեն ենթարկվում: ՀՀ քաղաքացիները ունեն մամուլով և զանգվածային լրատվության մյուս միջոցներով իրենց տեսակետները, կարծիքները արտահայտելու, հասարակական կյանքի յուրաքանչյուր խնդրի վերաբերյալ հրատապ և հավաստի լրատվություն ստանալու իրավունք: Մամուլը և զանգվածային լրատվության մյուս միջոցները իրավունք ունեն ցանկացած պետական մարմիններից, հասարակական, հասարակական-քաղաքական կազմակերպություններից, դրանց ղեկավարներից ստանալու տեղեկություններ, եթե պահանջված լրատվության տրամադրումը չի սահմանափակված օրենքով:

150. Նույն օրենքով նաև սահմանված է խոսքի ազատության չարաշահման անթույլատրելիությունը: Այսպես, օրենքի **6**-րդ հոդվածում նշված է.

«Մամուլով և զանգվածային լրատվության այլ միջոցներով չի թույլատրվում հրապարակել պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ, որոնց ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության Նախարարների խորհուրդը:

Հրապարակման ենթակա չեն պատերազմ, բռնություն, ազգային ու կրոնական թշնամանք հրահրող, պռոնկություն, թմրամոլություն և քրեորեն պատժելի այլ արարքներ քարոզող, կեղծ և չստուգված լրատվությունը: Առանց քաղաքացու համաձայնության չի թույլատրվում հրապարակել որդեգրման գաղտնիքը և քաղաքացու նեղ անձնական կյանքին վերաբերող տեղեկություններ:

151. Տեղեկություններ ստանալու իրավունքի հետ շաղկապված է նաև ընդունվող օրենքների և օրենսդրության մյուս ակտերի ընդունման վերաբերյալ տեղեկատվություն ստանալու իրավունքը: Այդ առնչությամբ, Սահմանադրության **6**-րդ հոդվածով սահմանված է, որ բոլոր օրենքները կիրառվում են միայն պաշտոնական հրապարակումից հետո, իսկ մարդու իրավունքներին, ազատություններին և պարտականություններին վերաբերող չհրապարակված իրավական ակտերը իրավաբանական ուժ չունեն:

Հոդված 20

152. Պատերազմի որևէ քարոզչություն Հայաստանի Հանրապետությունում արգելվում է: Դրա մասին են վկայում ՀՀ Սահմանադրության **9**-րդ հոդվածի դրույթը «Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը իրականացվում է միջազգային իրավունքի նորմերին համապատասխան՝ բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով»:

ՀՀ Սահմանադրության հոդված **48**-ի **2**-րդ մասը նշում է, որ «Արգելվում է իրավունքների և ազատությունների օգտագործումը, սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն և պատերազմ քարոզելու նպատակով»: Իսկ գործող քրեական օրենսգրքի **66**-րդ հոդվածով «պատերազմի պրոպագանդան, ինչ ձևով էլ որ այն տարվի պատժվում է ազատազրկմամբ երեքից մինչև ութ տարի ժամանակով և աքսորով երկուսից մինչև հինգ տարի ժամանակով կամ առանց աքսորի»:

22 Սահմանադրության 15-րդ և 16-րդ հոդվածները ամրագրել են հետևյալը՝ «Քաղաքացիները, անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ունեն Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, ազատությունները և պարտականությունները», «բոլորը հավասար են օրենքի առջև և առանց խտրականության հավասարապես պաշտպանվում են օրենքով»:

22 Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն «Յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք: Կրոնի և համոզմունքների արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով Սահմանադրության 45-րդ հոդվածում նախատեսված հիմքերով»:

45-րդ հոդվածի հիմքերն են ռազմական դրությունը և 55-րդ հոդվածի 14-րդ կետով նախատեսված դեպքերում, այսինքն՝ սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում...

Իսկ ըստ գործող քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի «Ազգային կամ ռասայական թշնամանք կամ երկպառակություն հատուցելու, ազգային պատիվն ու արժանապատվությունը նսեմացնելու նպատակին ուղղված դիտավորյալ գործողությունները, ինչպես նաև քաղաքացիների ուղղակի կամ անուղղակի իրավունքների սահմանափակումը կամ ուղղակի կամ անուղղակի առավելությունների սահմանումը՝ ելնելով նրանց ազգային կամ ռասայական պատկանելիությունից՝ պատժվում են ազատազրկմամբ մինչև երեք տարի ժամանակով կամ տուգանքով մինչև 2 հազար ռուբլի (դրամ):

Նույն գործողությունները, եթե զուգորդվել են բռնության, խաբեության կամ սպառնալիքի հետ, ինչպես նաև կատարվել են պաշտոնատար անձանց կողմից՝ պատժվում են ազատազրկմամբ մինչև հինգ տարի ժամանակով կամ տուգանքով մինչև հինգ հազար ռուբլի (դրամ):

Նույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված գործողությունները, եթե կատարվել են մի խումբ անձանց կողմից կամ հանգեցրել մարդկան մահվան կամ ուրիշ ծանր հետևանքների պատժվում են ազատազրկմամբ մինչև տասը տարի ժամանակով (10.03.90) խմբագրությամբ:

Հոդված 21

153. Խաղաղ ժողովների իրավունքն ամրագրված է Սահմանադրության 26-րդ հոդվածով.«Քաղաքացիները ունեն խաղաղ, առանց զենքի ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու իրավունք»:

Նշված իրավունքի կիրառման մեխանիզմները նախատեսված է սահմանել առանձին օրենքով, որի նախագիծը դեռևս մշակման փուլում է:

Հոդված 22

154. Միավորումներ կազմելու իրավունքն ամրագրված է Սահմանադրության 25-րդ հոդվածում, որում ասված է.

«Յուրաքանչյուր ոք ունի այլ անձանց հետ միավորումներ կազմելու, այդ թվում՝ արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք»:

Յուրաքանչյուր քաղաքացի ունի այլ քաղաքացիների հետ կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունք:

Այս իրավունքները կարող են սահմանափակվել զինված ուժերում և իրավապահ մարմիններում ծառայողների նկատմամբ:

Մարդուն չի կարելի հարկադրել անդամագրվել որևէ կուսակցության կամ միավորման»:

ՀՀ օրենսդրությամբ հասարակական միավորումները բաժանված են հասարակական կազմակերպությունների (որոնց մեջ մտնում են նաև արհեստակցական միությունները) և հասարակական-քաղաքական կազմակերպությունների (քաղաքական կուսակցությունների):

155. Քաղաքական կուսակցություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով (ընդունվել է **1991** թվ. փետրվարի **26**-ին): Օրենքով հասարակական-քաղաքական կազմակերպություն է համարվում կամավոր հիմունքներով միավորված Հայաստանի Հանրապետության ընտրական տարիք ունեցող քաղաքացիների միավորումը, որն ունի ծրագիր և կանոնադրություն, ընտրությունների միջոցով մասնակցում է պետական իշխանության մարմինների կազմավորմանը, դրանց գործունեությանը, ինչպես նաև հանրապետության հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքին:

Օրենքով որոշ անձանց համար սահմանափակված է հասարակական-քաղաքական կազմակերպության անդամագրվելու իրավունքը: Այսպես, օտարերկյա քաղաքացիները չեն կարող լինել հասարակական-քաղաքական կազմակերպության անդամ: Հասարակական-քաղաքական կազմակերպության անդամ չեն կարող լինել նաև արդարադատության և ներքին գործերի նախարարություններում, պետական անվտանգության կոմիտեում, դատախազությունում, պետական արբիտրաժում, դատական մարմիններում, մաքսային ծառայությունում աշխատող, ինչպես նաև բանակում ծառայող քաղաքացիները՝ աշխատելու կամ ծառայելու ժամանակահատվածում (օրենքի **2**-րդ հոդված):

Նման սահմանափակումներ չեն նախատեսված հասարակական կազմակերպությունների համար:

156. **1996** թվ. նոյեմբերի **1**-ին ընդունվել է « Հասարակական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, որով կարգավորվում են միավորումներ կազմելու՝ անձի սահմանադրական իրավունքի իրականացման ժամանակ ծագող հասարակական հարաբերությունները: Օրենքով, մասնավորապես, կարգավորվում են հասարակական կազմակերպությունների և դրանց միությունների ստեղծման, պետական գրանցման, վերակազմավորման, դրանց գործունեության կասեցման և լուծարման հետ կապված հարցերը, սահմանվում են Հասարակական կազմակերպությունների իրավունքները և պարտականությունները:

Օրենքի համաձայն հասարակական կազմակերպությունը կարող է ստեղծվել առնվազն երեք ֆիզիկական անձի նախաձեռնությամբ հրավիրված հիմնադիր ժողովի որոշմամբ: Հասարակական կազմակերպությունները ենթակա են գրանցման ՀՀ արդարադատության նախարարությունում և իրավաբանական անձի կարգավիճակ են ձեռք բերում գրանցման պահից: Հասարակական կազմակերպությունները կարող են ստեղծվել անձանց շահերի ընդհանրության հիման վրա, հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջումներ բավարարելու նպատակով:

157. Մինչև օրենքի ընդունումը Հայաստանի Հանրապետությունում գրանցված է եղել ավելի քան **1000** հասարակական կազմակերպություն, որոնց թվում նաև մի շարք արհեստակցական միություններ, որոնք շարունակում են իրենց գործունեությունը նոր օրենքին համապատասխան:

158. Արհմիությունների ստեղծման համար իրավական նորմ է համարվում ՀԽՍՀ օրենսգիրքը՝ նրա մեջ վերջին տարիներին կատարված փոփոխություններով հանդերձ և ՀՀ Սահմանադրությունը:

Արհմիությունների ազատ և միասնական գործունեությունը ապահովելու ուղղությամբ զգալի խթան հանդիսացավ Հայաստանի Հանրապետության Նախագահի **1995** թվ. հունվարի **25**-ի հրամանագիրը «Տնտեսական շուկայական հարաբերությունների պայմաններում արհեստակցական միությունների գործունեությունը ապահովելու մասին»: Մինչև ՀՀ համապատասխան օրենքների ընդունումը, այս հրամանագիրը ապահովեց արհմիությունների իրավունքները, ստեղծեց երաշխիքներ նրանց արդյունավետ գործունեությունն ապահովելու ուղղությամբ:

Աշխատավորների կողմից արհմիություններ հիմնելու կամ դրանց միանալու վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունում իրավական սահմանափակումներ գոյություն չունեն:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը պաշտպանել և այսօր էլ պաշտպանում է Միջազգային արհմիութենական կազմակերպություններին միանալու արհմիությունների իրավունքը:

Արհմիությունների գործունեության իրավական դաշտը ապահովելու նպատակով Հայաստանի արհմիությունների Կոնֆեդերացիան, ճյուղային արհմիությունների հանրապետական խորհուրդներն ու կոմիտեները սերտորեն համագործակցում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի և կառավարության հետ: ՀՀ Ազգային ժողովի քննարկման է ներկայացվել «Արհմիությունների մասին», «Կոլեկտիվ պայմանագրերի և համաձայնագրերի կնքման մասին», «Գործադուլների անցկացման մասին» օրենքների վերաբերյալ:

159. Ներկայումս ավարտվում է նաև ՀՀ նոր աշխատանքային օրենսգրքի նախագծի մշակումը, որը՝ Աշխատանքային միջազգային կազմակերպության հետ պայմանավորվածության համաձայն, այս տարվա վերջում կներկայացվի այդ կազմակերպությանը՝ փորձաքննություն անցնելու համար: Օրենսգրքի նախագծով նախատեսվում է մանրամասնորեն կարգավորել արհեստակցական միությունների և դրանց միավորումների, ինչպես նաև գործատուների կազմակերպությունների ստեղծման և գործունեության հետ կապված հարցերը:

Հայաստանի արհմիությունների Կոնֆեդերացիայի կողմից առաջարկություն է արվել ՀՀ Կառավարությանը վավերացման ներկայացնել Աշխատանքի Միջազգային Կազմակերպության մի շարք կոնվենցիաներ, որոնցից Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից **1993** թվ. դեկտեմբերի **21**-ին վավերացվել է միայն վեցը:

Կոնվենցիա Թիվ **98** «Կոլեկտիվ բանակցությունների կազմակերպման և անցկացման սկզբունքների իրավունքների օգտագործման մասին»

- Կոնվենցիա Թիվ **100** «Հավասար արժեքի աշխատանքի դեպքում տղամարդկանց և կանանց պարզևատրման հավասարության մասին»
- Կոնվենցիա Թիվ **111** «Աշխատանքի և զբաղվածության բնագավառում խտրականության մասին»
- Կոնվենցիա Թիվ **122** «Զբաղվածության բնագավառում խտրականության մասին»
- Կոնվենցիա Թիվ **135** «Ձեռնարկություններում աշխատավորների ներկայացուցիչների իրավունքների պաշտպանության և նրանց տրվող հնարավորությունների մասին»
- Կոնվենցիա Թիվ **151** «Պետական ծառայության մեջ զբաղվածության պայմանները որոշելու կազմակերպման և պրոցեդուրաների իրավունքի պաշտպանության մասին»

Հայաստանի արհմիությունների Կոնֆեդերացիայի կազմում այսօր գործում են **26** ճյուղային արհմիության հանրապետական, **21** քաղաքային, **210** շրջանային խորհուրդներ, կոմիտեներ, **8749** սկզբնական արհմիութենական կազմակերպություններ՝ **916825** արհմիության անդամներով:

160. ՀՀ Սահմանադրության **29**-րդ հոդվածի երրորդ մասը նշում է, որ «Քաղաքացիներն իրենց տնտեսական, սոցիալական, աշխատանքային շահերի պաշտպանության նպատակով գործադուլի իրավունք ունեն: Այս իրավունքի իրականացման կարգը և սահմանափակումները սահմանվում են օրենքով»:

ՀՀ Սահմանադրության **29**-րդ հոդվածի երրորդ մասում խոսքը գնում է քաղաքացիների տնտեսական, սոցիալական և աշխատանքային շահերի պաշտպանության մասին: Անհատական աշխատանքային վեճերի լուծման կարգը սահմանված է ՀՀ գործող աշխատանքային օրենսգրքում: Ինչ վերաբերում է կոլեկտիվ աշխատանքային վեճերին, ապա ՀՀ օրենսդրության պատմության մեջ առաջին անգամ սահմանադրական մակարդակով ամրագրվել է այդ վեճերի լուծման այնպիսի ծայրահեղ միջոց, ինչպիսին գործադուլն է:

Հայաստանի Հանրապետությունում դեռևս ընդունված չէ ՀՀ օրենքը «Կոլեկտիվ աշխատանքային վեճերի լուծման մասին»: Նախագիծը ներկայացված է, բայց դեռևս ՀՀ Ազգային ժողովի կողմից չի ընդունված:

«կոլեկտիվ աշխատանքային վեճերի լուծման մասին» (գործադուլի մասին) ՀՀ օրենքի նախագծում նախատեսված է, որ «Արգելվում է աշխատանքի դադարեցումը, որպես կոլեկտիվ աշխատանքային վեճի լուծման միջոց այն արտադրություններում, որտեղ աշխատանքի ընդհատումը սպառնալիք է ներկայացնում մարդկանց առողջության և կյանքի համար:

«Կոլեկտիվ աշխատանքային վեճերի լուծման մասին»/գործադուլի մասին/ ՀՀ Օրենքի նախագծում (հոդվ.11) ասված է, որ աշխատանքի դադարեցումը արգելվում է պաշտպանության ճյուղերի այն ստորաբաժանումներում, որոնք անմիջապես զբաղված են պաշտպանության նշանակության արտադրանքի թողարկմամբ, պետական մարմիններում, երկրի օրինապահ և անվտանգության կազմակերպություններում, որոնց հանձնարարված է պաշտպանության խնդիրների կատարման ապահովումը:

161. Նշված կազմակերպությունների աշխատանքային կոլեկտիվները իրավունք ունեն դիմելու ՀՀ Նախագահին՝ իրենց օրինական իրավունքների և շահերի պաշտպանության համար: ՀՀ Նախագահը պարտավոր է մեկ ամսվա ընթացքում քննարկել նրանց պահանջները և ընդունել համապատասխան որոշում:

Հոդված 23

162. Ներկայումս ՀՀ-ում մշակվում է նոր Ամուսնության և ընտանիքի օրենսգիրք, որը շուտով կդրվի ԱԺ-ի քննարկմանը:

Իսկ այժմ, ըստ գործող Ամուսնության և ընտանիքի օրենսգրքի «ՀՀ-ում ամուսնական և ընտանեկան հարաբերությունների իրավական կարգավորումը իրականացնում է միայն պետությունը:

161. Ճանաչվում է միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման պետական մարմիններում գրանցված ամուսնությունը: Ամուսնության ծեսը, ինչպես և կրոնական մյուս ծեսերը իրավական նշանակություն չունեն: Այս կանոնը չէր վերաբերում մինչև քաղաքացիական կացության ակտերի գրանցման սովետական մարմինների ստեղծումը կամ դրանց վերականգնումը կատարված կրոնական ծեսերին և ի հաստատումն դրանց ստացված ծննդյան, ամուսնության, ամուսնալուծության և մահվան վերաբերյալ փաստաթղթերին: Հայրենադարձների՝ նախքան Հայկական ՄՍՀ կամ Հայաստանի Հանրապետություն վերադառնալը արտասահմանում կրոնական ծիսակատարություններով կամ նրանց ապրած վայրի օրենքներով կատարած ամուսնագրությունները, ինչպես նաև ի հաստատումն համապատասխան պետությունների օրենքներով կատարված քաղաքացիական կացության ակտի հայրենադարձներին տրված փաստաթղթերը ՀՀ-ում և ՀՄՍՀ-ում ճանաչվել են և ճանաչվում են վավերական»:

163. Հ.12 «Ամուսնության գրանցումը սահմանվում է ինչպես պետական և հասարակական շահերը նկատի ունենալով, այնպես էլ ամուսինների և զավակների անձնական ու գույքային իրավունքներն ու շահերը պաշտպանելու նպատակով: Միայն քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններում կատարված ամուսնությունն է առաջացնում ամուսինների իրավունքներն ու պարտականությունները:

Ամուսնության համար անհրաժեշտ է ամուսնացող անձանց փոխադարձ համաձայնությունը և նրանց ամուսնական տարիքի հասնելը (հոդված 14)

164. Ամուսնական տարիք է սահմանվում տղամարդկանց համար՝ 18 տարին, իսկ կանանց համար՝ 17 տարին /հոդված 15/: Ամուսնություն չի թույլատրվում այն անձանց միջև, որոնցից թեկուզ և մեկը արդեն այլ ամուսնության մեջ է գտնվում, ուղիղ վերընթաց և վայրընթաց ազգակցության մեջ գտնվող անձանց միջև, հարազատ և համահայր կամ համամայր եղբայրների ու քույրերի միջև, ինչպես նաև որդեգրողների ու որդեգրվածների միջև, այն անձանց միջև, որոնցից թեկուզ և մեկին հոգեկան

հիվանդության կամ տկարամտության հետևանքով դատարանն անգործունակ է ճանաչել:

165. Ամուսնությունը տեղի է ունենում ամուսնանալ ցանկացողների կողմից քաղաքացիական կացության ակտերի գրանցման պետական մարմնին դիմում տալու օրից մեկ ամիս անցնելուց հետո: Հարգելի պատճառների առկայության դեպքում այդ ժամկետը կարող է կրճատվել կամ ավելացվել մինչև **3** ամիս (**h.13**): Ամուսնություն կատարելիս ամուսինները իրենց ցանկությամբ ընտրում են ամուսիններից մեկի ազգանունը՝ որպես իրենց ընդհանուր ազգանուն, կամ նրանցից յուրաքանչյուրը պահպանում է իր մինչ ամուսնական ազգանունը (**h.18**):

166. Երեխաների դաստիարակության հարցերը և ընտանեկան կյանքի մյուս հարցերը ամուսինները լուծում են համատեղ: Ամուսիններից յուրաքանչյուրը ազատ է զբաղմունքի, արհեստ և բնակության վայր ընտրելու հարցում (**h.19**): Ամուսինները պարտավոր են նյութապես օժանդակել միմյանց: Այդպիսի օժանդակությունը մերժվելու դեպքում նյութական օգնության կարիք ունեցող անաշխատունակ ամուսինը, ինչպես նաև կինը հղիության շրջանում և երեխան ծննդաբերելուց հետո մեկուկես տարվա ընթացքում իրավունք ունի դատարանով ապրուստի միջոց ստանալու մյուս ամուսնուց, եթե վերջինս ի վիճակի է տալու այդ ապրուստի միջոցը: Այդ իրավունքը պահպանվում է նաև ամուսնալուծությունից հետո (**h.25**):

167. Բաժանված կարիքավոր ամուսինը իրավունք ունի ապրուստի միջոց ստանալու, եթե անաշխատունակ է դարձել ամուսնալուծությունից հետո մեկ տարվա ընթացքում: Եթե ամուսինները երկար ժամանակ են գտնվել ամուսնական հարաբերությունների մեջ, դատարանը իրավունք ունի ապահարգանված կարիքավոր ամուսնու օգտին ալիմենտ բռնագանձելու նաև այն դեպքում, երբ այդ ամուսինը կենսաթոշակային տարիքի է հասել, սակայն ոչ ուշ, քան ամուսնալուծության պահից սկսած հինգ տարում: Կինը պահպանում է ամուսնուց ապրուստի միջոց ստանալու իրավունքը հղիության ժամանակ և երեխան ծննդաբերելուց հետո մեկուկես տարվա ընթացքում, եթե հղիությունը սկսվել է նախքան ամուսնալուծությունը (**h.26**): Դատարանը, նկատի առնելով ամուսինների ամուսնության կարճատևությունը կամ ալիմենտ պահանջող ամուսնու անվայել վարքը, կարող է նրան զրկել մյուս ամուսնուց ապրուստի միջոց ստանալու իրավունքից կամ այդ իրավունքը սահմանափակել որոշակի ժամկետով (**h.27**):

168. Ամուսինների կենդանության օրոք ամուսնությունը կարող է դադարել ապահարգանի միջոցով՝ ամուսիններից մեկի կամ երկուսի դիմումի համաձայն: Ամուսինը առանց կնոջ համաձայնության, իրավունք չունի ամուսնալուծության գործ հարուցելու Կնոջ հղիության ժամանակ և երեխան ծնվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում (**h.31**):

Ամուսնալուծության մասին վճիռ կայացնելիս դատարանը անհրաժեշտ դեպքերում միջոցներ է ձեռնարկում պաշտպանելու անչափահաս երեխաների և անաշխատունակ ամուսնու շահերը (**h.33**):

Եթե ամուսինների միջև վեճ է ծագում, թե նրանցից ում մոտ պետք է ապրեն երեխաները ամուսնալուծությունից հետո և ինչ չափով պետք է միջոցներ վճարվեն երեխաների ապրուստի համար, դատարանը պարտավոր է ամուսնալուծության վերաբերյալ գործի լուծման հետ միաժամանակ որոշել, թե ծնողներից որի մոտ և երեխաներից ով է մնալու, ինչպես նաև որ ծնողից և ինչ չափով է երեխաներին պահելու համար ալիմենտ գանձվելու:

Ամուսնանալիս իր ազգանունը այլ ազգանունով փոխած ամուսինը իրավունք ունի ամուսնալուծությունից հետո կոչվելու այդ ազգանունով կամ ամուսնալուծությունը քաղաքացիությունը քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների կողմից գրանցելիս նրա պահանջով նրան տրվում է մինչամուսնական ազգանունը (h.41):

169. Ամուսնական տարիքի չհասած անձի ամուսնությունը կարող է անվավեր ճանաչվել, եթե այդ են պահանջում մինչև ամուսնական տարիքի հասնելն ամուսնացած անձի շահերը: ...Եթե գործը դատարանում լուծվելու պահին անչափահաս ամուսինը դարձել է չափահաս, ապա ամուսնությունը անվավեր կարող է ճանաչվել միայն նրա պահանջով (h.46):

170. Ծնողների և զավակների փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները հիմնվում են երեխաների՝ օրենքով սահմանված կարգով հաստատված սերման փաստի վրա (h.51):

Ամուսնության մեջ գտնվող ծնողներից երեխայի սերումը հաստատվում է ծնողների ամուսնության վերաբերյալ գրառմամբ (h.52):

Երեխայի սերումը ամուսնության մեջ չգտնվող ծնողներից հաստատվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման պետական մարմիններին երեխայի հոր և մոր կողմից տրվող համատեղ դիմումի միջոցով (h.53): Ամուսնության մեջ գտնվող ծնողներից երեխա ծնվելու դեպքում, եթե չկա ծնողների համատեղ դիմումը, հայրությունը կարող է որոշվել դատական կարգով՝ երեխայի ծնողներից մեկի կամ խնամակալի (հոգաբարձուի), այն անձի, որի խնամքի տակ է գտնվում երեխան, ինչպես նաև հենց իր՝ երեխայի դիմումի հիման վրա, չափահաս դառնալուց հետո (h.53):

Հայրությունը որոշվելու դեպքում ամուսնության մեջ չգտնվող անձանցից ծնված երեխաները ծնողների և նրանց ազգականների նկատմամբ ձեռք են բերում նույն իրավունքներն ու պարտականությունները, ինչ որ միմյանց հետ ամուսնության մեջ գտնվող անձանցից ծնված երեխաները (h.54): Ամուսնության մեջ չգտնվող մորից երեխա ծնվելիս, եթե չկան ծնողների համատեղ դիմումը և հայրությունը որոշելու վերաբերյալ դատարանի վճիռը, երեխայի հոր մասին գրանցումը ծնողների գրանցման մատյանում կատարվում է մոր ազգանունով, երեխայի հոր անունն ու հայրանունը գրանցվում են մոր ցուցումով (h.57):

171. Ծնողները պարտավոր են դաստիարակել իրենց երեխաներին, հոգ տանել նրանց ֆիզիկական զարգացման և ուսուցման մասին, պատրաստել հանրօգուտ աշխատանքի, աճեցնել որպես հասարակության արժանավոր անդամների: Ծնողական իրավունքները չեն կարող իրականացվել երեխաների շահերին հակառակ: Անչափահաս զավակների իրավունքների և շահերի պաշտպանությունը նրանց ծնողների պարտականությունն է: Ծնողներն իրենց անչափահաս երեխաների օրինական ներկայացուցիչներն են և բոլոր, այդ թվում նաև դատական հիմնարկներում հանդես են գալիս նրանց իրավունքների ու շահերի պաշտպանությամբ, առանց հատուկ լիազորության (h.61): Հայրը և մայրը իրենց զավակների նկատմամբ ունեն հավասար իրավունքներ ու պարտականություններ: Հավասար իրավունքներն ու հավասար պարտականությունները զավակների նկատմամբ պահպանվում են նաև ամուսնալուծությունից հետո (h.62): Երեխաների դաստիարակությանը վերաբերող բոլոր հարցերը ծնողները լուծում են փոխադարձ համաձայնությամբ: Ծնողների միջև համաձայնություն չլինելու դեպքում վիճելի

հարցը լուծում է խնամակալության ու հոգաբարձության մարմինը՝ ծնողների մասնակցությամբ, իսկ վեճերի դեպքում՝ դատարանը (հ.63):

172. Եթե ծնողները ամուսնալուծության կամ այլ պատճառներով բնակվում են անջատ, ապա նրանց համաձայնությունից է կախված, թե ում մոտ պետք է ապրեն անչափահաս երեխաները: Ծնողների միջև համաձայնություն չլինելու դեպքում վեճը լուծում է դատարանը՝ ելնելով երեխաների շահերից (հ.64): Երեխայից անջատ ապրող ծնողը իրավունք ունի շփվելու երեխայի հետ և պարտավոր է մասնակցել նրա դաստիարակությանը: Խնամակալության և հոգաբարձության մարմինները իրավունք ունեն անջատ ապրող ծնողին որոշակի ժամանակով զրկելու երեխայի հետ շփվելու իրավունքից, եթե այդ շփումը խանգարում է երեխայի նորմալ դաստիարակությանը և նրա վրա վնասակար ազդեցություն է թողնում (հ.64):

173. Ծնողները, կամ նրանցից մեկը, կարող են զրկվել ծնողական իրավունքներից, եթե հաստատվի, որ նրանք խուսափում են երեխաներին դաստիարակելու իրենց պարտականությունների կատարումից կամ չարաշահում են իրենց ծնողական իրավունքները, դաժանաբար են վարվում երեխաների հետ, նրանց վրա վնասակար ազդեցություն են գործում իրենց բարոյագուրկ, հակահասարակական վարքով, ինչպես նաև՝ եթե ծնողները խրոնիկական ակոհոլիկներ կամ թմրադեղամուլներ են: Ծնողները ծնողական իրավունքներից կարող են զրկվել միայն դատական կարգով և միայն նշված դեպքերում (հ.68): Ծնողական իրավունքներից զրկելը ծնողներին չի ազատում երեխաների ապրուստը հոգալու պարտականությունից (հ.70): Դատարանը կարող է վճիռ արձակել երեխային ծնողներից վերցնելու և նրան խնամակալության ու հոգաբարձության մարմինների խնամքին հանձնելու մասին, անկախ ծնողներին ծնողական իրավունքից զրկելուց, եթե երեխային նրանց մոտ թողնելը վտանգավոր է նրա համար: Եթե այդ պատճառները կվերանան, ապա դատարանը, ծնողների կամ դատախազի հայցի հիման վրա, ելնելով երեխայի շահերից, կարող է վճիռ կայացնել նրան ծնողներին վերադարձնելու մասին (հ.75): Ըստ 77 հոդվածի «Ծնողները պարտավոր են պահել իրենց անչափահաս և օգնության կարոտ անաշխատունակ չափահաս զավակներին»: Անչափահաս երեխաների համար նրանց ծնողներից ալիմենտ է բռնագանձվում, որի չափերը սահմանված են 78-րդ հոդվածում:

Հոդված 24

174. «Երեխաներն ունեն հավասար իրավունքներ՝ անկախ իրենց և ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների (որդեգրողների, խնամակալների կամ հոգաբարձուների) ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, կրթությունից, բնակության վայրից, երեխայի ծննդյան հանգամանքից, առողջական վիճակից կամ այլ հանգամանքներից» (հ.4 ՀՀ օրենք «Երեխայի իրավունքների մասին»):

Նույն օրենքի 8-րդ հոդվածում ասվում է .« Յուրաքանչյուր երեխա ունի ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավունք: Երեխայի զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման հարցում հիմնական պատասխանատվությունը կրում են ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները: Ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների կողմից երեխայի համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման անկարողության կամ անհնարինության դեպքում պետությունը ցուցաբերում է համապատասխան օգնություն:

Ընտանիքում երեխայի լիարժեք խնամքը և դաստիարակությունն ապահովելու նպատակով պետությունն և նրա համապատասխան մարմիններն օգնություն են ցույց տալիս ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին՝ երեխայի բարեկեցությունն ապահովելու համար, խրախուսում են ընտանիքին աջակցող հոգեբանական, մանկավարժական, խորհրդատվական ծառայությունների գործունեությանը:

2.14-ի վերնագիրն է «Երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը ծնողների կողմից»:

Երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը նրա ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների հիմնական պարտականություններից է: Երեխայի կողմից ՀՀ օրենսդրության խախտման դեպքում ծնողները կամ այլ օրինական ներկայացուցիչները պատասխանատվություն են կրում ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով:

175. Ըստ **19** հոդվածի «Երեխայի հետ աշխատանքային պայմանագիր կարող է կնքվել նրա **16** տարին, բացառիկ դեպքերում՝ **15** տարին լրանալուց հետո:

Երեխան ունի աշխատանքի արտոնյալ պայմանների իրավունք, որը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ:

Արգելվում է երեխայի կողմից ալկոհոլային խմիչքների և ծխախոտի վաճառքը, դրանց արտադրության և օգտագործման մեջ երեխայի ներգրավումը, ինչպես նաև այնպիսի աշխատանքի կատարումը, որը կարող է վնասել նրա առողջությանը, ֆիզիկական և մտավոր զարգացմանը, խոչընդոտել կրթության ստանալուն»:

176. **2.24.** Ծնողական խնամքից զրկված երեխան ունի պետության և նրա համապատասխան մարմինների կողմից պաշտպանության, խնամքի, դաստիարակության և օգնության իրավունք: Պետությունն և նրա համապատասխան մարմիններն ապահովում են նման երեխաների խնամքը և դաստիարակությունը՝ որդեգրման կամ համապատասխան մանկական հիմնարկներում տեղավորելու միջոցով:

Խնամքի ձևն ընտրելիս հաշվի են առնվում երեխայի դաստիարակության հաջորդականության ապահովումը, մայրենի լեզուն, տարիքը, սեռը և այլն:

Երեխայի որդեգրման կարգը սահմանվում է ՀՀ օրենսդրությամբ:

...Երեխան **16** տարին լրանալուց հետո ունի ինքնուրույն ապրելու իրավունք՝ բավարար կենսապայմանների, պետության և նրա համապատասխան մարմինների կողմից նյութական օգնության և որոշակի պայմանների ստեղծման դեպքում:

2.29 «Արգելվում է մինչև **15** տարեկան երեխայի մասնակցությունը ռազմական գործողություններին:

Զինված հակամարտությունների ժամանակ պետությունը և նրա համապատասխան մարմիններն ապահովում են երեխայի հատուկ պաշտպանությունը»:

2.31. Երեխայի իրավունքների պաշտպանությունը նրան պատասխանատվության ենթարկելիս:

«Երեխան ունի անձեռնամխելիության իրավունք, որը պաշտպանվում է օրենքով: Երեխային չի կարելի ձեռքակալել, խուզարկել կամ կալանավորել այլ կերպ, քան սահմանված է օրենքով:

Երեխայի ձեռքակալման կամ կալանավորման մասին անհապաղ հայտնվում է ծնողներին կամ այլ օրինական ներկայացուցիչներին:

Ազատագրկման դատապարտված յուրաքանչյուր երեխա ունի օրենքով սահմանված կարգով ազատագրկման դատավճիռը գանգատարկելու իրավունք:

...ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում երեխային քրեական պատասխանատվության ենթարկելիս փաստաբանի (հոգեբանի, մանկավարժի) ներկայությունը հետաքննության, նախաքննության և դատաքննության ընթացքում պարտադիր է:

Երեխան պարտավոր չէ ցուցմունք տալ իր, ծնողների կամ մերձավոր ազգականների դեմ: Արգելվում է որպես վկա ցուցմունքներ վերցնելու կամ սեփական հանցանքը խոստովանելու համար երեխայի նկատմամբ բռնություն, սպառնալիքի և այլ ապօրինի գործողությունների կիրառումը:

177. Հ.32. Երեխայի իրավունքների պաշտպանությունը հատուկ դաստիարակչական հաստատություններում:

Երեխային հատուկ դաստիարակչական հաստատություն է ուղարկում միայն դատարանը՝ տեղական ինքնակառավարման ներկայացմամբ:

Հատուկ դաստիարակչական կամ բուժկանխարգելիչ հաստատություններում գտնվող երեխան ունի հարգալից վերաբերմունքի, առողջության պահպանման, համապատասխան կրթության և մասնագիտական պատրաստվածության, ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների հարազատների և այլ անձանց հետ տեսակցության և նամակագրության իրավունք:

Հատուկ դաստիարակչական հաստատության խնդիրն է երեխային ուղղելն ու վերադաստիարակելը:

Իրականում երեխայի որոշ իրավունքներ խախտվում են. դա կարելի է բացատրել հիմնականում մեր հանրապետության տնտեսական ծանր իրավիճակով /օրինակ՝ նպաստը մինչև 6 տարեկանը/:

178. Ըստ ՀՀ «Ամուսնության և ընտանիքի» օրենսգրքի «Ծնողներ և զավակներ» **8**-րդ գլխում բոլոր վիճելի հարցերը, որոնք առնչվում են երեխաների շահերի հետ կարգավորվում են բացառապես խնամակալության և հոգաբարձության մարմնի մասնակցությամբ, նրա ցուցումով կամ որոշումով: Իսկ «Երեխայի իրավունքների մասին» օրենքի **3**-րդ հոդվածում ասվում է «Պետությունն իր համապատասխան մարմինների միջոցով համագործակցում է երեխայի իրավունքների պաշտպանությանը նպաստող քաղաքացիների միավորումների, ոչ պետական կազմակերպությունների և առանձին անձանց հետ:

179. Երեխային անուն է տրվում ծնողների համաձայնությամբ, հայրանուն է տրվում հոր անունով, իսկ հայրությունը որոշված չլինելու դեպքում՝ որպես հայր գրանցված անձի անունով /**հ.58**/:

Երեխայի ազգանունը որոշվում է ծնողների ազգանունով: Երբ ծնողները տարբեր ազգանուններ ունեն երեխային տրվում է մոր կամ հոր ազգանունը՝ ծնողների համաձայնությամբ, իսկ համաձայնություն չլինելու դեպքում խնամակալության և հոգաբարձության մարմնի ցուցումով /**հ.59**/:

Ծնողների միջև ամուսնության դադարումը կամ ամուսնության անվավեր ճանաչելը երեխաների ազգանվան փոփոխություն չի առաջացնում: Եթե ամուսնությունը դադարելուց կան ամուսնությունն անվավեր ճանաչելուց հետո ծնողը, որի մոտ ապրում է երեխան, ցանկանում է նրան տալ իր ազգանունը, ապա հարցը լուծում է խնամակալության և հոգաբարձության մարմինը՝ ելնելով երեխայի շահերից: Եթե անչափահասի ծնողները միմյանց հետ գրանցված ամուսնության մեջ չեն և հայրությունը որոշված չէ, ապա երեխայի մոր ազգանունը փոխվելիս,

խնամակալության և հոգաբարձության մարմինների ցուցումով անչափահասի ազգանունը կարող է փոխվել երեխայի մոր դիմումի հիման վրա: Տասը տարեկան դարձաց երեխայի ազգանվան փոփոխումը, բոլոր դեպքերում կատարվում է նրա համաձայնությամբ /հ.60/:

180. Համաձայն «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի «Յուրաքանչյուր երեխա ծննդյան պահից ունի անվան և քաղաքացիության իրավունք: Երեխայի ծննդյան փաստն օրենքով սահմանված կարգով գրանցվում է քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից:

Երեխան քաղաքացիություն է ձեռք բերում, ինչպես նաև նրա քաղաքացիությունը դադարում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Իսկ համաձայն «ՀՀ քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետի «ՀՀ քաղաքացիության ձեռքբերման հիմքերից մեկն է ծնունդը /երեխայի/: Ըստ 16 հոդվածի «ՀՀ քաղաքացիություն ձեռք բերած ծնողների Միչև 14 տարեկան երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն: Եթե ՀՀ քաղաքացիություն է ձեռք բերում ծնողներից մեկը, իսկ մյուսն օտարերկյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ապա նրանց Միչև 14 տարեկան երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն, եթե առկա է ծնողների համաձայնությունը կամ եթե երեխան բնակվում է ՀՀ-ում և առկա է ՀՀ քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը:

Նույն օրենքի 17-րդ հոդվածի համաձայն «ՀՀ քաղաքացիությունը կորցրած ծնողների մինչև 14 տարեկան երեխան կորցնում է ՀՀ քաղաքացիությունը, եթե նա ձեռք է բերում այլ պետության քաղաքացիություն: Եթե ծնողներից մեկը կորցրել է ՀՀ քաղաքացիությունը, իսկ մյուսը ՀՀ քաղաքացի է, նրանց մինչև 14 տարեկան երեխան կորցնում է ՀՀ քաղաքացիությունը, եթե առկա է ծնողների համաձայնությունը կամ եթե երեխան բնակվում է ՀՀ-ից դուրս և առկա է ՀՀ քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը:

Հ.Հ.18-19 կարգավորում են նշված հարաբերությունները որդեգրման դեպքում:

Հ.20 ՀՀ-ում գտնվող երեխան, որի ծնողները անհայտ են, ՀՀ քաղաքացի է: Ծնողներից մեկի կամ խնամակալի գտնվելու դեպքում երեխայի քաղաքացիությունը կարող է փոխվել սույն օրենքին համապատասխան»:

Հ.22 «Ծնողների քաղաքացիությունը փոխվելու դեպքում 14-18 տարեկան երեխաների քաղաքացիության փոփոխումը տեղի է ունենում սույն օրենքով սահմանված կարգով՝ երեխաների համաձայնության առկայության դեպքում»:

Հոդված 25

181. Պետության կառավարմանը մասնակցելու քաղաքացիների իրավունքին անդրադառնում է Սահմանադրության 27-րդ հոդվածը.

« Հայաստանի Հանրապետության տասնութ տարին լրացած քաղաքացիները ունեն անմիջական կամ կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետության կառավարմանը մասնակցելու իրավունք: Ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիներ»:

Այսպիսով, Սահմանադրությամբ նախատեսվում է պետության կառավարմանը քաղաքացիների մասնակցելու երկու եղանակ՝ անմիջական

մասնակցություն (այսինքն՝ հանրաքվեի միջոցով) և մասնակցություն ընտրությունների միջոցով:

Հանրաքվեների (համաժողովրդական քվեարկությունների) անցկացման հետ կապված հարցերը կարգավորվում են Սահմանադրությամբ և «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքով:

Սահմանադրության 3-րդ հոդվածով նախատեսված է, որ հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ: Օրենքի համաձայն, հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեն մինչև հանրաքվեի անցկացման օրը կամ այդ օրը **18** տարեկան դարձաց, հանրաքվեի անցկացման մասին որոշման ընդունման պահին ՀՀ տարածքում մշտապես բնակվող ՀՀ քաղաքացիները: ՀՀ վերաբերյալ հարցերը, օրենքների և որոշումների ընդունումը կամ չեղյալ համարելը կամ դրանց հիմնական բովանդակությունը կանխորոշող որոշումների ընդունումը, ինչպես նաև պետական կյանքի կարևոր հարցերի վերաբերյալ հասարակական կարծիքի բացահայտումը: Հանրաքվեի անցկացման ամբողջ ընթացքում պետք է ապահովվի հրապարակայնությունը, հասարակության մասնակցությունը:

182. Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունումից հետո հանրապետության տարածքում հանրաքվե անցկացվել է երկու անգամ. առաջինը՝ **1991** թվականին, որով ժողովուրդը որոշում ընդունեց ԽՍՀՄ-ի կազմից Հայաստանի Հանրապետության դուրս գալու մասին, իսկ երկրորդը՝ **1995** թվականին, որով ժողովուրդն ընդունեց Հայաստանի Հանրապետության նոր Սահմանադրությունը: Հանրաքվե է երկու անգամ էլ անցկացվել է հրապարակայնության պայմաններում և օտարերկյա անկախ դիտորդների մասնակցությամբ:

ՀՀ Սահմանադրության համաձայն, Հայաստանի Հանրապետությունում անցկացվում են հետևյալ ընտրությունները.

ա) նախագահական ընտրություններ

բ) ՀՀ Ազգային Ժողովի պատգամավորների ընտրություններ և

գ) տեղական ինքնակառավարման մարմինների /համայնքապետերի և համայնքի ավագանիների անդամների/ ընտրություններ:

Նշված ընտրությունների անցկացման հետ կապված հարցերը կարգավորվում են երեք առանձին ընտրական օրենքներով: Բոլոր ընտրությունները՝ Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն, պետք է անցկացվեն ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

183. Հանրաքվեների ու ընտրությունների անցկացման օրինականության նկատմամբ դատական հսկողությունը իրականացնում է ՀՀ Սահմանադրական դատարանը, որը՝ ՀՀ Սահմանադրության **100**-րդ հոդվածի համաձայն, իրավասու է լուծելու հանրաքվեների, ՀՀ նախագահի և պատգամավորների ընտրությունների արդյունքների հետ կապված վեճերը: Ընտրությունների արդյունքները վիճարկելու վերաբերյալ Սահմանադրական դատարանին կարող են դիմել նախագահի և պատգամավորության համապատասխան թեկնածուները: Սահմանադրական դատարանի որոշումները վերջնական են, վերանայման ենթակա չեն և ուժի մեջ են մտնում հրապարակման պահից:

184. Վերջերս (**1996** թվ. սեպտեմբերի **22**-ին) Հայաստանում անցկացվեցին նախագահական ընտրություններ, որոնց արդյունքների ամփոփման գործընթացին դիտորդի կարգավիճակով մասնակցել են ԱՊՀ Միջխորհրդարանական վեհաժողովի խորհուրդը, Վրաստանի խորհրդարանը ներկայացնող մի շարք դիտորդներ, ԵԱՀԿ

Ժողովրդավարության և մարդու իրավունքների գրասենյակի և այլ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Ընտրությունների արդյունքները վիճարկելու համար Սահմանադրական դատարանին են դիմել նախագահի երկու թեկնածուներ, որոնք գտնում էին, որ ընտրության նախապատրաստման և անցկացման ընթացքում խախտվել է ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքը և քվեարկության գաղտնիությունը, որը ուղղակիորեն ազդել է ընտրության արդյունքների վրա: Սահմանադրական դատարանը հանգամանորեն ուսումնասիրեց գործը, որի ընթացքում պահպանվել էին հրապարակայնությունը և հասարակայնության, մամուլի, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների մասնակցությունը դատական նիստերին: Սահմանադրական դատարանի որոշմամբ թեև ճանաչվեց, որ ընտրությունների ընթացքում տեղի են ունեցել ընտրական օրենքի մի շարք խախտումներ, սակայն գործի քննության արդյունքների և համապատասխան ստուգումների հիման վրա պարզվեց, որ դրանք չեն ազդել ընտրությունների ընդհանուր արդյունքների վրա:

185. Ներկայումս նախապատրաստվում է «Պետական ծառայողի մասին» օրենքի նախագիծը, որով կկարգավորվեն ՀՀ քաղաքացիների պետական ծառայության անցնելու հետ կապված հարցերը:

Հոդված 26

186. Համաձայն Սահմանադրության 15-րդ հոդվածի, ինչպես նշվեց սույն զեկույցի 2-3-րդ հոդվածներում, ՀՀ քաղաքացիները անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ յալ դրությունից, ունեն Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բոլոր իրավունքները, ազատությունները և պարտականությունները:

Իրավունքների հավասար իրականացման մասին նշվում է զեկույցի 14, 23, 25-րդ հոդվածներում, ինչպես նաև ՀՀ «Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» ազգային զեկույցում:

Հոդված 27

187. Ցանկացած երկրի բարեկեցության հիմքն է հանդիսանում տարբեր ազգային, էթնիկական կամ կրոնական խմբերի խաղաղ գոյակցությունը:

Եվ ընդհակառակը ամենուրեք, որտեղ խախտվում են փոքրամասնությունների իրավունքները, ոտնահարվում են մարդու իրավունքներն ընդհանրապես:

Իսկ ռեալ կարգավիճակ փոքրամասնությունները կարող են ստանալ միայն այն դեպքում, երբ, պահպանվի և զարգացվի նրանց «էթնիկական, լեզվական կամ կրոնական ինքնուսությունը»:

Հետևաբար, նորանկախ պետության համար առավել կարևոր է ընդգրկվել օրենսդրական գործընթացում, որը հնարավորություն կտա ստեղծել լրացուցիչ իրավունքներ և հատուկ մեխանիզմներ՝ փոքրամասնություններին պատկանող անձանց համար մի կողմից և իրականացնել այն պարտավորությունները, որոնք իր վրա է վերցրել երկիրը, ստորագրելով մի շարք փաստաթղթեր՝ մյուս կողմից:

188. Այսպես, օրինակ, փոքրամասնությունների իրավունքների հետ են կապված, բացի տվյալ կոնվենցիայից, Հայաստանի կողմից վավերացված հետևյալ փաստաթղթերը:

1. Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը

2. Ցեղասպանության ոճրագործության կանխման և դրա համար պատժի մասին կոնվենցիան

3. Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան և այլն
189. 1995 թվ. հուլիսի 5-ին ընդունված ՀՀ սահմանադրությունը ոչ միայն սահմանում է քաղաքացիների հավասարությունը դատարանի և օրենքի առջև, այլ նաև ապահովում է ազգային փոքրամասնություններին պատկանող քաղաքացիներին իրենց ավանդույթների պահպանման, լեզվի և մշակույթի զարգացման իրավունքը /37-րդ հոդված/:

Ազգային փոքրամասնություններին տրված լիազորություններից կարող է օգտվել յուրաքանչյուր մարդ, որը, նախ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, և, երկրորդ՝ ազգությամբ հայ չէ: Թեև այս վերջին հատկանիշն ունի ձևական բնույթ, որովհետև յուրաքանչյուր մարդ ինքն է որոշում իր ազգային պատկանելիությունը. կողմնակի միջամտությունն արգելված է:

Իրենց ավանդույթների պահպանման, լեզվի և մշակույթի զարգացման իրավունքն ազգային փոքրամասնությունների համար անհամեմատ արդյունավետ կարող են իրականացնել տվյալ ազգի ներկայացուցիչների որոշակի քանակի առկայության դեպքում:

Հայաստանում ազգային փոքրամասնությունները կազմում են ընդհանուր բնակչության երեք տոկոսը (ավելի մանրամասն ներկայացված է ՀՀ-ի ներկայացված հիմնական փաստաթղթում):

190. Ներկայումս ՀՀ-ում պաշտոնապես գրանցվել և գործում են ազգային փոքրամասնությունների մի շարք մեծ և փոքր միություններ: Նրանցից ամենա ճանաչվածը **1994** թվ. դեկտեմբերին հիմնված Հայաստանի Ազգությունների Միությունն է, որի գործունեության հիմնական նպատակներն են նպաստել Հայաստանի ազգային փոքրամասնությունների մշակութային, տնտեսական և այլ խնդիրների լուծմանը՝ նրանց ներուժը լավագույնս Հայաստանի Հանրապետության հանրային կյանքին ի սպաս դնելու նպատակով:

191. Պետությունը հովանավորչական քաղաքականություն է վարում այդ միությունների նկատմամբ: Ընդ որում, նման վերաբերմունքն առավելապես պայմանավորված է պատմական ակունքներով: Հայաստանում բնակվող ավանդական ազգային փոքրամասնությունների և հայերի փոխհարաբերությունները միշտ եղել են ջերմ ու եղբայրական: Իրավունքների խնդրում նրանք երբևէ չեն ունեցել սահմանափակումներ: Սահմանադրության ընդունման շնորհիվ, հավաքական բնակություն ունեցող ազգային փոքրամասնությունները լրացուցիչ հնարավորություն ստացան գյուղի շրջանակում ստեղծել տեղական ինքնակառավարման իրենց մարմինները՝ գյուղական համայնքները:

192. Փոքրամասնությունների հանդեպ նոր չափանիշների ստեղծման մյուս վկայությունն է ԱՊՀ շրջանակներում ստորագրված և **1995** թվ. հոկտեմբերի 11-ին վավերացված «Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ապահովման մասին» կոնվենցիան, որը պետք է նպաստի փոքրամասնությունների պաշտպանությանը ԱՊՀ անդամ երկրների տարածքում:

